285
2493
12004

# ԲԺՇԿԱՐԱՆ
## Հոգեւոր

Բաժանեալ յերկուս մասունս։

Յառաջինումն մասին առաջի դնին հոգեւորա-
հիւանդացելոց՝ Յորդորակ ապաշխարութե-
ան Էջն Եփրեմի Խորին Ասորւոյ։
Իսկ յերկրորդումն զօրաւոր գեղորեայք աղօ-
թանաւէր մաղթանաց՝ ըստ եօթնեակ ա-
ւուրց շաբաթուն։

Մեծահամբաւ Հրամանաւ Տեառն Պօղոսի
Աստուածիմաստ արք Եպսի, և արժանընտիր
Պատրիարգի անդրիանուպօլսեցւոյ
Տպագրեալ։

Յամի Տեառն 1822. Հոկտ. 10.

Արդեամբք խոհեմազարդ մհսի տր Պաղտասար
բարեջան քեհյի մայր եկեղեցւոյս սբ Ածածնի.

Ի ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼԻՍ.
Ի Տպարանի Պատրիարգանիստ Մայր
Եկեղեցւոյս։

* [illegible], Գ, 2։

* [illegible], ԺԳ, 3։

Printed in Turkey

9268-57

## Յառաջաբանութիւն.

Որովհետեւ հոգի առաւե՛լ է քան զմարմին. զի իմացական մասօք, եւ ազատ կամօք, եւ անմահութեամբ է պերճացեալ. ապա յաւէ՛տ պէտս ունիմք զգուշանալ հոգւոց մերոց՝ եւ խնամ տանիլ նմա. զի թէ մարմնական ախտից՝ որպէս տեսանք եւ փախչիմք եւ խնդրեմք որոնողացն եւ ընդ՝ դեղ ճարտարն զցաւ եւ զզօրաւորս, եւ ՚ի վերայ բերեն զմահ ժամանակաւոր. ապա եւ հոգւոյ հիւանդութեանց, որպէս հպարտութեան եւ նախանձու եւ բարկութեան, եւ այլ ամ մոլեկան ախտիցն եւ գործոց՝ յառաջ ածեն զխոյզն եւ զպատճառս խզելոյ մաղոյ, եւ այսպէս զմահն յաւիտենականն։

Եւ որպէս ՚ի մարմնական հիւանդութեան չէ՛ բաւական բժշկաց զօրութեամբ զզօրք բաժնին, եւ զորս զհանգամանս ցաւոց արտայայտել, այլ նաեւ զմանաւ պատրաստել զօգտակար դեղորայս ըստ պատշաճի կերպն, եւ զմիտս նոյն՝ իբրեւ ժամանակի։ Նա առաջին օրինակի եւ թէ՝ որ+ կար



գեալ

## յառաջաբանութիւն։

Կեալ եմք բժիշկ հոգւոյ, և ըսեմք խոստո֊
վանութե(ան) շնորհաշնորհ արժանս հոգեղէնս հե֊
ռանդացելոց, քաջք յանձին վերջատ բժշ հար
կատարեալ պաշտամանս մերոյ, մատուցանել ՚ի
գործոն հոգւոյ շնորհս շնորհս. որ յերկնաւս
մատանեալ է բժշկութեան։

Յառաջնոյն է Յորդորին առաքելութե(ան)
տա՚ի սէրն Սարգիս ասացէ(ն)՚ դարձ և հեռ֊
եմոյ ամն. որ և է յառաջպետ հաշտո֊
րոյ դեռ ՚ի շեշտ և՚ի խոստովանութե(ան), և
գտանել անձանց շնորհութե(ան)։

Յերկրորդում են եօթնեկի թուով առաջնոց
և ասօթք բժշ եօթնեկին առաւօտ շաբաթու,
կարճառօտ բանիւ ան՚ի շրջանշրջանս ասա֊
որք և սրտառուչ խնդրածք են առ մեզ՚ի
բժշկութե(ան) մեր հոգեկան հեռանդութեց։
Նկատէն սիրով Յովհաննու առաջնորդ շարժման
շնորհ՚ որ սիրով է առաջնորդ հոգւոյ
ջերոյ, որով մաքառ ընթեռնուլ շնորհորոյս
շայս.

յառաջաբանութիւն։

ղայս, և ընթերցողացդ սիրով հաղորդել շնոր հեալ աշխատութեան. և յուսամ անշուշտ, չէ այն գտանել ինչ առաջի յանդգնութեան տեսանեն շնորհս թուղթ մեղաց, և դարձեալ ողոր մութե 'ի ծառայութե կենացն ամենայնիս նից, մասնաւորապէս ընդ ինչ գոյն և անդր ծանուցեալ, որ բանից և ողորմութ չո նոցայ ապաւինել առ նա յօգուտ մեղա նեայ հոգեւորաց.

Նուաստ ծառայ մահտեսի
տէր ղուկասու սահմանոյ։




Լոյս տուր տր՛ աչաց իմոց, զի մի՛ եր-
բեք ննջեցից ՚ի մահ:

# Յորդորակ
## ապաշխարութեան

Ասացեալ սրբոյն Ներսէսի Խաւրէին տա–
րոյ։

1 Ասէ երանելի մարգարէն Ե–
զեկիէլ. անօրէնն եթէ դարձ–
ցի յանօրէնութեանց իւրոց՝ զոր
արար, և արասցէ արդարութիւն և ողոր–
մութիւն, կենօք կեցցէ և մի՛ մեռցի։ Ամ–
յանցանք իւր՝ զոր յանցեալ իցէ, և ա–
նօրէնութիւնք իւր՝ զոր անօրինեալ իցէ, մի՛
յիշեսցին. այլ ողորմութեամբ իւրով զոր ա–
րար՝ կեցցէ։

Ս՜որս զբազմօք զանց արարէ՛ք. փու-
թա՛ցուք հասանել յընչաւէտ հօր ա-
ռատ որդին. որոյ անունն կեանք է և
լոյս և փրկիչ. յոր հաւատացաք՝ յոր մկր-
տեցաք և լուսաւորեցաք։ Որ ՚ի հօրէ
առնու, և զնոյն զգեցուցանէ. ըզ
փառսն՝ զոր ետուր ինձ, ետու նոցա։ Որ
զձեռանէ կալեալ զնորոյն, առ հայր
մուծանէ. կամիմ զի ուր ես իցեմ, և
նոքա ընդ իս իցեն։ Որ լանջակից և
գրկախառն հօր կացուցանէ. զի ո՞պ դու
հայր ՚ի յիս՝ և ես ՚ի քեզ. և նոքա ընդ իս
և ընդ քեզ ՚ի մէջ իցեն։ Ո՜վ սքանչե-
լեացն. ո՜վ երջանիկ աւետեացն. ո՜վ ան
չափ մարդասիրութեան։

Մատթէոս՝ երեկ մաքսաւոր կողոպտիչ
անողորմ, այսօր ելեալ յերկինս բազմի։
Պետրոս՝ ուրացաւ զՏէրն. այսօր գահ ՚ի
վեր անցեալ՝ փառօք փառաւորի։ Պօղոս՝
հայհոյիչ և հալածիչ եկեղեցւոյ. այսօր

յան

յանճառան մնեալ՝ առ ա՜ծ հանգչի ։
Ընդէ՞ր անագանիմք, արի՛ք փութասցուք
առ այնպիսի ողորմած տէրն. մի՛ յապաղես-
ցուք, մի՛ հեղգասցուք։ Եթէ զբազում
աշխարհօք և զգաւառօք պիտո՛յ էր ան-
ցանել, առաւե՛լ փութալի էր երագել
անկանել առաջի նո՜ր գթութեան՝ և ան-
ճառ մարդասիրութեան։
2 Այլ նո՜ր ծանուցեալ զհեղգութիւն մեր՝
և զանփութալի ծուլութիւնս,
առ դուրս ելեալ՝ առ սեամս մատու-
ցեալ, ձայնէ՛ առ մեզ՝ և կոչէ ուժգին.
եկա՛յք առ իս ա՜մ վաստակեալք և բեռ-
նաւորք, և ես հանգուցից զձեզ. վարա-
նեալքդ և ձանձրացեալքդ գտջի՛ք հան-
գիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր
է, և բեռն իմ փոքրոգի։ Ո՛չ եմ պա-
հանջող, ո՛չ կշտամբիչ, ո՛չ յանդիմանիչ.
միայն զլեզուդ շարժեա՛ և խոստովա-
նեա՛ զոր գործեցեր. բեռն իմ փոքրո-

 գի

զի է թեթև, անաշխատ. զոր եթէ կա
միցիս՝ դիւրաւ տանիցիս։ Իսկ դու ըն–
դէ՞ր տարակուսիս և դանդաղիս և վախ
վախես, ո՞չ թէ 'ի մեծամեծ տանջանս
ես մտանել, և կամ 'ի նեղութիւնս և 'ի
վտանգս. և ո՛չ գաս յուղղութիւն։
Դարձեալ՝ նայեցեալ 'ի տկարութիւնս մեր՝
զամենապետութիւն իւր ցուցանէ՝ և հար
ցանէ. զի՞նչ կամիս, ո՞ւմ բաղձաս, հի–
ւա՞նդ ես, ես ճարտար բժիշկ եմ. ո՞չ է պի
տոյ բժիշկ ողջոց՝ այլ հիւանդաց. ձրի
բժշկեմ, չպահանջեմ ինչ 'ի քէն՝ բայց
միայն զսէրն։ Ո՛չ առ վաճառականս ա–
ռաքեմ, ո՛չ ինչս ծախել, ո՛չ յայլմէ ա–
ղերսել. մո՛ւտ 'ի սենեակ սրտի քոյ.
բե՛ր ինձ արտասուս որչափ և ձեռնհաս
իցես. եթէ մի կաթ իցէ՝ բաւական է
մկրտել զքեզ երկրորդ անգամ, և յա–
ռաջին փառսն հատուցանել։ Եթէ մե–
ղաւոր ես, ես ողորմած եմ. ո՛չ եկի կո–

չէր զարդարս՝ այլ զմեղաւորս յապաշխա-
րութիւն։ Որք առ իս դարձան՝ ոչ ամա-
չեցին. և ոչ որք 'ի նոցանէ կորեաւ՝ բայց
միայն Թիւրեալքն 'ի Ճշմարտութենէն։

Զմաքսաւորն միով բանիւ արդարացու-
ցի. զպոռնիկն խորով արտասուօքն սըր-
բեցի. զբժշկութիւն և զողորմութիւն պար-
գևեցի ամենեցուն։ Զպետրոսի՝ ըդէմ
իմ ուրացողին զիս երիցս անգամ, ար-
տասուացն ողորմեցայ. առ իս կոչեցի և
'ի կարգի առաքելութեն պահեցի։ Զիս
Հայհոյանօք 'ի խաչին դատապարտեցին. ա-
րարածք ողբային և սարսէին. և ես խա-
չահանողացն աղօթս առնէի։ Նորա բար-
կութբ և սրտմտութբ զգլուխս իւրեանց
շարժէին. ես քաղցրութբ և ողորմութբ
թողութի խոստանայի։ Նա այս զինչ
կատարումն. զամն հեթանոսս ողորմութբ
կոչեցի յորդեգրութի. ածի զօտարսն
ուխտին 'ի գաւիթ սրբութե իմոյ. և

 եղև

եղև մի հօտ և մի հովիւ. ես նոյն եմ և ո՛չ փոփոխիմ. երէկ և այսօր, նոյն և յաւիտեան։

3 Ծարաւի ես, ես եմ աղբիւրն կենաց քաղցրաբուղխ և անուշաճաշակ. եթէ ոք ծարաւի իցէ՝ եկեսցէ առիս և արբցէ. և որք արբցեն՝ մի՛ ծարաւեսցին յաւիտեան. այլ գետք յորդվայնէ նոցա բղխեսցեն ջրոց կենդանութե։ Քաղցեալ ես, ես եմ հացն կենաց ՚ի յերկնից իջեալ. եթէ ոք ուտիցէ ՚ի հացէս յայսմանէ՝ կեցցէ յաւիտեան։ Մերկացար՝ ով մեղաւոր, ես եմ պատմուճան քեզ և վերարկու. միայն ՚ի շարեաց հեռասջի՛ր, և ես ագուցից քեզ զանեղծին հանդերձն. զի որք ՚ի Ք՜ս մկրտեցարուք՝ զՔ՜ս զգեցեալ էք։ Եթէ կարօտացար կօշկաց, ես զգեցուցից քեզ կօշիկս լաւագոյնս, որով կոխեսցես զօձս և զկարիճս՝ և զա՜մ զօրութիս թշնամեայն։



Եթէ

Եթէ ծառայ գտար մեղացն, ես ա-
զատեմ զքեզ. զի ա՟մ որ մեղս գործէ՝
ծառայ է մեղացն. իսկ եթէ որդին ա-
զատեսցէ զձեզ, ճշմարիտ ազատք լի-
նիցիք։

Ո՛վ մեղաւոր՝ խորշի՞ս յիմ յա-
հեղ և 'ի հրաշատեսիլ զօրութէս. մի՛
երկնչիր, չեմ օտար, ազգական եմ քո,
որդի եմ Դաւթի, Թոռն եմ աբրահա-
մու. խօսակից և մարմնակից եմ քեզ։
Արդ ապա զինչ կամիցիս՝ 'ի պատրաստի
կամ՝ ասա ինձ. զոր ինչ բարի կամի-
ցիս մ՟օ քո, դու ա՛զդ արա, և ես կա-
տարեմ անյապաղ. քանզի ո՛չ եկի պաշտօն
առնուլ, այլ պաշտել. և տալ զանձն իմ
փրկանս փոխանակ բազմաց։ Զի՞նչ կա-
միս զի արարից քեզ՝ ասա ինձ. ո՛չ հրա-
ժարեմ, զի սովոր եմ առնել։ Եթէ ըզ-
մատնչքն զիս 'ի մահ զոտսն լուացի և
ո՛չ տաղտկացայ. ապա մի՞նչև առաւել

դքոյդ եւ զխմոյ խոստովանողիդ ըղ-
գլուխս եւ զոտսդ լուացից աւանց դան-
դաղանաց · ոչ յայլ ինչ իրաց մաքրեմ,
այլ 'ի մեղաց սրբեմ՝ եւ վերստին մաք-
րեմ: Դու շիթ մի յարտասուաց հեղ 'ի
կոճքս, եւ ես քան զհոսանան յորդանանու
յորդադոյն հեղում 'ի քեզ, եւ քան զո̃ջին
մկրտութին պայծառ̃ագոյն լուսաւորեցից·
Ո՛վ մեղաւոր՝ յանձն մեղաւ, զաղբա-
ցա՞ր, երկեա՞ր 'ի քննողէս · մի կասկեր
զխոստովանութիդ, եւ ես արձակեմ զիմ
բարերարութիս · ոչ պետրոսին սահմա-
նեցի զչափն, դարձեալ քեզ սահմանեմ:
Կամի՞ս որ հաշտիմ ընդ քեզ · դու մեկ
նեաց 'ի քո չար սովորութենդ, եւ ես մեկ-
նիմ քիմ սրտմտութենէս: Դու հա՛րց վս̃
մեղաց քոց զեօթն անգամ թողութին,
եւ ես պատասխանեցի՛ց քեզ զեօթանասու
նեկին եօթն՝ զոր քեզ շնորհեմ թո-
ղութի · զի զոր ինչ եղանէ ընդ շնչաւնս
իմ

իմ՝ զայն ոչ ստեցից · քննեա՛ զչափդ ,
իմացի՛ր զթիւդ և զհամարդ , և մի՛ որը
ոընջէր զտանուտէատնէս։ Կամի՞ս զի
թողից զպարտս քո , չե՛մ ժլատ՝ առատ
եմ , ընչաւէտ հօր՝ մեծատուն որդի ·
չտոկոսեմ զպարտապանդ , չպահանջեմ
զպարտսն , չարկանեմ խեղդ · դու միայն
յանձի՛ն կալ՝ և խոստովանեա՛ զոր գոր-
ծեցեր , և ես չորեքհարիւր և իննսուն
քանքար թողում քեզ · և ուրախ ար-
ձակեցից զքեզ։

5 Ո՛վ մեղաւոր՝ ընդէ՞ր փախչիս յինէն ,
վ՟ զի բազումս մեղար · Ե՛կ առիս
ո՛րդեակ իմ ողորմելի՛ զի ոչ բարկանամ
և ոչ մեղադրեմ · վ՟ զի իմ ես արա-
րած , իմ ես պատկեր , իմ նմանութի՟ ,
անարատ ձեռաց իմոց ստեղծուա՛ծ · և
նորին աղագաւ խնայեմ՝ և ոչ եղծա-
նեմ զպատկերդ , ոչ խանգարեմ զստեղ
ծուա՛ծդ , ոչ ապականեմ զնմանութի՟դ ·

վա՛ զի ողորմած ես և գթած, երկայնա
միտ և բազումողորմ։ Ո՛չ դժուարին
ինչ խնդրեմ 'ի քէն, և դու զի՞ տարա-
կուսիս. միայն դարձ առիս, և ես դար-
ձայց առ քեզ. միայն յապաշխարութի՛
փութա՛. միայն խոստովանեա՛ց զմեղս.
միայն մեղա՛յ ասա անկանելով առ ջի իմ.
և ես փառօք պատուեցից զքեզ։
Որդ՝ եկ առիս, և մի՛ ամաչեր. քանզի
չյայտնեմ զմեղս. չանգոսնեմ զգոր-
ծողդ. չյանդիմանեմ զմեղաւորդ. չբե-
րեմ յերես պխայտառակութիդ. չյի-
շեմ զբազմութի չարեացդ. չմեղադ-
րեմ հեռացելումդ. այլ ողորմիմ յան-
ցաւորիդ. այլ գթամ 'ի կորուսեալդ.
այլ կենդանացուցանեմ զմեռեալդ։
Մ՛ի տրտմեցուցաներ զարարիչդ քո ան-
դարձութե՛դ. մի՛ պատճառեր զպատճառս
մեղաց. մի՛ ապաշնորհ առներ զիմ մար-
դասիրութիս. մի՛ խանգարեր զիմ ա-

բարկութի · մի՛ արտաքս պահեր զիս յիմ
տաճարէդ · մի՛ զիս զրկեր յիմ բնակու-
թէդ · մի՛ կողոպտեր յիմ ստացուածոյ-
ձէդ · որ ո՛չ եթէ այլ ինչ ստացայ ըղ
քեզ , այլ զարիւնս իմ եւտու զին , և այ
նու ստացայ զքեզ: Ու եթէ հայիս ինձ
որ սուգ ունիմ ՚ի վերայ կորստեան
քո , զղջմանս ՚ի չարեաց քոց · եւ այն-
պէս ծարաւի եմ քո փրկութեդ , որպ
եղջերու ՚ի յաղբերս ջուրց:
6 Ո՛վ մեղաւոր՝ շնորհեա՛ ինձ զոր ինչ
խնդրեմս ՚ի քէն: Տո՛ւր ինձ զոր կա
միմս՝ զապաշխարութի: Տո՛ւր ինձ զոր
սիրեմս՝ զզջումն: Տո՛ւր ինձ զոր ցան-
կամս՝ զկաթ մի արտասուաց: Տո՛ւր ինձ
զոր փափաքեմս՝ զհառաչ մի ՚ի խորոց սրտէ:
Տո՛ւր ինձ զոր բերկրեմս՝ զխորութի
կերպարանացդ: Տո՛ւր ինձ զոր խրա-
խանձամս՝ զհամբարձումն ձեռացդ և
զտատանմունս մատանցդ: Տո՛ւր ինձ զոր

ցնծամբ՝ զբանիւ խոստովանելին․ և ես
սերովբէից և քերովբէից հաւասար
բարձրացուցից զքեզ։

Իսկ արդ ասա ինձ․ զինչ միտս արարի
քեզ՝ որ այդքան 'ի սուգ և 'ի լաց պա-
հես զարարիչդ քո՝ չարեացդ անդար-
ձութ՟ե․ վ՟ս այն՝ զի յոչ գոյէ 'ի գոյ ա-
ծի․ զի յանկենդանեաց զքեզ որոշեցի․
զի յանասնոց բաժանեցի․ զի մարդ ա-
բարչագործեցի․ զի յիմ նմանութիւնս
ստեղծի․ զի ձեռօքս յօրինեցի․ զի պատ-
կերակից ինձ անուանեցի․ զի բանա-
կանութ՟ե պատուեցի․ զի իմաստութ՟ե
զարդարեցի․ զի բազմազան հանճարովք
փարթամացուցի․ զի ազգի ազգի ար-
հեստիւք ճոխացուցի․ զի իշխանութ՟ե
մեծացուցի․ զի 'ի վ՟ր ա՟մի կացուցի։
Ո՜ի զերկինքն լուսաւորօքն, և զօդդ
թռչնովք, զծով լողակօք, և զերկիր ա՟մ
կենդանեօք տնկովք և բուսովք 'ի վ՟ա


յել

յեղջութիւն և 'ի հնազանդութիւն քեզ ետու. և այժմ 'ի վ̄ր այսր խոստանամ կեանս յաւիտենականս, և արքայութիւն երկնից։

7 Արդ՝ հարցանեմ զքեզ քաղցրութի̄ ամ մեղաւոր՝ և ոչ խստութի̄. մղէ ասա՛ ինձ այժմ, պարտապա՞ն եմ քո՝ եթէ երախտաւոր։ Եթէ արդարութի̄ խօսիս, ոչ եմ պարտապան քեւ՝ այլ երախտաւոր. իսկ եթէ երախտաւոր՝ ապա ընդէ՞ր միաբանեալ ես ընդ թշնամեացն իմոց սատանայի. և խոցես զիս 'ի լերարդս իմ յա̃մ աւուր քառասայրի սրով։

Իմացի՛ր և գիտեա՛ զի սուր մեղաց մեղաւորին առաւել խոցէ զիս և վիրաւորէ՝ քան զբացումն կողից իմոց՝ յոր խոցեցայ գեղարդեամբն 'ի վ̄ր խաչին։ Սաստկագին կսկծեցուցանէ քան զհարուածս բևեռացն 'ի խաչահանողացն 'ի



ձեռս

ձեռս և՛ի յոտս։ Ուժգին մորմոքեցու-
ցանէ զիս սուր մեղաց մեղաւորին՝ քան
զհարուածս փուշ պսակին՛ի գագաթ գլու-
խոյս, որ կոխեցոյց ՚ի յոսկր և յուղեղ։
Առաւելապէս դառնացուցանէ զձա-
շակելիս և զքիմս իմ դառնութ՟ի և զար-
շահոտութ՟ի մեղաց մեղաւորին, քան զլե-
ղին և զքացախն՝ զոր արբի ՚ի վ՟ր խաչին։
Պաղատեմ զքեզ զազգս խաչահանողաց ի-
մոց յորժամ տեսանես՝ ատես զնա և
անարգես, այլև կամիս մահու սպանա-
նել, զի զՏ՟րս քո ՚ի խաչ հանին. և դու
անմտութ՟բ յամ՟ աւուր գործս նոցա
գործես՝ զիս չարաչար մեղանչելով։
Որդ՝ դադարեա՛ ՚ի չարեացդ՝ և եկ ՚ի
զղջումն սիրելի որդեակ իմ. զի մի՛ ըղ-
բաժակ դառնութեն՝ զոր արբուցանե-
լոց եմ նոցա՝ և քեզ ջամբեցեմ։

Ո՛վ դասք մեղաւորաց ասացէք ինձ.
զի՞նչ չար արարի ես մարդոյ, որ



այդ

այլ քան երեսս էք շրջեալ 'ի քաղցրա-
բարոյ արարչէս ձերմէ՝ առ 'ի թշնամւոյ։
Ո՞չ ապաքէն մարդն էր՝ որ կոխեաց ըզ
հրամանս արարչին՝ և ցանկացաւ ա՟ծա-
նալոյ. և ես փոխանակ ն՟ր մարդ եղէ,
և մարդն ա՟ծացուցի։ Ո՞չ մարդն էր՝ որ
մերձեցաւ 'ի ծառն. և ես 'ի խաչն զիս
բարձրացուցի։ Ո՞չ մարդն էր՝ որ ո-
տիւքն ընթացաւ. և ես զբևեռն յոտս
ընկալայ։ Ո՞չ մարդն էր՝ որ ձգեաց զձեռն
իւր 'ի ծառն. և ես 'ի խաչին տարածե-
ցի։ Ո՞չ մարդն էր՝ որ քաղցրացաւ 'ի
պտղոյն. և ես զքացախն և զլեղին ար-
բի։ Ո՞չ մարդն էր՝ որ հաւանեցաւ կա-
ղածնոյն՝ և եկեր 'ի պտղոյն. և ես զկող-
իմ վ՟ս ն՟ր 'ի խաչին բացի։ Ո՞չ մարդն
էր՝ որ զգործս անիծից գործեաց. և
ես վ՟ս ն՟ր կոչեցայ անէծք։ Ո՞չ մարդն
էր՝ որ ոչ ասաց մեղայ. և ես զէլի էլին
'ի խաչին առ հայր գոչեցի։ Ո՞չ մարդն
էր

էր՝ որ մահու դատապարտեցաւ. և ես 'ի խաչին զմահ յանձն առի։ Եւ դուք մեղաւորք՝ 'ի յայսքան բարերար արարչէս ձերմէ երբեք դարձուցանէք. որ քաղցրութ՟ աղաչեմ զձեզ գալ 'ի զղջումն և յապաշխարութի՝ և առնուլ զթողութիւն։

9 Ո՛վ մեղաւոր՝ տամ զդատաստան իմ 'ի ձեռս քո, և դու արա ինձ իրաւունս. եթէ ես ոչ սիրեցի զքեզ՝ ապա և դու յիրաւի՛ ատես զիս. և եթէ սիրեցի, դու ընդէ՞ր յինէն 'ի բաց փախչիս։

Իսկ եթէ ասիցես է՟ մեռս, եթէ ոչ կատարելապէս սիրեցեր զիս։ Ցանի՛ր զի ոչ է ճշմարիտ կարծիքդ. զի ես զքեզ բոլոր լրիւ իւրով վ՟ քո ստեղծի. զդրախտն վ՟ քո յօրինեցի. զերկնից արքայութի՟ն վ՟ քո պատրաստեցի. զտեղի անկելոց հրեշտակացն քեզ թողի ժա-



ռանգ

առնգել. միայն դու գործիր 'ի մեղաց քոց, և ես բերից զքեզ՝ զի տեսցես և վայելեսցես ընդ հրեշտակս իմ։

Ես՝ զի վասն քո յերկնից 'ի յերկիր խոնարհեցայ, անձս մարդ եղէ՝ և տէրս ծառայ։ Վասն քո յաւետնի կացի իբր ըղձորագործ. 'ի հրէից դատապարտեցայ. 'ի պիղատոսէ դատահարեցայ. 'ի հերովդէսէ կատակեալ արհամարհեցայ։ Վասն քո 'ի զինուորացն ձաղեցայ. 'ի ծառայիցն ապտակեցայ. 'ի քահանայիցն թուք յերեսս ընկալայ. 'ի ժողովրդեանն նախատեցայ։ Վասն քո զխաչն իմ ուսովս բարձի՝ և հանի 'ի գողգոթա. վասն սիրոյ քո հայհոյեցայ, թշնամանեցայ, և խաչեցայ։ Վասն քո բևեռօք պնդեցայ. տիգաւ խոցեցայ. պսակ 'ի փշոց ընկալայ. քացախ և լեղի արբի. քղամիդ նախատանաց զգեցայ. զծածկին զլուխս խոնարհեցուցի, զհոգիս 'ի ձեռն հօր ա-



ւան

ւանդեցի: Ս՟ր քո 'ի մարդկանէ պա-
տեցայ. մարմնով 'ի գերեզման իջի, հո-
գւով 'ի դժոխս գնացի՝ և զարգելեալ
հոգիսն ազատեցի. 'ի յերրորդ աւուր
յարեայ՝ և զքեզ յարուցի 'ի մեռելոց
մեղաց:

10 Ո՛վ մեղաւոր՝ տե՛ս թէ ո՛րչափ սի-
րով սիրեցի զքեզ. զի յորժամ վ՟ն
քո զմահն կրեցի յիս 'ի խաչին, հայր
իմ սորջանայր. և հոգին մ՟ր տրտմէր
վ՟ն սատեղծանելոյ զմարմնն: Ի՞նչ ա-
սացից զդասուց հրեշտակաց, թէ ո՟ր-
պիսի սուգ անհնարին եղև 'ի միջի
նոցա. քանզի կիզէր 'ի կսկծոյն եր-
կինքն երկնաւորօքն, յորժամ տեսին
զառեղծիչ իւրեանց 'ի խաչին մա-
հացեալ: Նաև թէ ո՟րչ արարածք ամե-
նայն սուգ առեալ ողբային անմխի-
թար, յորժամ տեսին զարարիչ իւ-
րեանց մերկացեալ 'ի խաչին, և զմահ
յանձն

յանձն առեալ։ Ս՛ի արեգակն և լու֊
սինն հանդերձ այլ աստեղօք մերկանա֊
յին զլոյս խորեանց, և զխաւար զգե֊
նուլին. և երկիրս ՚ի հիմանց սասանէր և
դողայր. վէմք պատառէին. և վարագոյր
տաճարին ՚ի յերկուս ծա՛ւէնա ցելոյր.
Նա մեռեալքն մարմնով ոչ կարացին հան
դուրժել, այլ ՚ի գերեզմանացն յարու֊
ցեալ ողջոյին ընդ արարածոց՝ և վկայ֊
էին վ՟ն յարութեան խնոյ։

11 Գ խտեա արդեօք, թէ ՚ի գիշերին՝
յորում ընդունեցայ, որքան սուգ
և տրտմութի կայր ՚ի մէջ սիրեցեալ ա֊
շակերտաց խնոց. և մ՛ս զգաստութի
տրտմութե որ առաքելոցն։ Ս՛ի մինչդեռ
ոչ էին կալեալ զխնամորքն զվարդապետս
խորեանց, նոքա ոչ կարէին ՚ի բաց առ֊
նել զսուգ, այլ ՚ի խստութե սխրութեցն
անկանէին ՚ի քուն ընդ գթմբրեալս. խոյ
Ես մեկնէի ՚ի նոցանէ իբրև քարընկէց
մի,

մի , և առ հայր աղօթէի։ Ապաքէն՝
մարդ յորժամ մահու երկիւղ կրէ ,
քրտունքն ջո՛ւր է որ հոսի • իսկ ես
վ̃ս սիրոյ քո այնքան թոյլ ետու եր-
կիւղին 'ի յա̃ծացեալ մարմինս իմ , որ
քրտունք իմ արիւնախառն կայլակ-
նացեալ՝ և փոսկ փոսկ իջանէին ընդ-
ճակատս իմ • և մարմինն իմ յահագին
երկիւղէն սասանէր և դողայր յոտից
մինչև ցգլուխս • և կայի անկեալ
երես 'ի գետին՝ և ուժգին գոչմամբ
առ հայր աղօթէի , եթէ հնա՛ր է անց-
ցէ բաժակս այս յինէն։

12 Ո՛վ մեղաւոր՝ իմացի՛ր թէ որչափ
սիրեցի զքեզ • զի յորժամ հրէ-
այքն պաշարեցին զիս սուսերօք և բը-
րօք՝ ջահիւք և լապտերօք , ո՛չ կարէին
ճանաչել զիս։ Այլ զի այնքան ծարա-
ւիք էին արեան իմոյ , զի որք անծա-
նօթ էին զինէն՝ և ո՛չ էին տեսեալ զիս



քան

քանչելիքն իմ, զնս առաքեցին. զի մի
գուցէ ողորմեսցին և փախուսցեն, և
ոչ ըմբռնիցեն։ Իսկ ես հարցի քաղցր
ձայնիւ՝ զո՞ խնդրէք. և նոքա ասեն՝ ըզ
յս. ասացի՝ ես եմ. և նոքա յահէ իմմէ
զկետնի հարան. և ես գթացեալ յա-
րուցի զնս. իսկ նոքա ոչ ողորմեցան ինձ։
Եհար պետրոս սրով, և 'ի բաց եհան
զունկն ծառայի քահանայապետին. իսկ
ես զսուրն պետրոսի արգելեալ յետս
դարձուցի. և զհատեալ ունկն առեալ
եդի 'ի տեղին, և բժշկեցի. և ոչ այսու
գթացան 'ի յիս։

13 Եւ զի՞նչ ասացից զանողորմ բա-
րուց նց. զի թէ անդամալուծն՝
որ անկեալ կայր 'ի պահսին բեդհեզդայ
զերեսուն և ութ ամ. որ այնքան տէր
ոչ ունէր՝ զի երբ ջուրքն յուզէին,
մուծանէին զնա յաւազանն՝ զի բժշկես-
ցի. մինչ այլքն փաղփաղակի Ը յուզել


ջրոյն

ջրոյն իջանէին , և բժշկեալ գնային։
Իսկ տեսեալ իմ զտառապանս անդա-
մալուծին՝ գթացայ նմա և ողորմեցայ,
և բժշկեալ ողջացուցի . դարձեալ տե-
սի 'ի տաճարին՝ և պատուիրեցի ասե-
լով այլ մի ևս մեղանչեր , զի մի ևս չար
ինչ լինիցի քեզ։ Իսկ 'ի գիշերին յայնմիկ
մինչդեռ զինուորքն կային 'ի բացեայ՝
և ոչ էին մերձեցեալ յիս . անդամալուծն
այն՝ վասն այն զի ճանաչէր զիս յորմէհե-
տէ բժշկեալ էր , իսկոյն փութացեալ
'ի լծակիցս՝ եհաս առաջի իմ . և զառաջին
ապտակն նա՛ եհար յերեսս իմ . և ես
ինչ ոչ արարի նմա , վասն զի մարդասէր
եմ . այլ և 'ի զղջանալն նորա՝ արքայութեան
իմոյ արժանացուցի զնա։

Արդ՝ եթէ դու զայս գործեաց ա-
ռիս . ապա անծանօթ հրէայքն և զին-
ուորքն զի՞նչ արարին ինձ 'ի գիշերին
յայնմիկ . և վասն սիրոյ մեղաւորիդ համբե-



րե

ըեցի ապաքանեացս · և դու յուսալին
բարի արարչես երես դարձուցանես, և
զիս 'ի սուգ դառնութեան պահես ·

14 Ո'վ մեղաւոր՝ տես զսէր իմ 'ի վ̄ր
քո · զի յորժամ ըմբռնեցին զիս,
թողին զիս միայն աշակերտքն իմ՝ և
ինքեանք փախեան · գառն մի էր՝ և
գայլքն բազումք · ոչխար մի էր՝ և գա_
զանքն յոլովք · որոջ մի էր՝ և արեանար_
բուքն յանձնս · անմեղս յանապատի մի
էր՝ և շանաբարոյ որսողքն յոքունք · և եզն
պարարակ մի էր՝ և զենողքն շատք · ար_
դար աղաւնիս մի էր՝ և վայրենի թռ_
չունքն բազումք · ողջախոհ տատրակս
մի էր՝ և սեաւթորմի ագռաւքն երամք ·
Եւ թէ զի՞նչ գործեցին յայնժամ ըն_
դիս՝ տեսցես և զայն : «Նախ մերկա_
ցուցին զանկար պատմուճանն իմ, և
ապա հանին զպարեգօտն իմ · բացին
զգլուխս իմ, և կապեցին զձեռս իմ 'ի

 թի

Թիկանց կուսէ · և արկին չուան 'ի պա
րանոցս իմ · և սկսան տանել · և Թէ
ո՞ւր, լո՛ւր և զայն։

Նոքա որք յառաջմէ էին՝ քարշէին 'ի
վե՛ր երեսացս, և որք զկնի՝ ձաղէին ըզ
Թիկունս · որք 'ի յաջմէ՝ ապտակէին զծը
նօտս, և որք 'ի ձախմէ՝ Թքալից առնէին
զերեսս · որք 'ի բացեայ՝ հող արկանէին
զգլխովս, և որք 'ի հեռուստ՝ ձայն բար
ձեալ հայհոյէին և անարգէին · որք սա‿
կաւ մերձ՝ այպանէին և կատակէլ ծաղր
առնէին նախատանօք, կէսք փուԹով
արշաւէին աւետատու 'ի յապարանս քա
հանայապետուԹեն · և ապա զի՞նչ։ Իբրև
լուան 'ի յաւետաւորացն, փուԹանակի
ձայն արձակեցին առ միմեանս՝ եԹէ կա
պեալ են զնա՝ և բերեն կապանօք, ե‿
կա՛յք փուԹացուք ընդ առաջ նորա։

Իսկ ա՛յլ ոք էր յառաջ եկեղեց բազմու
Թե՛ան՝ որ ո՛չ եհար զիս · ա՛յլ ոք էր՝ որ ո՛չ


ապ

ապտակեաց զիս. ո՛վ ոք է՛ր՝ որ ո՛չ ձա_
ղեաց զիս. ո՛վ ոք էր՝ որ ո՛չ եթուք յե
րեսս իմ. ո՛վ ոք էր՝ որ ո՛չ կուփահա_
րեաց զգլուխս իմ. ո՛վ ոք էր՝ որ ո՛չ
բռնցի եհար զպարանոց իմ. ո՛վ ոք էր՝
որ ո՛չ բրօք հարկանէր զթիկունս իմ։
Ո՛վ ոք էր՝ որ ո՛չ թշնամանէց զիս բանիւ,
կամ ո՛չ անարգեաց, կամ ո՛չ նախատէց,
կամ ո՛չ արհամարհեաց, կամ ո՛չ կատա_
կեաց, կամ ո՛չ ծաղր արար, մինչև հատու
ցին յապարանս կայիափայ և աննայի. և
ես վ՜ս սիրոյ քո զայս ա՜մ կրեցի. և
դու ատես զիս, և զմեղս սիրես։
15 Ապա եթէ ասեմ զոր ինչ արարին
ընդ իս, յորժամ յապարանսն
մուծին կայիափայ և աննային, զարհու_
րիս ՚ի լսելն։ Ասացին՝ ո՛չ անիրաւաբար
դատեմք մեք զդ՜ա, այլ օրինօք և դա_
տաստանաւ. եդին ատեան, և նստան
քահանայապետքն հանդերձ ծերովքն, կա

 ցու_

ցուցին սուտ վկայք, թէ հակառակ
ած է. թէ խափանիչ օրինաց է. թէ
լուծիչ շաբաթու է. թէ քակիչ տաճա_
րին է. թէ հայհոյիչ ած է. թէ զանձն ած
քարոզէ. թէ զաւանդս ծերոց արհա_
մարհէ. և այլ ևս բազումս: Իսկ այսու_
հետև սկսան աղաղակ բառնալ և ա_
սել՝ ոմանք թէ մահապարտ է, ոմանք
թէ 'ի խաչ հանել արժան է. այլք պա_
տառէին զհանդերձս՝ թէ հայհոյեաց
զած, այլք թէ չարագործ է. և ես տա_
ռեալ համբերէի ամի վն մեղաւորիդ:
Իսկ անտի հանեալ տարան 'ի տունն ան_
նայի, անտի յապարանսն պիղատոսի, ան_
տի յիշխանն հերովդեսի, անտի դար_
ձեալ յապարանսն պիղատոսի. և զգի_
շերն ամ ոչ ետուն հանգիստ ակն թօ_
թափել մի, այլ շրջեցուցանէին յապա_
րանից յապարանս: Իսկ թէ որչափ ծաղր
և նախատինս և անարգանս և չարչա_

րանս անցուցանէին 'ի գլուխս իմ պգի
ճերն ամ 'ի տարուբեր առնելն՝ զայնու
սինկ թողում, զի ոչ կարեւս տանել։

16 Նու զխո՞րդ լիցի քան զայն առա‿
ւել սէր՝ որ զքեզ սիրեցի, զի
և ոչ մօր իմոյ մարիամու ածածնի ո‿
ղորմեցայ. յորժամ տեսանէր մայր իմ
զմիածին որդիս իւր զարարիչ երկնի
և երկրի 'ի վր խաչին մերկացեալ՝ և
զմարմին իմ արիւնթաթաւ ներկեալ.
բեւեռօք պնդեալ. զկողս հերձեալ. զե‿
րեսս իմ ապտակեալ. զգլուխս խո‿
նարհեցուցեալ՝ զոգիս աւանդեալ, և
մահացեալ։

Ո՞րդ՝ կարէ՞ ոք 'ի մարդկանէ կամ 'ի
հրեշտակաց իմանալ, թէ ո՞րքան սուգ
ունէր նա. ո՞րքան կսկծէր. ո՞րքան այ‿
րէր սրտին. ո՞րքան մորմոքէր. ո՞րքան
խարշատէր. ո՞րքան վառէր. ո՞րքան ալ‿
գայր. ո՞րքան հեծեծէր. ո՞րքան հառա‿

 չէր.

չէր · ո՞րքան տխրէր · ո՞րքան խռովէր · ո՞րքան տագնապէր · ո՞րքան յոգւոց հանէր։ Ո՞րպիսի ողբայր · ո՞րպիսի արտասուս հեղոյր · ո՞րպիսի երգս եղանակէր · ո՞րպիսի ձայնս արձակէր · ո՞րպիսի բանս բարբառէր։ Զիա՞րդ գիրկս խաչին արկանէր · զիա՞րդ զբազուկն իւր ձգէր առ իս, և ո՛չ հասանէր · զիա՞րդ յերկիր անկանէր · զիա՞րդ հող զգլխովն տայր · զիա՞րդ կականէր · զիա՞րդ Թախանձէր · զիա՞րդ խանդաղատէր ընդ դէմ միածնին իւրոյ մահացելոյ · զիա՞րդ զերկնային զօրսն 'ի յողբս խառնահեծուցանէր · զիա՞րդ զզգալի արարածս յարտասուս շարժէր · զիա՞րդ զիւղաբեր կանայսն ընդ ինքեան յերկիր ընկենոյր։

Արդ 'ի ժամուն յայնմիկ՝ մայրն իմ որ զայսպիսի կսկիծս կրէր, մեռեա՞լ էր, եթէ կենդանի · յարթնութեա՞ն էր, եթէ յերազի · 'ի զգաստութեա՞ն էր, եթէ 'ի թմբ-



րու

րուէ· և այսքան աղետից մօր իմոյ ես ոչ ողորմեցայ վն քո, և դու երբես շըրջես յինէն՝ և 'ի թշնամւոյն կորին

դառնաս։

17 Ո՛վ մեղաւոր իմն՛ որ այժմ քաղցրութբ կոչեմ զքեզ յապաշխարութի, և դու ոչ լսես ինձ. եթէ յանդըղջուէդ մեռանիցիս, մի այնքան երկնչիր 'ի բազմութէ մեղաց քոց՝ որքան յիմ երախտեացս և 'ի չարչարանաց · զի քան զմեղաց քոց հատուցումն՝ հազարապատիկ տանջելոց եմ զքեզ 'ի հնոցի հրոյն· որ արհամարհեցեր զչարչարանս իմ· և ունայնացուցեր զմարդեղութիս իմ· և 'ի զուր հաներ զիջումն իմ յերկնից յերկիր՝ որ վն քո։

Զչարչարանքն իմ՝ զոր կրեցի վն մեղաւորաց, այն պա՛րտք է 'ի վր մեղաւորաց · զի թէ ապաշխարութբ ոչ վճարեսցեն զպարտս չարչարանաց իմոց՝ և

տացեն թողութի՜ ՚ի դատաստանին ի֊
մում, զմեղաց իւրե՜նց հատուցումն այն
չարիքն եմ տալոց՝ որքան գործեցին.
իսկ զպարտս չարչարանաց իմոց հարիւ֊
րապատիկ՝ զի արհամարհեցին։

18 Ո՛վ մեղաւոր ասա ինձ՝ զի՞նչ վնաս
տեսեր յարարչէս քմէ, որ այս֊
քան ատես զիս. կամ զի՞նչ բարութի՜
տեսեր ՚ի սատանայէ, որ այդքան սի֊
րես և զկամս նո՜ր կատարես՝ քո զազիր
գործովդ։ Այլ թէ ունկն մատուցանես
ինձ, ահա այժմ զսատանայի բարուն
ցուցանեմ քեզ՝ զոր արար։ Ո՞չ սատա
նայ էր՝ որ զմայր քո խաբեաց օձիւն,
և նովաւ զհայր քո ադամ։ Ո՞չ սատա֊
նայ էր՝ որ ետ ուտել հօր քում ըղ֊
պտուղն։ Ո՞չ սատանայ էր՝ որ մերկա֊
ցոյց ՚ի լուսեղէն պատմուճանացն։ Ո՞չ
սատանայ էր՝ որ փախոյց յերեսաց այ՜,
և թաքոյց ՚ի ներքոյ թզենւոյն։ Ո՞չ սա֊



տա

տանայ էր՝ որ 'ի ներքոյ անիծիցն այ մատ
նեաց զհայր քո և զմայր։ Ո՞չ սատանայ
էր՝ որ գրաւեաց 'ի ներքոյ մահու։ Ո՞չ
սատանայ էր՝ որ ես արտաքսել յածա-
վայելուչ դրախտէն անմահութեն։ Ո՞չ
սատանայ էր՝ որ զամս ինն հարիւր կսկը
ծեցոյց ընդդէմ անմահական դրախ-
տին սատակագին արտասուօք։ Ո՞չ սա-
տանայ էր՝ որ զպայծառութի լուսե-
ղէն պատմուճանին հօր քո՝՝ 'ի մաշկեղէն
հանդերձ փոխարկեաց։ Ո՞չ սատանայ
էր՝ որ զանաշխատ վայելումն 'ի պտղոց
դրախտին՝՝ 'ի քրտունս երեսաց դարձոյց
վարել։ Ո՞չ սատանայ էր՝ որ զրկեաց 'ի
հրեշտակական աճմանէն՝ և արժանա-
ցոյց անասնական աճման, և այն՝ ցա-
ւօք և տրտմութբ։ Ո՞չ սատանայ էր՝ որ
զհօգիս հօր քո ծննդովք իւրովք զամս
հինգ հազար 'ի դժոխս արգելեալ պա-
հեաց, մինչև ես գթացեալ ողորմե-



ցայ

ցայ, և եկեալ խաչիւն ազատեցի։ Որդ՝ եթէ ընդ նախնի հայրն քո ադամ զայս արար, ընդ քեզ ապա զի՞նչ կամի առնել՝ որ այդքան սիրես զսատանայ․ և դու մի՛տ դիր զի և զքոյն ատացից։

19 Ո՛վ մեղաւոր՝ կամի զքեզ սատանայ ջնջել ՚ի հօր Ա̃յ յորդեգրութենէ։ Կամի որոշել ՚ի հոգւոյն Ա̃յ բնակութէ։ Կամի բաժանել զքեզ յորդւոյս Ա̃յ եղբայրութէ։ Կամի ըզ քաղցր սէրն Ա̃յ հօր՝ որ զմիածինն ետ վ̃ն քո ՚ի մահ, ՚ի յատելութի̃ փոխել։ Կամի զերթևեկութի̃ հոգւոյն սրբոյ ՚ի քէն արգելուլ։ Կամի յա̃ծայինն անձառ շնորհաց վայելչութե̃ն զրկել։ Կամի զտիրական տաճարդ հիմնայատակ քակել։ Կամի զարարչին իմաստութե̃ն յօրինուած պատկերդ ՚ի յերկիր կոխել։ Կամի զցանկալի տիպդ երրորդութե̃ն չա



րա

բաշխր մեղքդ եղծանել · և այն 'ի
կորդին։

20 Ո՜վ մեղաւոր՝ որ սիրեսդ զսատանայ, տե՛ս զցանկութի դորա վ՛ն քո։ Ցանկայ սատանայ զաւազանին շնորհն՝ զոր ընկալար 'ի հոգւոյն ս՛ր՛յ՝ 'ի քէն եղ_ ծանել։ Ցանկայ զմկրտութե լուսա_ պայծառ պատմուճանն զոր զգեցար՝ մեր_ կացուցանել։ Ցանկայ 'ի կենարար մարմ նոյ և յարենէն խմէ սովամահ գքեզ սա տակել։ Ցանկայ զերկնային հարսանեց հանդերձդ աղտեղացուցանել։ Ցան_ կայ զլապտեր կուսութե քո շիջուցա_ նել։ Ցանկայ զբացեալ դրունս արա_ գաստի երկնաւոր փեսային՝ ընդդեմ քո փակել։ Ցանկայ զկայելուչ տունկդ ադենական դրախտին յարմատոց խլել։ Ցանկայ զուռնդ գեղեցիկ՝ որ հաս_ տատեալ ես 'ի Ճշմարիտ որթս յս՛ սրով հատանել։ Ցանկայ զանթառամ ծա_
ղիկդ

զեկդ արարչին՝ խորշակաւ մեղաց թա_
ռամել. և այն ՚ի կարգին։
21 Ո՛վ մեղաւոր փորձեալ և զչարին
սատանայի՛ որ սիրեսդ զնա. զչարի
սատանայ՝ եթէ ՚ի մեղացդ քոց զղջա
ցիս. Ո՛ չարի՝ յորժամ զգործեցեալ
յանցանքդ խոստովանեսցիս. Ո՛ չարի՝
յորժամ մեղայ՛ ասելով առ տէր քո դարձ
ցիս. Ո՛ չարի՝ յորժամ անկեալ յերկիր՝
առխս արտասուօք պաղատիս։
Վ երաւորի դառնապէս՝ յորժամ յի
նէն զթողութի մեղաց քոց ընկալցիս։
Նախանձի բորբոքմամբ հրոյ՝ յորժամ
զտեղս քո ապաշխարութեամբ վերստին
՚ի հոգիդ քո ընդունիցիս։ Տոչորի կս
կծմամբ՝ յորժամ յարարչէս քո պատուօք
մեծարիցիս։ Տագնապի մեծաւ տան_
ջանօք՝ յորժամ անթարշամ բրաբիո_
նօք պայծառասցիս։ Կատաղի բարկու_
թեամբ չարաչար՝ յորժամ երկնային

փա

փառօքս իմ պսակեցիր։ Սահանայ չա-
րութբ՝ յորժամ անվախճան կենօք ըն
հրեշտակս իմ պարառեալ՝ յարքայութս
երկնից բերկրութբ հրճուեցիր։

22 Տե՛ս ո՛վ մեղաւոր, որ սիրես զսա-
տանայ՝ և կատարես զկամս նորա,
եթէ զի՛նչ խոստանայ քեզ։ Խոստա-
նայ քեզ սատանայ բարութի՝ զանդունդս
անդնդոց։ Խոստանայ քեզ վայելչութի՝
զգոդեցեալ և շարաւալից՝ զտաղտկա-
լի և զազրալի տեսութի կերպարանաց
իւրոց, որ դառնագոյն է քան զհուր
գեհենին։ Խոստանայ քեզ զպարակցու-
թիւն ժանտատեսիլ և գարշատեսիլ
դասուցն դիւաց։ Խոստանայ քեզ հան-
գիստ՝ զկաթսայս անդնդային եռան-
դեցն, և զգոգս հրաբորբոք տապա-
կանն։ Խոստանայ քեզ պատմուճան՝ ըզ-
խաւարն արտաքին, որ է թանձր և շօ-
շափելի. ուր լալ աչացն է՝ և կրճել ա-
տա

տանմանցն։ Խոստանամ քեզ սեղան՝ ըղ-
ձոցս լայնութե՟ յատակացն դժոխոց։
Խոստանամ քեզ զենլիք՝ զորդունքն ան-
քուն և զվիշապքն ահագին հրեղէն
ծովուն։ Խոստանամ քեզ կերակուր՝
զհալս քրտնից հալոցացն սարսուելի ի-
ջեռոցն։ Խոստանամ քեզ ըմպելի՝ զսար-
սափելի հոսանս հրեղէն գետոցն։ Խոս-
տանամ քեզ լապտերք՝ զցոլմունս շան-
թից հրաբորբոքս փայլատակման կայծա-
կանցն։ Ահա՛ զտարտարոսն և զայլսն
ամ՟ զոր խոստանամ սատանայ իւրոց սի-
րողացն և կամարարաց։

23 Ո՛վ մեղաւոր՝ ընդէ՞ր զերախտիս
արարչիս քո՛ ոչ իմանաս. զի սա-
տանայ յամ՟ աւուր մահուանդ սպասէ,
զի ՚ի մեղս մեռցիս. և ես աներեւոյթ
զօրութ՟ք իմով կիզեմ միշտ ո՛չ հրով.
և հրեշտակք իմ հարկանեն զնա հրե-
ղէն սրով և ՚ի բաց փախուցանեն ՚ի
քէն,

քէն, զի մի՛ մահու մատնեսցէ քեզ։ Գի-
տէ չարն զի ես մարդասէր եմ. և եր-
կնչի՛ եթէ մարդ մեղաւոր կենդանի մնա-
լով յանկարծակի զզջասցի, և ողորմու-
թիւն գտցէ 'ի ձեռս այ՟, և ելանիցէ յի՛ն
քէնէ։

Ապա ընդէ՞ր 'ի բաց փախչիս 'ի քաղցր
քո՛ւնես քումմէ, որ հրեշտակք անդա-
դար ուսանելով ո՛չ յագենան 'ի քաղցր-
ութե՛է իմմէ. զի՛նչ չար կամիմ քեզ, որ
այդպէս հրաժարիս յինէն։ Ս՟ո այն՝
զի զմոլորեալդ խնդրեմ. զի զկորու-
սեալդ գտանեմ. զի զվիրաւորեալդ բու-
փոխեմ. զի զհարուածեալդ բժշկեմ.
զի զընկղմեալդ վերաբերեմ. զի զտա-
րաբերեալդ 'ի հողմոց հանգուցանեմ.
զի զծփեալդ 'ի յալեաց խռովութեց՝ 'ի
նաւահանգիստն ածեմ։

24 Ո՛վ մեղաւոր՝ 'ի միտ ա՛ռ թէ զի՛նչ
կամիմ քեզ առնել. և սիրեա՛ զիս՝



որ

որ սիրեցի զքեզ, և սիրեմ զքեզ, և սիրելոց եմ զքեզ։ Կամիմ 'ի հիւանդութենէդ բժշկել զքեզ. կամիմ 'ի մեռելութենէ մեղացդ յարուցանել։ Կամիմ յանխարատելի ազդդ հանել. կամիմ'ի դառն տրտմութենէդ մխիթարել։ Կամիմ'ի սաստիկ վիրացդ բժշկել. կամիմ 'ի չար տառապանացդ զերծուցանել։ Կամիմ'ի տառանց կապանաց մեղացդ արձակել, կամիմ 'ի ծառայութենէ չարեացդ ազատել։

Ո՛վ մեղաւոր՝ ծանի՛ր եթէ անյիշաչար տ̄րս քո զի՛նչ խորհիմ քեզ։ Խորհիմ զի անձամբ իմով եկեալ զանբուժելի խոցուա՛ծս հոգւոյդ քո տեսից։ Խորհիմ զի զդարշուխս դորա՝ ձեռօք իմովք լուա՛ցից։ Խորհիմ զի զաղտեղութիւնս դորա՝ դաստառակաւ իմով սրբեցից։ Խորհիմ զի զնեխեալ փտութիւնս դորա՝ կտրեցից։ Խորհիմ զի

զթա

զթարախն ՚ի հոգիդ քո բանեալ՝ քա-
մեցից։ Խորհիմ զի զարտասուս իմ ածա-
յին՝ ՚ի վերայ աղտեղութ͞ե հոգւոյդ աղ-
բեւրաբար հեղից։ Խորհիմ զի զբազ-
մութ͞ի ա͞մ չարեաց դորա ջնջեալ մաք-
րեցից, եւ յառաջի՛ն փառսն հաստուցից.
միայն զղջասցի՛ր ՚ի չարեաց քոց եւ դա-
դարեա՛։ Խոստովանեա՛ զյանցանս քո՝
եւ ասա՛ մեղայ. եւ ես ջնջեմ զբազմութ͞ի
մեղաց քոց, թէպէտ եւ կարի սաստիկ ես

մեղուցեալ։

25 Ո՛վ դարք արդարոց հաւատարիմ
ծառայք իմ, մի՛ զարմանայք ընդ-
անոխակալ փրկիչս ձեր, եթէ զխո՛րդ-
այքան խանդաղատիս ս͞րտ մեր եւ ա-
րարի՛չդ ՚ի վ͞ր մեղաւորաց։ Ո՛րդ՝ մի՛ ո-
դիք, զի սաստեմ ձեզ զսէր իմ՝ զոր ունիմ
՚ի վ͞ր մեղաւորաց։ Նորանք ինունց դա-
սուց հրեշտակացն՝ որոց թի՛ւ բազմու-
թե͞ն անթուելիք են ՚ի մարդկանէ եւ
ան

անզխտելիք, այնքան հրաբուն եռանդն և լուսապսակ բազմութիքն, յորժամ տեսանեն զաստիկ սուգ իմ՝ զոր սգամ ՚ի վ͞ր միոյ անդարձ մեղաւորի, ամենեքեան առ հասարակ մեծաւ դողութ͞բ ջանան մխիթարել զիս. և ոչ կարեն սակաւ մի հանդարտեցուցանել զսուգ իմ. զի վ͞ս այնորիկ զմահ խաչի յանձն առի, զի մի՛ ոք երբեք կորիցէ։ Այլև գունդք ա͞մ առաքելոցն՝ որք կան առ իս յարքայութենս իմում, դողան ողբալով առաջի իմ. և ոչ բաւեն փոքր մի փարատել զտրտմութիս իմ։

26 Լուր և զայլ ահաւորս որ պատմեմ քեզ. զի մայրս իմ ա͞ծածին յորժամ տեսանէ զիս ՚ի յայսքան տառապանս, ՚ի ծունկս անկանի առաջի իմ. և զստինսն բացեալ որով դիեցի, ողբալով աղաղակէ՝ և զմատունսն տատանէ՝ ասելով. որդեակ իմ միա-



ծին

ծէին, մի՞թէ ոչ էր բաւական վիշտն այն և տրտմութիւն՝ զոր կրեցեր յաշխարհի 'ի հրէիցն և 'ի խաչահանողացն, և դեռ ևս տրտմի՞ս. ընդէ՞ր ոչ ողորմիս մօրս քո լալագին, և ոչ հանդարտիս սակաւ մի 'ի տխրութեէդ: Ո՞չ էր բաւական մօրս տառապելոյ կսկիծն այն և մորմոքումն, յորժամ տեսի զմիածինդ իմ 'ի խաչին, արիւնաներկ մարմնով մահացեալ. և դեռևս հրաւիրե՞ս զսիրտս իմ՝ սուգ ունելով: Ահա այսու ամի՛ բնաւ ոչ գայ 'ի սիրտ իմ ուրախութի, որքան տեսանեմ զանդարձ մեղաւորն արտաքս ելեալ 'ի գութէ, և հեռացեալ 'ի հօտէ իմմէ, և անկեալ 'ի ձեռս սատանայի:

Ո՜ զի այնքան կսկծի սիրտ իմ՝ և տրտմի հոգի իմ 'ի վր միոյ անդարձ մեղաւորի, որ երկնիս երկնաւորօք, և երկիրդ երկրաւորօք, և ծով ամ լրիւ իւրով իբրև յոչ ինչ համարին յաչս իմ:



Ահա

27 Եւ մի՛ զարմանար ընդ այսքան ա-
ղէկկիզկիս իմ 'ի վ̃ր մեղաւորաց․
ծանի՛ր ո՛վ մարդ, զի յորժամ տըն-
կես զբարտնակ մի, և յետ երրորդ ամի
աշխատութե̃ քո՝ եթէ ոչ տացէ պտուղ
քեզ՝ վիրաւորիս դու ընդ այն․ իսկ
եթէ չորասցի, որչափ մեծաւ տրտմու-
թեամբ, թէ 'ի զուր աշխատեցայ զե-
րիս ամս, և ջանն իմ կորեաւ․
Ապա զիա՞րդ ես ոչ տրտմեցայց 'ի վ̃ր
մեղաւորին, որ վ̃ս նր̃ յերկնից 'ի յեր-
կիր իջի․ 'ի կուսէ մարմին առի․ ա̃ծս
մարդ եղէ, և տ̃ր ծառայ․ զամս երե-
սուն և երեք 'ի յերկրի շրջեցայ․ կե-
նարար վարդապետութ̃բս 'ի լսելիս մե-
ղաւորաց միշտ քարոզեցի․ ա̃ծային նշա-
նօքս զբազումս բժշկեցի․ այլ և այլ ազգի
չարչարանս և նախատինս կրեցի․ 'ի խա-
չին բարձրացայ․ զարիւնս իմ գին ե-
տու, և 'ի գերեզմանէն ամ̃ել փրկեցի․ Արդ-

այս ա՟մ չարչարանացս իմոց պտուղ՝ փըր-
կութ՟ի մեղաւորին է։ Իսկ եթէ մե-
ղաւորն 'ի մեղս մեռանիցի, պտուղ չար-
չարանաց իմոց կորնչի. և ես 'ի խո՛ր խո-
ցտիմ և վիրաւորիմ. զի ունայն եղև
տնօրէնութ՟ի իմ վ՟ն ն՟ր։ Իսկ յորժամ
մեղաւորն զղջանայ 'ի մեղաց իւրոց և
գայ յուղղութ՟ի. ուրախանամ ես և
ցնծամ. յայնժամ ցնծայ ընդ իս Հայրն
իմ և Հոգին ս՟բ. խրախանան և ամե-
նայն Հրեշտակք իմ. Հրճուին ամենայն
գունդք արդարոց, և ցնծացեալ բերկ-
րի մայր իմ Թագուհի. և 'ի միասին պար
առեալ տօնախմբութ՟ի մեծ կատարեն
յերկինս առաջի իմ. վ՟ն զի պտուղ
չարչարանաց իմոց ո՛չ կորեաւ.

2º Ո՛վ մեղաւոր՝ սիրեա՛ զիս որ սի-
րեմս զքեզ. Հրաւիրեա՛ առ քեզ
զբաղձալիս Հրեշտակաց և Հրեշտակա-
պետաց, և զցանկալիս արդարոց. ո՛չ գար-

չիմ ՚ի հողեղէն յարկացդ · չատողակամ յաղքատութենդ · չխառնեմ զանմաքրու–
թիդ։ Սրբեմ զառագաստ սրտիդ · Ջանամ բուրել հոտ անուշութե զաղօթս · պատրաստեմ սեղան զվարդ · պար–
գեւեմ զինչ զողորմութիդ · տնկեմ պաս–
տառակեալ զխոստովանութիդ · փթթեմ վարդ զսէրդ · մրգ բազմակալ զապաշ–
խարութիդ · լարեմ զտատանաղի մա–
տանցդ առաջի իմ ՚ի քնարահարութի · կոչեմ զմուս քեզ ՚ի բարեխօսութի՝ եւ ինձ հիւրամեծար · բուրւականն է ձայնդ · տունս է սեղանդ · պայծառ է կոչումդ ·
Իսկ եթէ անարժ ես, զհայր իմ ընդդի–
մանել · ես եւ հայր իմ եկեսցուք, եւ օ–
թեւանս առ քեզ արասցուք։ Ո՜ զայս այսպէս արասցես, եւ զիս երախտաւոր առաջի հօր իմոյ կացուսցես · զի խոր–
հուրդ գայթակղեան իմոյ յաշխարհ ոչ ու–
նայն երեւեսցի · այլ ծանիցի մարդկա–


յինն

մինն բնութեան առաւել քան զհրեշտա-
կաց և զհրեշտակապետաց։ Նոյն խրա-
խացեալ հայր իմ օրհնեսցէ զքեզ բե-
րանովն իւրով յօրհնութիւն՝ որ ոչ անց-
ցանէ. և պատրաստեսցէ քեզ զտեղի ՚ի
վերքան զբնակութիս հրեշտակաց. ուր
ես եմ՝ անդ և պաշտօնեայն իմ եղի-
ցի. և կեանքն ձեր ծածկեալ են ընդ
առ ա՟ծ։ Նա ՚ի միւսանգամ գալստեան
իւրոյ՝ զօրհնեալսն ՚ի հօրէ իմմէ մերձե-
ցուցից առ հայրն իմ՝ և ասացից. ա-
հաւասիկ ես և մանկունք իմ՝ զորս ե-
տուր ցիս։

26 Ո՛վ մեղաւոր՝ ընդէ՞ր ոչ երկնչիս
յահեղ զօրութենէ իմմէ, որ ոչ գաս
յուղղութիւն, մինչ սիրով և քաղցրութեամբ
կոչեմ զքեզ յապաշխարութիւն։ Ծանի՛ր
զի ՚ի հայելն իմ, երկիր ՚ի հիմանէ դո-
ղայ. և լերինք ո՟րպ զմոմ հալին. և ծովք
խլրին զխուռն ջրանան. և դժոխք յես

խո

խորագոյն անդունդս ընկղմի։ Նաև զի-
ա՞րդ ոչ զարհուրիս, զի զօրութի իմ
զհողմ և զհուր հատանէ։ Կամ թէ ա՞րդ
ոչ սոսկաս, զի անճառ բնութիք անհե-
դակերպից հաշեալ տապակին 'ի հրա-
կիզմանէ փայլատակմանց ահաւորութե
իմոյ։ Կամ զիա՞րդ ոչ սարսափիս, զի
սերովբէք և քերովբէք ծածկեն զդէմս
իւրեանց բոցանիւթ թևօք յահարկու-
թենէ իմմէ։ Նաև զիա՞րդ ոչ դողաս, զի
թէ կայր հնար փախստեան, ոչ կարէր
կալ երկինք առաջի իմ։ Նա՛ և ա՛մ սար
րակսն տեսակք, և երկիր լռեալ իւրով
հանդերձ անդնդայքն հաստատութեն
հեզգոյր յայնժամ անհուն խորութի յեր-
կիւղէ իմմէ։ Նաև թէ ա՞րդ ոչ սասա-
նիս, զի թէ երկինք երկնից ունէր ևս
տեղի թաքստեան, ոչ հանդուրժէր կալ
'ի ներքոյ պատուանդանի ոտից իմոց 'ի
յահէ իմմէ։ Նաև կամ զիա՞րդ ոչ պակ-
նուս

նուս․ զի եթէ գոյր հնար ծածկուել,
ամ̃ բանակք անմահից դիմեալ անկա–
նէին 'ի նոյն, և թագչէին յերկիւղալի
արփիափայլ ճառագայթից նորա։ Եւ
վ̃ այն ներեմ քեզ, զի մի՛ կորիցես
զյաւիտենական կորուստն․ այլ 'ի զեղ–
ջումն ընկեալ՝ փրկեսցիս 'ի հրոյ գեհե–
նին․ և դու արհամարհես զարարիչն քո,
և ոչ երկնչիս և դողաս 'ի յահեղ զօրու–
թենէ իմմէ։

30 Ո՛վ մեղաւոր՝ մինչդեռ ես քաղց–
րութ̃բ խօսիմ ընդ քեզ, երկնչի՛ր
յինէն, աղորմեա՛ց քեզ․ զի եթէ 'ի հր
եշտակս իմ ոչ խնայեցի՝ որ ընդդէմ
իմ հպարտացան․ այլ 'ի յերկնից 'ի յան–
դունդս իջուցի բարկութեամբ իմով։
Եւ առնդայինն որ յաճախեցան 'ի պոռնը
կութիս, զայնքան բազմութ̃ մարդկան
առ հասարակ ջրհեղեղաւն հեղձուցի․
Զսոդոմ և զգոմոր՝ որ արտաքոյ բնու–
թեան

թեան զչարիմն գործէին , երկնատե-
ղաց բոցոյն կիզեալ մաշեցի։ Ո՛վ գո-
ռոզն փարաւոն՝ որ խստացաւ ընդդէմ
իմ , բազմութ̃բ զօրաց իւրոց 'ի ծովն
կարմիր ընկղմեցի։ Ո՛վ կորխեանքն և
զաբիրոնեանքն՝ որ զքահանայութ̃ին իմ
բռնութ̃բ յափշտակել կամէին , զերկու-
հարիւր և յիսունսն 'ի հրոյ բուրվա-
ռացն այրեցի . և զբանակն աբիրոնի՝
զերկիր պատառեալ յանդունդս ընկղ-
մեցի։ Ո՛վ երիքով՝ որ ընդդէմ իմ թըշ-
նամի դարձաւ , զպարիսպս նր̃ ոպ̃ զջուր
հեղի . և զբնակիչս նր̃ 'ի սուր սուսերի
մաշեցի ձեռամբ ծառ̃ային իմոյ յեսուայ։
Ո՛վ զօրքն սենեքարիմայ արքային ասո-
րեստանեայց՝ որ հայհոյեաց զանուն իմ
սբ̃ , զհարիւր և ութսուն և հինգ հա-
զարսն՝ 'ի դուռն քաղաքին իմոյ եհեմ՝
'ի յական թօթափելն՝ 'ի մէջ գիշերին՝ ե-
տու հրաման հրեշտակի իմոյ , զի սա-
տա

տակեսցէ զնոսա հրեղէն սրով։ Իսկ արդ՝ ամլէ որ հակառակ կամաց իմոց գործէ, եւ ոչ չարաչար պատուհասի․ նոյն Աստուածն եմ, եթէ ՚ի բազումս ոչ խնայեցի, նոյնպէս եւ ՚ի մինդ։ Եթէ քաղցրութե ձայնի իմոյ ոչ լուիցես, եւ զզջասցիս ՚ի մեղաց եւ դարձցիս, հարիւրապատիկ եւս զքեզ առաւել տանջելոց եմ քան զնոսա ՚ի գեհենի հրոյն․ որպէս ասացի, թէ դիւրագոյն լիցի յաւուրն դատաստանի սոդոմայեցւոց եւ գոմորացւոց քան քաղաքիս այսմիկ։

31 Ապա եթէ ասիցես ընդ իս, տէր իմ՝ այսուհետեւ եւ ես սարսիմ եւ դողամ մեծաւ երկիւղիւ յահեղ զօրութենէ քումմէ, որպէս եւ ամենայն արարածք․ բայց զի՞նչ արարից, քանզի տարակուսիմ ՚ի բազմութենէ մեղաց իմոց, եթէ զիա՞րդ ողորմեսցիս եւ թողուցուս ինձ։ Իսկ արդ՝ ՚ի մի՛տ առ զան-

ձանս

ուանս իմ, և ուրախ լեր • և մի տարա‐
կուսիր ընդ բազմութի̅ մեղաց քոց։
Անուն իմ ողորմած է • անուն իմ եր‐
կայնամիտ է • անուն իմ բազումողորմ
է • անուն իմ անոխակալ է • անուն իմ
անյիշաչար է • անուն իմ քաղցր է • ա‐
նուն իմ ամենաբարի է • անուն իմ մար‐
դասէր է։ Անուն իմ բժիշկ հիւան‐
դաց է • անուն իմ յարութի̅ անկելոց
է • անուն իմ կեանք մահացելոց է • ա‐
նուն իմ լոյս խաւարելոց է։ Անուն իմ
փրկիչ գերելոց է • անուն իմ նորոգիչ
հնացելոց է • անուն իմ գտիչ մոլորելոց
է • և այլն ՚ի կարգին • և դու ընդէ՞ր
տարակուսիս ՚ի բազմութ̅է մեղաց քոց։
32 Եւ որովհետև խոստացար ինձ,
թէ այսուհետև և ես երկնչիմ
՚ի քէնէդ իմմէ, և տարակոյսդ քո վասն
շատութե̅ մեղացդ էր • նմանապէս և
ես այսուհետև յաւելում զսէրս իմ,

զպուլթս իմ և զողորմութիւս իմ 'ի վ՟ր
քո. և խրատ տամ քեզ՝ եթէ զի՛նչ ա-
րասցես դու։ Ո՛վ մեղաւոր՝ միայն զայս
արասցես, զի հրաժարեսցիս 'ի հնազան
դութէ՟ չար կամացն սատանայի, և հե-
ռասցիս 'ի պիղծ գործոցդ սովորութէ՟.
եկեսջի՛ր 'ի զղջումն ո՟պ զղամէք. ասա՛
առ հայր քո՝ մեղայ, ո՟պ զանառակ որ-
դին. խոստովանեա՛ զբազմութի՟ մեղաց
քոց, ո՟պ զմարգարէն դաւիթ. ապաշ-
խարեա՛ զանօրէնութիւս քո, ո՟պ զմանա
սէ. աղօթեա՛ առ տ՟ր՝ ասելով, ա՟ծ քա-
ւեա՛ զիս զմեղաւորս, ո՟պ զմաքսաւորն.
արտասուեա՛ զյանցանս քո, ո՟պ զպետ-
րոս. դադարեա՛ց 'ի չար գործոց քոց,
ո՟պ զկինն պոռնիկ. ասա՛ յիշեա՛ զիս յար
քայութե՟ քում, ո՟պ զաւազակն. և տե՛ս
եթէ զի՛նչ արարից ամենազօր տէրս
քո զբազմութիւ՟ն մեղաց
քոց.

33 Ո՛վ մեղաւոր՝ եթէ ՚ի տուր և յաւ-
շնչոյդ զեօթանասնեկին եօթն ես
մեղուցեալ. և եթէ անթի՛ւ են չարիք
քո քան զաստեղս երկնից. կամ անհա-
մա՛ր է անօրէնութի՟ւ քո քան զաւազ ծո-
վու. և կամ չա՛փ է քան զաւազս՝ որ ը՟
ոլորտս տիեզերաց. և եթէ յաճախ քան
զշիթս անձրևաց. կամ բազում քան
զմանրամաղ փոշիս՝ որք տարուբերին ը՟
օդս համատարած. Ապա թէ մեծ և ծանր
իցէ չարիք քո քան զա՟մ լերինս՝ որ յերեսս
երկրի. Ապա թէ անօրէնութի՟դ քո բարձ-
րացեալ իցէ քան զերկինս. կամ խո-
նարհեալ գտանիցի քան զանդունդս.
և կամ լայնացեալ քան զոլորտս ծագաց
երկրի. կամ տարածեալ անդր քան
զշրջանս եթերական օդոց.

Արդ՝ եթէ մեղք քո և չարիք ը՟ս այսմ
չափոյս իցէ որ ասացի, ՚ի զղջմանդ քո՝
քան զթարթել աչացդ, և քան զտուր-

 եա

եստութի̄ չնչոյդ , քան զարագութի̄
նշուլից արեգական , և քան զերևումն
կայծական որ 'ի յօդդ , և քան զմտացդ
ընթացումն , առաւել ևս բիւրապա-
տիկ քան զարագութի̄ սոցա քաւութի̄
շնորհեմ ա̄մ բազմութե̄ մեղաց քոց .
քանզի ամենակարող արարիչ եմ . և ոչ
կարօտիմ ժամանակաց 'ի քաւութի̄ մե-
ղաց . Նա և մէ̄ պղպջակ ջրոյ՝ 'ի յառնելն
այնքան խստագին հողմոյ՝ մինչ զի զծառս
'ի յարմատոց խլեցէ , և զաշտարակս քա-
կեցէ , որքան կարիցէ զդէմ ունել . այս
պէս և մեղք ա̄մ տիեզերաց՝ 'ի զղջա-
նալն իւրեանց , բիւրապատիկ առաւել
ոչ կարեն զդէմ ունել իմոյ ամենակա-
րող զօրութե̄ս .

34 Ով մեղաւոր՝ իմն զի դու մարդ-
ես չափաւոր . և մեղքդ քո թէ-
պէտ բազում թուին քեզ , սակայն և
այն է չափաւոր ըստ նմանութե̄ քո . այս-

պէս

պէս իմն, զի ես ա՟ծ եմ անչափ. նմանա-
պէս ըստ իմում անչափութեան՝ և ո-
ղորմութի՟ իմ է անչափ։ Արդ՝ դու-
յորժամ զչափաւոր մեղս քո՝ ՚ի ձեռն
խոստովանութե՟ ՚ի մէջ իմ անչափ ծո-
վացեալ ողորմութեանս ձգիցես. այնպէս
չիջանի դիւրաւ, ո՟պ փոքր մի կայծ ա-
ռեալ ՚ի մէջ համատարած ծովուն
ձգիցես։

Արդ՝ ո՟պ ազգի ազգի են ճանապարհք
մեղացն. նոյնո՟պս և զանազանք են դեղք
ապաշխարութե՟ն։ Ոմանց ոմանք քուր-
ձով և մոխրով ապաշխարեցան. ոմանք լա-
լով և արտասուօք զիւրն հաշուեցուցին.
ոմանք միայն պահօք և աղօթիւք ապ-
րեցան. ոմանք ողորմութե՟ զողորմութի՟
գտին յինէն։ Ոմանք մարդասիրութե՟՝
և տկարագունիցն ծառայելով, ոմանք
գետնախշտութե՟, ոմանք խոնարհութե՟
և հնազանդութե՟ թողութիւն մեղաց



ըն

ընկալանս։ Եւ դու 'ի սոցանէ ու՛ զմինն
որ հեշտ թուի քեզ եւ թեթեւ. եւ այ
նու կարող ես բժշկել զքում հիւանդու
թիւնս մեղաց քոց։ Ո՛չ թուով ամաց
եւ կամ բազում ժամանակաց. այլ միայն
ուղիղ դարձիւ, եւ ճշմարիտ սրտիւ 'ի
չարեացն հեռացելով, կարող ես ար-
դարանալ։

35 Ա՛րդ եւ դու փութա, զի յա-
ռաջ քան զելն քո յաշխարհէ զի՞նչ
եւ կարողացիս՝ առաքեսցես յերկինս.
Եթէ աղօթս հանդերձ արտասուօք.
եթէ պահս մաքուր. եթէ սաղմո-
երգութիւն ապաշխարանաց. եթէ ժուժ
կալութիւն հանդերձ խոնարհութեամբ. եւ-
թէ հրաժարումն յերկրաւորաց իրացս.
եթէ սէր անկեղծաւոր. եթէ փափա-
քումն Քի. եթէ պահք կամ ողորմու-
թիւնս. Եթէ յառաջագոյն 'ի սոցանէ
առաքեսցես, փութասցիր՝ զի 'ի հան-

 դիտ

գիտ ես գալոց և վայելելոց · ապա
Թէ ո՞չ երկնուղ կայ 'ի միջի։

36 Օյս ա՟մ լսելով և իմանալով՝
զի՞նչ կամիք 'ի պատասխանիս
լինել պատրաստ · յորժամ զաղէրս ո-
ղոքանաց և զգութ անխղճաչարութե ա-
ռաջի արկեալ, ա՟մի զինքն դնէ պար-
տական պարտեաց մերոց · 'ի գութ և 'ի
գորով մտեալ՝ դարձեալ փարի զմեօք՝
աղաչէ, պաղատէ, խնամարկէ, խանդա-
ղատի, պարգևս խոստանայ · որ հայր 'ի
վ՟ր մեր աղէխարշի։

Լսատուեալ քան զչարիսն անցուցա-
նէ զխնամսն, որ 'ի սարսուցեալ որ-
դիսն է տեսանել · զի 'ի գիրկս առեալ՝
գգուէն, համբուրեն · զերեսն 'ի վ՟ր
դնեն · խանդաղատական ձայնիւ գորո-
վեն · զբարբառն եղանակեն · զծախս
հարկանեն · ա՟մի հնարին զհաշտութի
մանկանն · զի զլալն և զհեկեկալն խա-

 վա

փանեացեն։ Մեծապէս և նոքա խաղաղ
ութեալ զերեսն այսր անդր դարձուցա-
նեն, լեզուագարեն, զերեսն մաղլեն.
սակայն և ոչինչ յայնցանէ ցասուցա-
նեն զծնողսն. այլ պարզես տան ման
կանն զախորժակս իւր. խաղաղիկս, ա-
նօթս պատուականս. եթէ բեկանէ՝
չցասուին, եթէ կորուսանէ՝ չտրտմին. մի-
այն թէ 'ի հաշտութիւն տեսանիցեն զիջել
զմանուկն։ Օ՜ այս և առաւել քան
զայն ցուցանեն մեզ գութք ծնողին
խնամոցն. զորոյ և զփորձ առեալ հո-
գերգողին դաւթի զաստիկ սիրոյն այ
առ մարդիկ՝ ասէ. որպ գթայ հայր 'ի վր
որդւոց իւրոց, գթայ և տէր յերկիւ-
ղածս իւր։

37 Նա՝ և առաւել զանչափական և
զանեզրական սիրոյն իւրոյ զան-
պատմելի և զանիմանալի գորգանն՝ ինք-
նապատում արարեալ 'ի ձեռն ղուկաս ա-



ւե

ւետարանչին՝ աւանդէ մեզ ասելով.
ո՛ ՚ի ձէնջ որդի՝ որ խնդրեսցէ ՚ի հօրէ
իւրմէ հաց, մի թէ քա՞ր տացէ նմա.
կամ թէ խնդրեսցէ ձուկն, մի թէ օձ
տացէ նմա. իսկ եթէ դուք որ չա՛րքդ
էք, գիտէք զպարգեւս բարիս տալ որ-
դւոց ձերոց. ո՞րչափ առաւել եւս Հայրն
ձեր երկնաւոր տացէ ձեզ զանձառ եւ
զանբաւ ուրախութիւն։

38 Տեսէք՝ որպիսի գեղեցիկ են պար-
գեւք սիրոյ նորա առ իւր արա-
րածս. եթէ ախորժէք եւ դուք՝ լինիք
որդիք սիրոյ նորա, որ կայ հանապազ ՚ի
բողոքել եւ ՚ի թողուլ զպատժանացն բնու-
թիւնս մարդկային։ Արդ՝ մի թէ քան
զվէմս ապառաժ իցեմք, որ դեռ եւս
քրքրեալ թուլանան, եւ սրով տաշին ՚ի
պէտս գործոց։ Իսկ եթէ երկաթ, եւ
զայն եւս հուր հալէ. եւ անօթս պիտա-
նացուս ՚ի ճարտարացն գործին։ Իսկ

եթէ գազան, և այն ձեռնընդրել եղէն՝ և հարկաւորեալ պատշաճեալ կան 'ի դրունս թագաւորաց, առ 'ի պատրաստ 'ի ծառայութիւն և 'ի հնազանդութիւն նոցա։ Ո՜ չարամտութիւն վիշապաց՝ և զգաստ բարս թիւնաւոր օձից 'ի հնազանդութիւն ածեն բանք ողորմական թովչէի ճարտարի. և ընդելական ընդանութեամբ առ մեծամեն ճարտարեն։ Նաւ արդ՝ ասուն և խօսուն և իմացական բնութիւն մարդկան զխաբող ոչ գեթ նմանի նոցա՝ թողուլ զանզգամութիւն և կեալ։ Նաւ այն՝ զի պատգամք սաղմոսերգողին կշտամբեալ յանդիմանէ, և տարեալ մերձ առ օձան և քարբս և կարիճս կացուցանէ ասելով. սրտմտութիւն նոցա ըստ նմանութեան օձի, որպէս իժի և քարբի, զի խցեալ է զականջս իւր. զի մի լուիցէ նա զձայն թովչէի ճարտարի, և մի առցէ դեղ 'ի դեղատուէ իմաստնոյ։

39 Բայց դու ով մեղաւոր, նմանեաւ
մարգարէին դաւթի. որ ասէ
գիր, մի թէ որ անկանիցի՞ ոչ յառնի
ցէ. որ և աստ ուսոյց՝ զի կատարեաց
մարգարէն։ Ընկայ ՚ի ձեռն ցանկու
թեան, և յարեայ ՚ի ձեռն ապաշխա
րութե. աչօքն մեղայ, շնաց և ըղ
ձան. լեզուաւն քաւեաց, զի խոստո
վանեցաւ և ապրեցաւ։ Խոստովանու
թիւնն թեթևացուցանէ զծանրութի
մեղաց։ Խոստովանութիւն զդէզս մե
ղաց հալէ իբրև զխոշի։ Խոստովանու
թիւն զբարդս փշոց մեղաց այրէ իբրև
զհուր։ Խոստովանութիւն ուստի երա
նէ՝ զանօթն ժանկակիր իբրև զակն
պայծառագոյն գործէ. և որ անզեղջ մնա
ցէ՝ ոչ սրբեսցի։ Խոստովանութիւն է՝ որ
նովաւ ապաշխարութիւն զօրանայ. և ա
ռանց նր՟ որչափ և գործի՝ տկարանայ
յաւիտեան։ Խոստովանութիւն՝ զզղջման

դուռն • ապաշխարութեան սկիզբն • գլուխ
որդիութեան առաքինութեան • զէն յաղթու-
ղին • մեղաց վահան։ Խոստովանութիւն՝
ապաշխարութեան առիթ • ապաշխարելոց
պարիսպ • գլորելոց կանգնումն • դըրդ-
ուեցելոց գաւազան • շլացելոցն ցուպ։
Խոստովանութիւն՝ աղտեղուէ մեղաց
սրբօղ • անմաքրից մաքրօղ • ՚ի տանջա-
նացն ազատօղ • գեհենի ահուն փարա-
տօղ։ Խոստովանութիւն՝ երկնից բացօղ •
առաջի տն մուծանօղ • ապաշխարողաց
հաւաքօղ • մեղաւորաց յապաշխարութի
հրաւիրօղ • մոլորելոց կոչօղ • ՚ի քաղաքն
երկնաւոր առաջնորդօղ։ Խոստովանու-
թիւն՝ խաւարելոց լոյս • որք այս ունին՝
Ճառագայթ • մանկանց դաստիարակ • ան-
յուսից օրինակ յուսոյ։ Խոստովանու-
թիւնն՝ եկեղեցւոյ զարդ • քահանայից
քարոզ • գործողաց պսակ • մանկանց ա-
ռագաստի զգեստ • և հարսանեաց մտին



բա

բացօղ։ Խոստովանութիւն՝ ի դրանց մա_
հու փրկող․ ածային սեղանոյն հրաւէ_
րող․ մարմնոյ տն̃ ջամբեցող․ պատուա_
կան արեանն արբուցանող․ և որտամե_
ցելոյն ուրախացուցանող։ Խոստովա_
նութիւն՝ ապաշխարութե դուռն․ յան
ցանաց քաւիչ․ ընդունողաց զնա մաք
րիչ․ Թագաւորաց պխտանի․ աղքատաց
ընդունելի։ Խոստովանութիւն՝ մեծա_
մեծաց և տնանկաց պատսպարան․ պոռ
նկաց քաւարան․ աւազակաց պաշտպա
նարան։ Խոստովանութիւն՝ բանաւոր մեղ
ուաց հաւաքող․ քաղցր գործոց վաս_
տակող․ դառնութե քաղցրացուցանող․
և ամ̃ առաքինութեց զարդարող։ Յա_
արդ՝ ո՞րք կարացեն գովել զխոստովա
նութիւն․ զի ուր յանցանք իցէ՝ առանց
սորա թէ բիւրապատիկ առաքինութիւն
գործիցեն․ ոչինչ օգտին․ եթէ պա_
հես․ եթէ աղօթես․ եթէ ճգնես․ ե_



թէ

թէ ողորմութիւն առնես . եթէ զամ ա-
ռաքինութիւնս գործես, չէ հնար քեզ
առանց սորա զյանցանս քաւել՝ և թո-
ղութիւն գտանել։

40 Դու ո՛վ մեղաւոր՝ որչափ կարո-
ղութիւն է քո մարմնոյ ընդդէմ
ամբարշտական մեղացն քոց մեծաւ աղօ-
թիւք . և կոչեա քեզ ՚ի բարեխօսութիւն
զսուրբս ամենայն հրեշտակաց , և զամ սուրբս
և զարդարս , մանաւանդ զսուրբ Աստուա-
ծածին , եւ աղաչել զՔի սուրբ չարչա-
րանսն . և աղաղակեա առ հայր անդա-
դար՝ զի ողորմեսցի քեզ . և ՚ի ձեռն
հոգւոյն սրբոյ տացէ քեզ կարողութիւն
ընդդիմանալ մեղացն։ Իսկ եթէ պատա-
հեսցի՝ զի յաղթիցիս ՚ի մարմնոյ տը-
կար , դու ՚ի նոյն դարձեալ կանգնեա .
և որչափ անկանիս , այնչափ արագապէս
փութա կանգնիլ . և Աստուած այնպէս ըն-
կալցի զքեզ , իբրև թէ բնաւ չիցես
ան

անկեալ։ Ո՛չ ի թէ հանդերձ ինչ 'ի ցեխս անկանիցի, աղտեղանայ. և յորժամ օծանօք մաքրի՝ ո՛չ թո՛ղու խոստան յաչս զզուեցուցին. որչա՞փ ևս առաւել հոգին՝ որ անկեալ է 'ի մեղս՝ և յառնէ անդրէն, խոստան ո՛չ երևեսցի առաջի այ՟. զի Նա կարի՛ առաւել սիրէ զազգս մարդկան՝ քան այր ոք զհանդերձս իւր։ Նաւ տես զանչափ սէր նր՟՝ որ վս՟ մեր մարդացաւ, և մեռաւ մարմնով անմահն ած՟. և ո՛չ թէ սիրէ միայն՝ այլև բառնայ 'ի վր՟ ուսոց իւրոց խնդալով։ Արդ՝ որ ոք ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ, և իմանայցէ՛, և վայելեսցէ՛ 'ի բարութեցն պարգևաց 'ի ձեռն խոստովանութե՟ և ապաշխարութե՟, որ փառօք պսակէ, և 'ի գահոյս հանգուցանէ 'ի քս՟ յս՟ 'ի տր՟ մեր։ Որում ընդ հօր և ընդ հոգւոյն սբ՟յ վայելէ փառք իշխանութի՟ և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

# ԲԺՇԿԱՐԱՆ
## Հոգւոյ
### Մասն երկրորդ։

Յորում առաջի դնին դէս դէս բանք աղօ-
թից՝ զօրաւորք 'ի բժշկութէ հոգեւոր հիւան-
դութեց՝ բաժանեալք ըստ եօթնեկին առաւուրց
շնորհաց, առ մարդիկ ընթերցանութէ ես-
րուցանէր հոգեւորաց։

Ի վերջոյ յաւելան խնդրուածք հաշտու-
թեան ցուցէք այն՝ յաղօթամատոյց գրոց սրբոյն Գրիգ-
որի Նարեկացւոյ, և յայլոց Սրբազանից։

Արդեամբ և ջանիւք խոհեմագոյն-
մեծի տէր Պաղտասար հոգեւոր քահանայի
Այր եկեղեցւոյս տէր Ս[illegible]։

Յամի Տեառն 1822 'ի նոյ" 10։



Ընթրեկին աղօթք։

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն։

Հայր մեր որ յերկինս. սուրբ եղիցի անուն քո։ եկեսցէ արքայութիւն քո։ եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր։ Թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ և մի տանիր զմեզ ՚ի փորձութիւն։ այլ փրկեա զմեզ ՚ի չարէ։ զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. և մի՛ բարկութեամբ



քով

քով խրատեր զիս։

Ողորմեա ինձ Տէր զի հիւանդ եմ. բժշկեա զանձն իմ զի խռովեցան ոս-
կերք իմ։

Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու Տէր՝
մինչև յե՞րբ։

Դարձ Տէր և փրկեա զանձն իմ. կեցո
զիս Տէր վասն ողորմութեան քում։

Զի ո՛չ ոք է որ ՚ի մահու յիշէ զքեզ.
կամ ՚ի դժոխս խոստովան առնիցի առ
քեզ։

Վաստակեցայ ես ՚ի հեծութեան իմում.
լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ.
և արտասուօք իմովք զանկողինս իմ
թացի։

Խռովեցաւ ՚ի սրտմտութենէ ակն իմ.
և մաշեցայ ես ՚ի մէջ ամենայն թշնա-
մեաց իմոց։

Ի բաց կացէք յինէն ամենեքեան.
որք գործէք զանօրէնութիւն։

Լուաւ տէր ձայնի լալոյ իմոյ. լուաւ տէր աղօթից իմոց, և տէր զխնդրուածս իմ ընկալաւ։

Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ամ թշնամիք իմ. դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին։

Ո՜վ բազումողորմ՝ խնայեա՛ յարարածս քո հայր ամենակալ, և ողորմեա՛։ Որդի՛ն արդարութե՝ ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս ճշմարտութե, և ողորմեա՛։ Տո՛ւր մեզ տէ՛ր զխաղաղութիւն. և փրկեա՛ ի նեղչաց մերոց հո՛գիդ ճշմարտութե. և ողորմեա՛։ Ի նեղութե իմում օգնեա՛ ինձ տէ՛ր, որպէս երբեմն յովնանու, և ողորմեա՛։ Ի յանցանաց իմոց մաքրեա՛ զիս տէ՛ր, որպէս երբեմն զմաքսաւորն, և ողորմեա՛։ Ի նենգաւոր շրթանց փրկեա՛ զիս տէ՛ր, և յարենէ ապրեցո՛, և ողորմեա՛։

Ար

Մտանգիմ ՚ի բազմութենէ մեղաց ի֊
մոց։ Ա՛ծ խաղաղութեան օգնեա՛ ինձ։
Ալեկոծիմ հողմով անօրէնութեան իմոյ.
Թագաւոր խաղաղութեան օգնեա՛ ինձ։
՚Ի խորս մեղաց ծովու տարաբե֊
րեալ ծփիմ. նաւապետ բարի փրկեա՛
զիս։

Ծով կենցաղոյս հանապազ զիս ա֊
լեկոծէ։ Մրրկեալ ալիք թշնամին ինձ
յարուցանէ։ Նաւապետ բարի լեր
անձին իմոյ ապաւէն։

Մերձ եմ յընկղմիլ օգնեա՛ ինձ նա֊
ւապետ բարի. քանզի ծանրացան ՚ի
վերայ իմ բեռինք մեղաց։ Ա՛ծ յօգ֊
նել ինձ փութա՛. քանզի խորք չարեաց
ընկղմեն զիս յանդունդս. այլ դու նա֊
ւապետ՝ լեր և ինձ ձեռնտու։ Փրկեա՛
՚ի վտանգէ զնաւաբեկս ՚ի յալեաց ծո
վուս. քանզի կորնչիմ ՚ի մեղաց անօրէ
նութեան իմոյ։



Աղա

Աղաչեմ զքեզ տէր՝ պարգևեա ինձ ապաշխարութեամբ լուանալ զմեղս իմ և ողորմեա։ Զարտասուս իմ և զհառաչանս սրտի իմոյ՝ մարդասիրութեամբ քո ընկալ տէր և ողորմեա։ Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տէր. բարերարութեամբ քո խնայեա յիս և ողորմեա։

Երանելւոյն Յովհաննու Կառնեցւոյ աղօթք առ տէր։

Տէր տէր հայր՝ և Աստուած ած կենաց իմոյ՝ անկանիմ առաջի քո, և աղաչեմ զքեզ՝ հայեա՛ ի տառապանս ծառայիս քո, և խնայեա՛ ի մոլորեալ մեղօք անձն իմ։ Բժշկեա զանկեալս, և կանգնեա զգլորեալս։ Դիր սպեղանի խոցելոյ սրտիս, և պատեա զվէրս վիրաւորելոյս։ Վերականգնեա զիս, քանզի կորեայ և կործանեցայ բազում անօրէնութեամբ. և չարիք իմ բարձրացան



քան

քան զգլուխ իմ։ Տառապանք մեղաց պա_
տեցան զինեւ եօթնպատիկ , և սխա_
լանք իմ պաշարեցին զիս. և ոչ գոյ թիւ
անզգամութեան իմոյ։ Բեղ մեղաց փր_
կութիւն յաւիտենից. ոչ ունիմ վստա_
հութիւն կոչել զանուն աստուածոյ 'ի վեր
վսերիս։ Ամօթ երեսաց իմոց ծած_
կեաց զիս. և հարան զիս փուշք մե_
ղաց իմոց։

Աւաղ՝ տ՛ր իմ տ՛ր՝ առ ո՞ ապաւի_
նեցայց, և կամ զո՞ աղաչեցից ինձ յոյս
և ապաւէն փրկութեան իմոյ։ Բայց թէ_
պէտ և բազում անգամ բարկացուցի
զարարիչդ , սակայն առ քեզ կարդա_
ցից։ Մի՛ մոռանար 'ի դատաստան ընդ
ծառայիս քոյ՝ տ՛ր իմ. և մի հատուցաներ
ը՟ս գործոց իմոց՝ ա՟ծ իմ։ Մի՛ սրտմտութ՟բ
և սպառնալեօք սաստեր ինձ՝ տ՛ր իմ.
և մի՛ բարկութ՟բ ահաբեկեսցես զեղ_
կելիս՝ ա՟ծ իմ։ Մի՛ մոռանար զմեղու_
ցեալս

ցեալս ՚ի մորմոքումն յաւիտենից կայ-
ծականցն՝ տէ՛ր իմ. և մի՛ յուղարկեր
զողորմելիս յանողորմ տանջանսն՝ ա՛ծ իմ։
Մի՛ առաքեր զիս ՚ի խաւարն արտա-
քին՝ տ՛ր իմ. և մի՛ անկեայց աշխարհե-
լիս ՚ի գուբն ապականութե՝ ա՛ծ իմ։
Մի՛ որոշեսցես զիս յերամէ երանե-
լեացն՝ տ՛ր իմ. և մի՛ զրկեսցես զյան-
ցաւորս ՚ի հաղորդութենէ ընտրելոցն՝
ա՛ծ իմ։ Մի՛ զահագին զձայնն ձայ-
նեսցես առ իս՝ տ՛ր իմ. և մի՛ անուանես առ
ներ զդատապարտեալս ՚ի յաւիտենից օրհ
նութեց՝ ա՛ծ իմ։ Ըստ ողորմութե քում
յաւէտ ողորմեա՛ ինձ. և անհաս մար-
դասիրութեդ քում գթա՛ յիս։ Աղա-
չեմ զքեզ տ՛ր՝ ամենակար զօրութե քո
սրբեա՛ զիս զաղտեղեալս մեղօք. և ա-
զատարար իշխանութե քում ազատեա՛ զիս
՚ի դառն վշտաց գեհենոյն։ Տո՛ւր ինձ
տեղի լուսափայլ առագաստին. և դա-
սեա՛

սեա՛ զտարակուսեալս 'ի դասս իմաս-
տուն կուսանացն։ Տէ՛ր տ̃ր աղաչեմ
զքեզ՝ զխոստացեալ բարիսն ընդ ա̃մ
ընտրեալսն. զի ընդ նմին փառաւորե-
ցից զամենայն զերրորդութիւն զՀայր
եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին, այժմ եւ միշտ
եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։





## Ապաշխարութեան տաղք։

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն։

Հայր մեր որ յերկ՚։

Երանի՛ ում թողութիւն եղեւ մեղաց, եւ ծածկեցան ամ՟ յանցանք նորա։

Երանի՛ առն որում ոչ համարի տէր զմեղս նորա, եւ ոչ գոյ նենգութիւն ՚ի բերան նր՟։

Լռեցի ես եւ մաշեցան ամենայն ոսկերք իմ, առ աղաղակել իմն առ տէր զօրհանապազ ՚ի տուէ եւ ՚ի գիշերի։

Ծանրացաւ ձեռն քո ՚ի վր՟ իմ, դար-



ձայ

ձայ 'ի թշուառութիւն, զի հարան զիս փուշք։

Զմեղս իմ ցուցից քեզ, և զանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցից 'ի քէն։

Ասացի թէ պատմեցից ինձէն զմեղս իմ, և դու թողցես զամբարշտութիւնս մեղաց իմոց։

Վասն այսորիկ յաղօթս կացցեն առ քեզ ամենայն սուրբք, 'ի ժամ ընդունելի։

Բայց միայն 'ի ջուրցն հեղեղաց բազմաց, որք առ նոսա ինչ ոչ մերձեսցին։

Դու ես ապաւէն իմ 'ի նեղութենէ յայսմանէ, որ շուրջ եղեն զինև։

Ցնծութիւն իմ փրկեա՛ զիս յայնցանէ, ոյք պաշարեցին զիս։

Իմաստուն արարից զքեզ՝ և խելամուտ 'ի ճանապարհ յոր և գնասցես, և հաստատեցից 'ի վերայ քո զաչս իմ։

Մի՛ լինիք որպէս զձի և զջորի զի ոչ գոյ 'ի նոսա իմաստութիւն, 'ի սանձս և'ի



գան

դանդանաւանդս ձմլեսցես զկզակս նոցա,
որք առ քեզ ինչ ոչ մերձեսցին։
Բազում տանջանք են մեղաւորաց.
բայց որք յուսան ՚ի Տր՝ ողորմութի Տն
շուրջ ՚ զլեցի զնոքօք։
Ուրախ եղերուք և ցնծացէք ար-
դարք, ՚ի Տր պարծեցարուք ամէն որք
ուղիղ էք սրտիւք։

Տէ՛ր բազումողորմ խնամակալն իմ
առ քեզ ով զանազան որդին,
Թող ինձ զմեղս իմ և ողորմեա։ Տր
որ գթացար ՚ի կնկանն քանանացի, գթա
և յիս ՚ի մեղաւորս և ողորմեա։ Տր որ
դարձուցեր զմաքսաւորն ՚ի գիտութի
ճշմարտութե, դարձո և զիս զմոլորեալս
և ողորմեա։

Աղաչեմ զքեզ հայր երկնաւոր՝ մի
դարձուցաներ զերեսս քո յինէն՝ զի
նեղեալ եմ ես վաղվաղակի լուր ինձ
Տր։ Մոլորեալ անձն իմ անօրէնութե՝


մի

մի՛ կորուսաներ զիս Տէր Տէր անօրէնութե-
իմոյ՝ որ խնդրողդ ես մոլորեալ ոչխա-
րիս։ Ծանրացեալ մեղօք ընկղմի անձն
իմ, ընկալ զիս որպէս երբեմն զպետրոս՝
որ ծփմամբ ալէկոծեալ յանցանօք։

Մեղաք մինչև յերկինս, և զարդար
զցասումն քո շարժեցաք ՚ի մեզ. Տէր Տէր
մեծի քում ողորմութեանդ ողորմեա՛ մեզ։
Խզաք մինչ ՚ի դժոխս՝ ընկղմեալք յա-
նօրէնութեան մերում. Տէր յիշեա՛ զգինս
արեան որդւոյ քո և ողորմեա՛։ Հալա-
ծեա՛ ՚ի մէնջ Տէր նշանաւ խաչի քո զընդ-
դիմամարտ և զաներևոյթ դարանն. և
մի՛ տար յապականութիւն զքո ժառան-
գութիւնս։

Յոյս իմ ես դու Տէր քաւիչ յանցա-
նաց իմոց, մի՛ անտես առներ զզղջումն
արտասուաց իմոց. ողորմեա՛ ինձ Աստուած։
Առ քեզ ապաւինեցայ որպէս զանառակ
որդին, հայր մեղայ յերկինս և առաջի



քո

քո. ողորմեա ինձ Ա՟ծ. Փրկեա զիս Ա՟ծ ՚ի բազում մեղաց իմոց, արա՛ արժանի քո-յին ո՟ր արքայութե՟դ. ողորմեա ինձ Ա՟ծ. Ո՛չ մեղաց իմոց զիս ալեկոծէ. որ ես նաւապետ բարի՝ շնորհեա ինձ նաւահանգիստ հայր ամենակալ. Խորք պատուհանաց զիս կործանեն. այլ դու նաւապետ բարի՝ շնորհեա ինձ նաւահանգիստ հայր ամենակալ. Որ միայն իշխանդ ես թողուլ զմեղս. և ես աղաչեմ զքեզ տ՟ր՝ թո՛ղ ինձ զմեղս իմ հայր ամենակալ.

Խաւարեալ յանցանօք անձն իմ առ՝ քեզ տ՟ր համբարձի զաչս իմ. Թո՛ղ ինձ զմեղս իմ միայն բարեգութ, և ողորմեա ինձ Ա՟ծ ըստ մեծի ողորմութեան քում. Կործանեաց զիս չարագործ թշնամին, և կամի խոցել զիս որսալ. հայր բարեգութ բժշկեա զիս բաւորեալս, և ողորմեա ինձ Ա՟ծ ըստ

մե

մեծի ողորմութեան քում. Անդունդք մեղաց պաշարեցին զիս, զի բազում են քան զաւազ ծովու. առ քեզ տէր պաղատիմ փրկեա՛ 'ի վտանգէս. և ողորմեա՛ ինձ ա՛ծ՝ ըստ մեծի ողորմութեան քում.

Մաքսաւորն հառաչանօք 'ի տաճարին էառ զքաւութիւն. նոյնպէս ձայնիւն և ես գոչեմ, ողորմեա՛ ինձ ա՛ծ. Աւազակն աղաղակէր 'ի խաչին՝ յիշեա՛ զիս տ՛ր. նոյնպէս ձայնիւն և ես գոչեմ ողորմեա՛ ինձ ա՛ծ. Անառակ որդին աղերսանօք աղաչէր զքեզ՝ հա՛յր մեղայ յերկինս և առաջի քո. նոյնպէս ձայնիւն և ես գոչեմ, ողորմեա՛ ինձ ա՛ծ.

Անկանիմ առաջի քո և խնդրեմ զթողութի յանցանաց իմոց. մի՛ անտես առներ հա՛յր զաղաչանս իմ. Աղաղակեմ ընդ մաքսաւորին. և հեղում զարտասուս իմ առաջի քո ընդ պոռնկին. մի՛ անտես



առ

առներ հայր զաղաչանս իմ։ Յանե-
րեւոյթ թշնամւոյն պարտեցայ. և՚ի դառ-
նի նետից բանսարկուին վիրաւորե-
ցայ. մի՛ անտես առներ հայր զաղա-
չանս իմ։

Մ՛եղուցեալ անձամբ կարդամ առ
քեզ հայր երկնաւոր, օգնեա՛ ինձ ՚ի
նեղութ̃եաս. որ մեղօքս եմ մեռեալ
օգնեա՛ ինձ։ Վ՛իրաւորեցայ ես յանե-
րեւոյթ թշնամւոյն. բժշկիչ հիւանդաց
բժշկեա՛ զիմ զհիւանդութ̃իս. որ մե-
ղօքս եմ մեռեալ օգնեա՛ ինձ։ Մ՛ոլո-
րեցայ ես ոպ̃ զոչխար կորուս̃ել. խնդ-
րող գերելոց խնդրեա՛ զիս զմոլոր̃ելս.
որ մեղօքս եմ մեռ̃ել օգնեա՛ ինձ։

Նորին երանելւոյ Յովհաննու գառնե-
ցւոյ աղօթք առ հայրն երկնաւոր։

Պ՛արգեւիչ բարեաց ած̃՝ գթա՛ ՚ի վշտա-
ցեալս. ողորմեա՛ անկելոյս ա-
ռաջի քո. պատեա՛ զվէրս իմ. բժշկեա՛
զհի

պչրանդութիւն իմ · սրբեա՛ զաղտե-ղութիւն իմ · նորոգեա՛ զհնացեալս · լու-սաւորեա՛ զխաւարեալս։ Ամենազօրդ և ողորմած, քա՛ղցր և բարերար, մար-դասէ՛ր և ամենախնամ, երկրպագեալդ և անյիշաչար՝ գիտես ամենեքին զի անօ-թալի՛ց եմ · և ո՛չ ունիմ համար զմե-ղացս՝ որ շուրջ պատեցան զինև յոյժ զէութիւն, մեղանչելով և վարանելով ՚ի հոգս և ՚ի ծուլին՝ ՚ի զբաղանս և ՚ի դատարկութեան՝ և յոյժ աղգի աղգի միտս։

Ամ ապաւինիմ ՚ի քո անձառ գթու-թիւնդ, և աղերսեմ, և ողբերգա-կան ձայնիւ գոչեմ, և խնդրեմ զողոր-մութի և զանյիշաչարութի ՚ի բարերա-րեդ · ամ՛ անբաւութի խորոց կամաց ան-հասից, ներեա՛ և մարդասիրեա՛, և սահ-մանեա՛ ապաշխարութե տեղի։ Ողորմեա՛ մարդասէր՝ կուրացել հոգւոյս, և շնոր-հեա՛

հեա՛ յինէ ՚ի վեր հայիլ թախանձագին։ Բաղցր ակամբ հայեցիս ողորմած ա̃ծ, քանզի ՚ի զանազան և ՚ի բազմօրինակ մեղաց անկեալ և լուծեալ կամ, և ակնարկեմ դողմամբ սրտիս, ո՛չ ունելով զոք կարեկից։

Ճարտարապետ քաղցր բժշկի՛ հրամայեա՛ հաստատիլ անդամոց իմոց. զի անբուժ է զթուլթիւն ա̃ծայինն սիրոյդ։ Ողորմեա՛ ողորմութեա՛ց աղբիւր, և ներեա՛ յանցս երկայնամիտ. թո՛ղ՝ որ առատդ ես ՚ի պարգևել. սրբեա՛ զմեղս և զհարուածս խոցելոյս՝ որ սրբութի̃դ ես գերակատար. ջնջեա՛ զյանցանս իմ և զաղաղանս՝ որ ամենակարողդ ես. առողջացո՛ զբազմամեղ հիւանդութի̃ հոգւոյս, որ իշխանդ ես կենաց և մահու. որ ՚ի բարձրութիւն երկնից նստիս, կանգնեա՛ զիս ՚ի գլորմանէ մեղաց, որով գայթակղեցայ ընդ սնոտի կենցաղս։

Առատատուագոյն ողբերգութե՟ և կո-
րացեալ պարանոցաւ հեղում առաջի
անոխակալ բարերարիդ զթշուառացեալ
մեղաւորութեան մարմինս, որով ոչ զան-
գիտեցի 'ի հրամանաց քոց: Աղաչեմ՝
արա առ իս ըստ ողորմութե՟դ՝ 'ի նեղիլ
սրտիս և 'ի հեղձամղձուկ լինիլ մտացս,
զի ոչ ժուժեմ վշտիս: Խնդրեմ՝ պա-
ղատիմ՝ հայցեմ՝ առաջի անկանիմ՝ ա-
ղերսեմ՝ զղջանիմ, թող տ՟ր. գթա տ՟ր.
խնայեա տ՟ր. ներեա տ՟ր. քաւեա տ՟ր.
փրկեա տ՟ր. օգնեա տ՟ր. պահեա տ՟ր.
ամրացո տ՟ր: Նորոգացո աղաչեմ. զօրա-
ցո յոյս իմ. ապրեցո տ՟ծ իմ. արժանա-
ցո տ՟ր իմ. զերծո 'ի պատժոց դատաւոր
իմ. պարգևեա տ՟ր. հաստատեա տ՟ր յեր-
կիւղ քո և 'ի սէր. առաջնորդեա 'ի
պատուիրանս քո. նաւավարեա 'ի ծովու
աշխարհի:

Տարակուսեցայ 'ի ցնորմանց. գայթակ

զեղծայ 'ի պէս պէս սնոտիս. մոլորեցայ 'ի ճանապարհէ. խոտորեցայ 'ի ուղիղ շաւղաց. անկայ և գլորեցայ: Արդ այժմ հաւատով և յուսով առ արարիչդ ապաւինեցայ. ողորմեա՛ տէր. յարո՛ և կոչեա՛ առ քեզ: Զի քեզ փառք ընդ որդւոյ և սուրբ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:



## Ապաշխարութեան սաղմոսք։

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ամէն։

Հայր մեր որ յերկ՚՚։

Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի բարկութեամբ քով խրատեր զիս։

Զի նետք քո հարան յիս, և յիս հաստատեցաւ ձեռն քո։

Ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ, յերեսաց բարկութեան քո։

Ոչ է խաղաղութիւն ոսկերաց իմոց, յերեսաց մեղաց իմոց։



Զի

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան
զգլուխ իմ, որպէս բեռն ծանր ծանրա-
ցան 'ի վերայ իմ։
Նեխեցան և փտեցան վէրք իմ, յե-
րեսաց անզգամութեան իմոյ։
Տառապեցայ և խոնարհ եղէ մինչև
յոյժ. զօրհանապազ տրտում գնայի,
զի անձն իմ լի եղև չարչարանօք. և
ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ։
Չարչարեցայ և խոնարհ եղէ մինչև
յոյժ, մռնչէի առ հեծութեան սր-
տի իմոյ։
Տէր առաջի քո է ամենայն ցանկութիւն իմ,
և հեծութիւն իմ 'ի քէն ոչ ծածկեցաւ։
Սիրտ իմ խռովեցաւ յիս, և եթող
զիս զօրութիւն իմ. լոյս աչաց իմոց,
և այս ոչ եղև ընդ իս։
Բարեկամք իմ և մերձաւորք իմ ա-
ռաջի իմ մերձեցան և կացին, և մեր-
ձաւորք իմ հեռի եղեն յինէն։

Բռնադատէին զիս և խնդրէին զանձն իմ, որք խորհէին չար 'ի վերայ իմ, խորհեցան զանօրէնութիւն և զնենգութիւն զօրհանապազ խորհեցան։

Այլ ես որպէս խուլ զի ոչ լսէ, որպէս համր որ ոչ բանայ զբերան իւր։

Եղէ ես որպէս մարդ որ ոչ լսէ, և ոչ գոն խօսք 'ի բերան նորա։

Զի 'ի քեզ Տէր յուսացայ, և դու լուիցես ինձ Տէր Աստուած իմ։

Ասացի թէ մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ, 'ի սասանել ոտից իմոց 'ի վերայ իմ մեծամեծս խօսեցան։

Զի 'ի տանջանս պատրաստ եմ, և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Զանօրէնութիւնս իմ պատմեցից, և հոգացայց վասն մեղաց իմոց։

Իսկ արդ թշնամիք իմ կենդանի են, և զօրացեալք են քան զիս, և բազմացեալք էին որք ատէին զիս 'ի տարապարտուց։

Ոյք հատուցին ինձ չար փոխանակ բարւոյ, չարախօսէին զինէն զի ես երթայի զհետ արդարութե։

Մի՛ թողուր զիս տէր աստուած իմ, և մի՛ ի բացեայ առնիր յինէն, հայեաց յօգնել ինձ տէր փրկութե իմոյ։

Ողջման իմոյ զարտասուս արկանեմ առաջի քո քրիստոս, թող ինձ զմեղս իմ որպէս երբեմն զպոռնկին, որ միայնդ ես բազմագութ։ Ծնկանիմ առաջի քո քրիստոս, որ հովիւդ ես բանաւոր հօտի, խնդրեմ և զիս զմոլորեալս, որ միայնդ ես բազմագութ։ Զմեղս իմ ցուցից քեզ քրիստոս, որ բժիշկդ ես հոգւոց և տէր կենաց, բժշկեա և զիմ զհիւանդութիս, որ միայնդ բազմագութ։

Պարծա՛ զցաւումն քո ի մէնջ յաղաղակեմ հոգեղինացս, բազմագութ տէր խնայեա և մի՛ կորուսաներ։ Կանգնեա



զան

զանձկեալս 'ի գլորմանէ զկերպարանեալս 'ի թշնամւոյն, որ բժիշկդ ես հիւանդաց բժշկեա՛ զիմ զհիւանդութիւնս։ 'Ի յանցանաց իմոց թախծեալ անձն իմ դոչեմ որպէս զմաքսաւորն, տ՛ծ քաւեա՛ զիս զմեղաւորս։

Մ՝եղայ տ՛ր բազումողորմ ա՛ծ, մեղայ ողորմեա՛։ Մ՝եղայ տ՛ր և անկանիմ առաջի քո, մեղայ ողորմեա՛։ Մ՝եղայ տ՛ր խոստովանիմ զյանցանս իմ, մեղայ ողորմեա՛։

Ողորմեա՛ ինձ տ՛ծ իմ ողորմեա՛ ինձ, զի անպատասխանի եմ յամենայնի թո՛ղ ինձ տէ՛ր։ Ճ՛անապարհք քո ուղիղ են, ես միայն մոլորեցայ, դարձո՛ զիս և ողորմեա՛ ինձ տ՛ծ։ Պ՝ատուիրանք քո արդար են, ես միայն եմ մեղուցեալ, քաւեա՛ զիս, և ողորմեա՛ ինձ տ՛ծ։

Բ՝ազում են քո գթութիւնք բազմա-



մեղ

մեղ անձին իմոյ, ողորմեա՛ ա՛ծ քաւիչ
իմ։ Օ՜ է քեզ անյիշաչար տէր մեղայ
չարին խաբեմամբ. ողորմեա՛ ա՛ծ քաւիչ
իմ։ Դի քո 'ի միւսանգամ գալստեանն
յորժամ գաս դատել զերկիր, ողոր-
մեա՛ ա՛ծ քաւիչ իմ։

Տէ՛ր զլուր քո միւսանգամ գալըս-
տեանդ լուա՛յ և երկեայ. զի ուսայ 'ի
սրբոց պատուիրանացն եթէ գաս դա
'ի դատել զերկիր։ Տէ՛ր յիշեցի զչար
զգործս իմ և զարհուրեցայ. զի ծա-
նեայ Ճշմարտութե՛ զահաւոր և զանա-
չառ զքո դատաստանդ։ Տէ՛ր յիշեցի
և զգութ արարչական սիրոյ քո առ քո
արարածս. և 'ի քո գթութիւնդ ապա-
ւինեալ աղաչեմ, ողորմեա՛ ինձ յա-
ւուր յայնմիկ ք՛ս արդար դատաւոր։

Մերձեալ է օր գալըստ քո տէ՛ր, լո՛ւր
ձայնի աղօթից իմոց որ կարդամս առ
քեզ և ողորմեա։ Բանից իմոց. ունկն



դիր

դիր տ̄ր․ն՚ի միտ առ զաղաչանս իմ զա-
ռաւօտուն՝ որ կարդամ առ քեզ և ո-
ղորմեա։ Որ ընկղմեալս եմ ՚ի խորս
չարեաց․ տ̄ր զհոգիդ քո առաքեա ա-
ռիս՝ որ կարդամ առ քեզ և ողորմեա։

## Նորին երանելւոյ Յովհաննու Գառնե-ցւոյ աղօթք առ որդին Փածին։

Ամենակալ տէր՝ արարիչ և ստեղծիչ
համայնից, երևելեաց և անե-
րևութից․ և դու ես իշխան մահու և
կենաց․ որ խոստացար արդարոց զհան-
գիստն յաւիտենական, և մեղաւորացն
զպատիժն մշտնջենաւոր․ և ես կամակ
ցութ̄ մարդասպան պղծոյն՝ մոռացայ
զբարի խոստումն պարգևի քո, և հե-
տևեցայ զհետ կորստեան շաւղաց նր̄․
մինչ կարող էի գործելոյ զբարին, ան-
փոյթ արարի։ Նաև յորժամ յանկարծա-
կի եկեալ հրաւիրակ՝ յանձնառել զհո-


գիս

զիս 'ի մարմնոյս, և գտանէ զիս 'ի մէջ անօրէն և եղեռնական գործոց. յորժամ ոչ ունիմ հնար զերծանելոյ, և զբարիս գործելոյ. և առ այս եղկելիս ոչ գիտեմ զի՞նչ արարից։ Երկնչիմ 'ի մահուանէ՝ զի դառն է. դողամ 'ի դեհենէն՝ զի անշէջ է. սարսափիմ 'ի տարտարոսէն՝ զի ցրտագին է. ահաբեկիմ 'ի խաւարէն՝ զի ոչ ունի զճաճանչ լուսոյ. զարհուրիմ 'ի յորդանցն՝ զի անքուն են. սոսկամ 'ի հրեշտակաց՝ զի անողորմ են. սարսիմ 'ի դատաւորէն՝ զի անաչառ է։

Այլ է ինձ որ զտաճարս քո ապականեցի, և զհոգի քո սբ տրտմեցուցի. և արդ վն առժամայն մեղացս վայելման՝ անմահ չարչարիմ. վն հեղութե մարմնոյս՝ 'ի հուրն անշէջ այրիմ. արդար դատաստանքն քո ուսուցանէին զիս, և ես ոչ հնազանդէի։



Ար

Մարդասէր տէր՝ զգլխս մր. որեան քո՛
մի՛ անուանս առներ. վս՛ բարեխօսութե
մր. ածածնի ծնողի քո՝ և ամ ընտրե-
լոց քոց Թո՛ղ ինձ զյանցանս իմ։ Եւ
քեզ վայելէ փառք իշխանութի և պա
տիւ, այժմ և միշտ և յաւիտնս. ամէն։



Ռանչին զմաքրէ ցելոցն ջրով զոտս լու̃ա
նայր, զի զխոնարհութ̃ին ի նմ̃ տպաւո-
րեսցէ, երկրորդութ̃են զոր օթեվան։

Չորեքշաբթի առաւօտ։

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն
Սրբոյ․ ամէն։

Հայր մեր որ յեր՛՛։

Ողորմեա՛ ինձ ա՟ծ ըստ մեծի ողորմու-
թեան քում, ըստ բազում գթուե՟
քում քաւեա՛ զանօրէնութի՟ս իմ։
Առաւել լուա՛ զիս յանօրէնուէ՟ իմմէ,
և ի մեղաց իմոց ս՟բ արա զիս։
Զանօրէնուի՟ս իմ ես ինձէն գիտեմ,
և մեղք իմ առաջի իմ են յա՟մ ժամ։
Քեզ միայն մեղայ տ՟ր, և չար առաջի
քո արարի։

Ո՜վ արդար երեւեսցիս ՚ի բանս քո, եւ յաղթող ՚ի դատել դատս։

Անօրէնութեամբ յղացայ, եւ ՚ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս եւ զծածկեալս իմաստութեան քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա յիս մշտկաւ, եւ սուրբ եղէց, լուա եւ քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի՛ արա ինձ զցնծութիւն եւ զուրախութիւն, եւ ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո՛ զերեսս քո ՚ի մեղաց իմոց, եւ զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն։

Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած, եւ հոգի ուղիղ նորոգեա ՚ի փորս իմում։

Մի՛ ընկենուր զիս տէր յերեսաց քոց, եւ զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Տուր ինձ ցնծութիւն փրկութեան քոյ, եւ հոգւով պետութեան քոյ հաստատեա զիս։



Ու–

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո,
և ամպարիշտք առ քեզ դարձցին։
Փրկեա՛ զիս յարենէ ա՟ծ ա՟ծ փրկու-
թեան իմոյ, ցնծասցէ լեզու իմ յար-
դարութե՟ն քում։
Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բե-
րան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։
Թէ կամեցեալ էիր պատարագս մա-
տուցանէաք, բայց դու ընդ ողջակէզս
իսկ ոչ հաճեցար։
Պատարագ ա՟յ հոգի խոնարհ, զսիրտ
ս՟բ և զհոգի խոնարհ ա՟ծ ոչ արհա-
մարհէ։
Բարի՛ արա տէր կամօք քովք սիոնի,
և շինեսցին պարիսպքն Երուսաղէմի։
Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս
արդարութե՟ն, յայնժամ ուխտից պա-
տարագս հանցեն 'ի սեղան քո զուա-
րակս։



Օ

Զանապական զհոգեւոր զգանձն յա
պականացու կենցաղս ծախեցի․
այլ առ քեզ միայն պաղատիմ բարե-
րար փրկիչ խնայեա՛ ի մեղուցեալ ծա-
ռայս։ Զցանկ հոգւոյ իմոյ քակտեցի
և եղէ անպարսպանակ որթ․ այլ առ քեզ
միայն պաղատիմ բարերար փրկիչ խը-
նայեա՛ ի մեղուցեալ ծառայս։ Ոստա-
քանց եղէ ես ոպ՟ զարմաւենի, պտղա-
կորոյս որպէս ձիթենի․ այլ անյիշաչար
և անոխակալ փրկիչ խնայեա՛ ի մեղու-
ցեալ ծառայս։
Ք՟ս ա՟ծ աստուծոյ ողորմեա՛։ Նո-
րէնութե՟ ի մեղս երկնեաց զիս մայր
իմ․ աղաչեմ փրկիչ ողորմեա՛։ Վիրա-
ւորեալ մեղօք անկանիմ առ քեզ փը-
կիչ, մի՛ անտես առներ ողորմեա՛։
Համբառնամ առ քեզ տ՟ր զաչս իմ․
նայեաց յիս գթութե՟ք քո և ողորմեա՛։
Դու ես յոյս և ապաւէն իմ․ զերծո՛ զիս



յո

յորդայթէ մեղաց և ողորմեա՛։ Սր-
բեցուցիչ իմ և փրկիչ իմ՝ ապրեցո՛ զիս
յորդայթէ մեղաց և ողորմեա՛։

Մ՝եղայ քեզ տէր քաւեա՛ զիս։ Մ՝ե-
ղաք անօրինեցաք ամենեքեան, ո՛չ պա-
հեցաք զպատուիրանս քո. մեղայ քեզ
տ՛էր քաւեա՛ զիս։ Գ՝արձիր տէր՝ի բար-
կութէ՛ քումմէ, անցո՛ 'ի մէնջ զցա-
սումն քո. մեղայ քեզ տ՛էր քաւեա՛ զիս։
Որ զաղաղակ կնոջն այլազգւոյ առըն-
կալար փրկիչ մարդասիրապէս. և զիմս
ապաշխարութեն արա՛ արժանի զձայն
մեղուցելոյս ընդունող։ Որ հառաչ-
մանց ձայնի աղախնոյն ո՛չ լռեցեր փր-
կիչ ընդունակ մեղաւորաց. և զիմս ա-
պաշխարութեն արա՛ արժանի զձայն մե-
ղուցելոյս ընդունող։ Որ զառաջնա-
պարգևի քո նշխար ո՛չ խնայեցեր ըն-
ձեռել շանց հալածականի. և զիմս ա-
պաշխարութեն արա՛ արժանի զձայն մե-

ղուցելոյս ընդունող.

Անկանիմ առաջի քո, և խնդրեմ զթողութիւն յանցանաց իմոց, մի՛ անտես առներ հայր զաղաչանս իմ։ Աղաղակեմ ո՛վ մաքսաւորն, և հեծութեամբ զարտասուս իմ առաջի քո ո՛վ պոռնիկն, մի՛ անտես առներ հայր զաղաչանս իմ։ Յաներևոյթ թշնամւոյն պարտեցայ, և ՚ի գաղտնիս նետից բանսարկուին վիրաւորեցայ, մի՛ անտես առներ հայր զաղաչանս իմ։

Նորին երանելւոյ Յովհաննու Գառնեցւոյ աղօթք առ որդին Ածծին։

Ո՛վ որ անեղդ ես և անսահմանդ՝ և արարիչ ամ արարածոց. որ ոչ երկինք բաւեն զքեզ գիտել, և ոչ երկիրս զողորմութիւն քո. քանզի ՚ի վեր ես քան զերկինս, և անդր քան զծագս տիեզերաց. և ամ երևելիք և աներևոյթք քեզ են հնազանդեալ. և քոյին հրամանաւդ կառավարին ամ արարածք։



Դու

Զոր աղքատացուցանեն՝ և զոր մե֊
ծացուցանես․ հրկիզանես՝ և զոր բժշկես․
զոր ես սխալիչ վշտացելոց ՚ի սովնայս,
և ողջացուցիչ հիւանդացելոց մեղօք։
Խոնարհեցո տէր զունկն քո և լուր
ինձ։ Տէր տէր զտառապանս իմ՝ որ
Թագաւորդ ես փառաց, զի կարի վի֊
րաւորեալ եմ մեղօք, և ցաւագնեալ
անօրէնութբ․ ժահահոտեալ եմ հո֊
գւովս, և աղտեղեալ մարմնովս․ զազ֊
րեալ, և ամօթալի երեսօք եմ առաջի
ամենատես աչացդ։ Եւ արդ դու տր՝
քաղցր և ողորմած վս մեղաւորաց
կոչեցար, ով և ասացեր՝ թէ ՚ի դառ֊
նալ անօրինին ոչ ևս յիշեցից զմ ա֊
նօրէնութիւնս նր զոր արար։
Արդ՝ աչօք առաջի քոյ անկեալ աղա֊
չեմ՝ և խնդրեմ ժամեցով, մի՛ յիշեր
զմեղս իմ բազում, և մի՛ զանօրէնու֊
թիւնս իմ յանդիմաներ․ թէ կամիս
և

և թէ ակամայ. թէ գիտութբ և թէ
անգիտութբ. եթէ բանիւ և եթէ գոր
ծով՝ որովք մեղայ քեզ. զի դու տէր
ողո՛րմ ես գթալ և թողուլ զմեղս բա
զում։

Դու բարերար տէ՛ր՝ յագեցո՛ զքաղ-
ցեալս, և լցո՛ զծարաւեալս յառատա-
բուղխ շնորհեդ. զի ցանկամ մերձե-
նալ ՚ի շնորհս ողորմութե քո, և բաղ-
ձամ հայցել յարածամ ՚ի քեզ. միշտ շը-
նորհաց քոց փափագիմ, և հանապազ
ողորմութեց քոց կարօտիմ։ Մի՛ ընդ-
պատժապարտս պատժեր, և մի՛ ընդ-
դատապարտելոյս դատեր. այլ ըստ կա-
մարարն կամաց քոց ընկա՛լ, և ընդ պա-
հօղն պատուիրանաց քոց պատուեա՛։
Ո՜վ թէ առանց ներելոյ պղծնցանս
իմ քննես, ընդունայն է ինձ յարութ
խոստումն. զի հուր գեհենին է ժա-
ռանգութիւն իմ։ Այլ նայեա՛ց տէր ՚ի

մաղթանս իմ և՚ի պաղատանս․ և մի՛
մերժեր զիս յողորմութե՟ քումմէ․ լուա՛
զիս ՚ի մեղաց, և մաքրեա՛ յաղտից անօ_
րէնութե՟ իմոյ․ քաւեա՛ ըստ զմաքսաւորն,
և արդարացո՛ ըստ զպոռնիկն․ ողորմեա՛
ինձ ըստ քանանացւոյն․ և շնորհեա՛ ինձ
թողութի՟ որպէս աւազակին․ և ըստ ան_
ճառ մարդասիրութե՟ քում ընկալ զտա_
րագրեալս, և մո՛յծ յառագաստն լուսոյ
երկնաւոր հանգստարանիւքն․ և բնակեցո՛ զիս
՚ի դասս սրբոց քոց, և՚ի խորանս սրբո_
ղաց անուանց քոց․ և քեզ փառք և գո_
հութի՟ յաւիտեանս յաւիտենից․ ամէն։



### Հինգերորդ սաղմոս։

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ամէն։

Հա՛յր մեր որ յեր՛՛։

Տ՟ր լո՛ւր աղօթից իմոց աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն։

Յաւուր նեղութ՟ե իմոյ խոնարհեցո՛ զունկն քո. յորում աւուր կարդամ առ քեզ վաղվաղակի լո՛ւր ինձ։

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խուիծ չորացան։

Հարայ ես որպէս խոտ և ցամաքեցաւ սիրտ իմ, մոռացայ ուտել զհաց իմ ՚ի



ձայնէ

Ձայնէ հեծութեան իմոյ.

Կցեցաւ ոսկր իմ 'ի մարմին իմ, նմա-
նեցայ ես հաւալուսան յանապատի.

Եղէ ես ոպ՟ բու յաւերակի, տքնեցայ
և եղէ ես ոպ՟ ճնճղուկ միայն 'ի տա-
նիս.

Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհա-
նապազ, և գովիչք իմ ինև երդնուին.

Զի մոխիր ոպ՟ զհաց կերի, և զըմպելին
իմ արտասուօք խառնեցի.

Յերեսաց բարկութեան սրտմտութ՟ քո,
զի դու բարձրացուցեր և խոնարհե-
ցուցեր զիս.

Աւուրք իմ ոպ՟ հովանի անցին, և ես
ոպ՟ խոտ ցամաքեցայ.

Դու տ՟ր յաւիտեան կաս, և յիշատակ
քո ազգէ մինչև յազգ.

Դու յարուցեալ գթասցիս 'ի վ՟ր սիո-
նի, ժամանակ գթալոյ նորա հասեալ
է ժամ.

Հաճեցան ծառայք քո ընդ քարինս
նր, եւ 'ի հողս նր գթասցին։
Երկիցեն հեթանոսք յանուանէ քում
մէ, եւ ամ թագաւորք երկրի 'ի փա
ռաց քոց։
Շինէ Տր զսիոն, եւ երեւեսցի փառօք
իւրովք 'ի նմա։
Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց, եւ
ոչ արհամարհեաց զխնդրուածս նց։
Գրեսցի այս յազգ յայլ, ժողովուրդ
զոր ստացեալ է օրհնեսցէ զՏր։
Հայեցաւ նա 'ի բարձանց 'ի սրբութենէ
իւրմէ, Տր յերկնից յերկիր հայեցաւ։
Լսել զհեծութիւն կապելոց, եւ արձա
կել զորդիս մահապարտաց։
Պատմել 'ի սիոն զանուն Տն, եւ զօրհ
նութիս նր յեմ։
Ժողովել ժողովրդոց 'ի միասին, եւ թա
գաւորաց ծառայել Տն։
Պատասխանի ետ նմա 'ի ճանապարհի


զօ

զօրութեան իւրոյ․ զնուազութիւն աւուրց իմոց պատմեա ինձ, և մի հաներ զիս ՚ի կէս աւուրց իմոց, զի յազգէ յազգ են ամք քո։

Իսկզբանէ տէր զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են։

Նոքա անցանեն, և դու կաս և մնաս յաւիտեան։

Ամենեքեան որպէս զհանդերձ մաշեսցին․ և որպէս զվերարկու փոխեսցես զնոսա և փոխեսցին։

Բայց դու նոյն ինքն ես, և ամք քո ոչ անցանեն․ որդիք ծառայից քոց բնակեսցին ՚ի նմա, և զաւակի նոցա յաւիտեան յաջողեսցի։

Ողորմեա ինձ քո ողորմութեամբդ քո մեծաւ, զի կարօտ եմ ես շնորհի քո և ողորմութեանդ․ ողորմեա և լուր ինձ բազմամեղիս։ Լո՛ւր տէր ձայնի ող-



բա

բաղդս և ցաւագին պաղատանացս, որ
անձնթուլ կամ առաջի քո իմ չարաչար
վարուքս․ ողորմեա և լուր ինձ բազմա
մեղիս։ Ընկալ տէր զաղաչանս իմ և
զհառաչանս սրտի իմոյ, որ աղաղակեմ
ըստ կնոջն քանանացի․ ողորմեա և լուր
ինձ բազմամեղիս։

Ք̃ս ա̃ծ յոյս ապաշխարողաց շնոր-
հեա զթողութիւն բազում յանցանաց
իմոց։ Առ քեզ բազմագութ ապաւի-
նեալ կարդամք, մի՛ մերժեր զմեզ յո-
ղորմութենէ քումմէ։ Որպէս զաւա-
զակն աղաղակեմ առ քեզ, փրկեա և
զիս տ̃ր ՚ի քում յարքայութեան։

Ըզմեղս իմ խոստովանիմ առ քեզ
քո, որ միայնդ ես բազմագութ թո-
ղութեան, ողորմեա ինձ ա̃ծ։ Դու տէր
որ ճշմարտութեանց ես սիրող, և քննես
զծածուկս գաղտնեաց սրտի իմոյ, ո-
ղորմեա ինձ ա̃ծ։ Տո՛ւր ինձ ցնծութիւն



փրկ

փրկութ՟ե, և հզօրով տէրութեդ քո հաստատեա զիս, և ողորմեա ինձ ա՟ծ։
Ալիք յանցանաց զիս ալէկոծեն, և մեղք իմ բազում զիս յանդիմանեն։
Արդ զի՛նչ արարից մեղուցեալ ան-ձամբս, որ չեմ ապրելոց յահագին հրոյն։
Մեղայ քեզ քո՛ որդի ա՟յ՝ շնորհեա զթողութ՟ի բազում յանցանաց իմոց։
Տէր որ ՚ի մէջ լերինն աղբերացու-ցեր զջուրս ՚ի վիմէն։ Տէր ՚ի սրտէ իմմէ հա՛ն ինձ արտասուս ապաշխա-րութ՟ե։ Զի կեցից և ապաշխարութ՟ե արժեցայց ՚ի հանդերձեալ քոց դա-տաստանաց։
Մեղայ քեզ տ՟ր քաւեա զիս, և ողոր-մեա ինձ ա՟ծ։ Ոչխար եմ բանաւոր հօտի քո՝ և առ քեզ ապաւինիմ, հո՛-վիւ բարի խնդրեա զիս զմոլորեալս, և ողորմեա ինձ ա՟ծ։ ՚Ի ծովու մեղաց ալէկոծեալ եմ՝ և առ քեզ աղաղակեմ,


Նա

նաւապետ բարի փրկեա զիս 'ի վտան-
գէս, և ողորմեա ինձ տ՛ծ։

## Նորին երանելւոյ Յովհաննու Դամասկա- ցւոյ աղօթք առ որդին Ծածին։

Ո՛վ 'ի լուսոյ քո տէր՝ որ լուսով ո- ղորմութեան քոյ լուսաւորեցեր զարարածս քո, հալածեա զխաւար մե- ղաց և զանգիտութիւն իմոյ։ Որ զաւա- զակն միով բանիւ սրբեցեր 'ի մեղաց, և զարմլբէծափակ դուռն դրախտին բա- ցեր նմա։ Նա արդ՝ առաւել իմ զա- ղօթս աղաչանաց նորա, կարդամ առ քեզ։ Յիշեա և զիս տէր յորժամ գաս արքայութեամբ քով։ Բաց ինձ զդուռն ողորմութեան քոյ մտանել 'ի հանգիստն յաւիտենից, և ընդ ամ սրբս փառաւո- րել զամենազօր տէրութիւն, յաւի- տեանս յաւիտենից. ամէն։

************



## Ուրբաթու աւուր։

Յանուն հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ. ամէն։

Հայր մեր որ յեր՛՛։

՚Ի խորոց կարդացի առ քեզ տէր, տէր լուր ձայնի իմում։

Եղիցին ականջք քո ՚ի լուր ձայնի աղօթից իմոց։

Եթէ զանօրէնութիւնս իմ քննեսցես տէր տէր, իսկ ո կարէ կալ առաջի քո, զի ՚ի քէն է քաւութիւն։

Վասն անուան քո համբերի տր, համբերեր անձն իմ բանի քում, յուսացաւ անձն իմ ՚ի տր։

 Ի

Ի պահէ առաւօտու մինչեւ յերեկոյ, 'ի պահէ առաւօտու յուսասցէ Իսրայէլ 'ի Տէր։

Ի Տեառնէ է ողորմութիւն բազում, 'ի նմա նէ է փրկութիւն, եւ նա փրկեսցէ զԻսրայէլ յամենայն նեղութեանց նորա։

Բազում են քո գթութիւնքդ բազմամեղ անձին իմոյ, ողորմեա՛ Աստուած քաւիչ իմ։ Օ՛ ի քեզ անյիշաչար տէր մեղայ չարէն խաբմամբ, ողորմեա՛ Աստուած քաւիչ իմ։ Ի քո 'ի միւսանգամ գալստեանն յորժամ գաս դատել զերկիր, ողորմեա՛ Աստուած քաւիչ իմ։

Տէր մարդասէր որ զմաքսաւորն արդարացուցեր, քաւեա՛ զիս զմեղաւորս։ Որ քղանցիւ հանդերձի քո զմերձեցեալն 'ի քեզ բժշկեցեր, քաւեա՛ զիս զմեղաւորս։ Որ բանիւ հրամանի քո զանդամալոյծն առողջացուցեր, քաւեա՛ զիս զմեղաւորս։

Յամենայն ժամ աղաչանք իմ այս են, 'ի մեղաց իմոց տէր ազատ զիս տէր։ Յանցանաց իմոց զարհուրի սիրտ իմ, աղաչեմ զքեզ թող ինձ տէր։ Պարտաւորաց իմոց մի՛ լսեր տէր, զի պանդուխտ եմ ես յանցաւոր երկրի։

Զարհուրեալ դողացաւ ամենամեղ անձն իմ յահեղ քոյ դատաստանաց յանհնարելի տանջանացն։ Քանզի կամաւ մերձեցայ 'ի մեղս մեծամեծս, արդ կայ և մնայ ինձ անհնարելի պատուհասն։ Արդ անկեալ աղաչեմ փրկիչ և բարերար, խնայեա՛ յիս 'ի մեղուցելս, և ողորմեա՛ ինձ բազմամեղիս։ Ամենակալ քաւեա՛ զմեղս իմ, զի ա՟ծ ես ապաշխարողաց։ Դու զհոգիդ տէր մի՛ հաներ յինէն, զի ա՟ծ ես ապաշխարողաց։ Դու փրկեա՛ զիս յահագին հրոյն, զի ա՟ծ ես ապաշխարողաց։ Եկեսցէ տէր 'ի վերայ մեր ողորմութի

քո, և բան փրկութեան քո պահեսցէ զանձինս մեր 'ի մեղաց։ Ողորմութիւն քո և Ճշմարտութիւն քո և լոյս երեսաց քոց առաջնորդեսցէ մեզ 'ի յարդարութիւն։ Որ ողորմած ես գթած և երկայնամիտ, տէր ընկալ զաղաչանս մեր բարեխօսութեամբ սրբոյ աստուածածնին։

Նորին երանելւոյ Յովհաննու գառնեցւոյ աղօթք առ սուրբն Որդին։

Որդի աստուծոյ աստուած Ճշմարիտ, որ վասն փրկութեան մարդկան եղեր որդի մարդոյ։ Որդի աստուծոյ, որ վասն անհաս մարդասիրութեան քոյ խոնարհեցար յանձնառ փառաց քոց. և եղեալ 'ի խնդիր կորուսեալ պատկերիս քոյ տանս ադամայ. և ըստ անօրինական կրից քոց արարեր փրկութիւն 'ի մէջ երկրի. և ազատեցեր 'ի ծառայութենէ մահու և մեղաց. և հրաւիրեցեր զհողեղէնքս յարդարութիւն և



'ի

'ի փառս քո․ և արարեր հաղորդ և ժա
ռանգակից զմահկանացու բնութիւնս
երկնային անմահական զօրացն։

Եւ արդ՝ տ՜ր յ՜ս ք՜ս ա՜ծ իմ՝ որ զայս
ա՜մ մարդասիրապէս շնորհեալ յօրինե-
ցեր․ մի՛ ես եղէց զրկեալ 'ի ձրի պար
գեւացդ՝ վ՜ս ծուլացեալ մեղաց իմոց․
մի՛ ես ունայն գտայց յայնպիսի փրր-
կութենէդ, վ՜ս բանից յանցանաց իմոց։
Դու ո՜պ ելեր 'ի խնդիր կորուսեալ
ոչխարին, և գտեալ ուսօք բարձեր․
լե՛ր և ինձ խնդրող կորուսելոյս։ Եւ
զոր օրինակ ողորմեցար քանանացւոյն,
և զհայցուածն կատարեցեր․ կատարեա՛
և զիմ հայցուածս՝ որ վ՜ս մեղաց իմոց
պաղատիմ։ Եւ ո՜պ սրբեցեր բանիւ
բերանոյ քո զբորոտն, սրբեա՛ և զիս
յա՜մ աղտեղանաց իմոց։ Եւ զոր օրինակ
զանդամալոյծն առողջացուցեր, առող
ջացո՛ և զիս զչարեօք լցեալս։ Եւ ո՜պ

զհիւանդսն բժշկեցեր, բժշկեա՛ և զիս
զցանկութեան հիւանդացեալս։ Եւ զոր
օրինակ զդեւսն ՚ի մարդկանէ հալածե-
ցեր, հալածեա՛ և յինէն զթշնամին կե-
նաց իմոց։ Եւ որպէս զկոյրսն լուսաւորե-
ցեր, լուսաւորեա՛ և զիս զխաւարեալս
մեղօք։ Եւ զոր օրինակ զմեռեալսն յա-
րուցեր, յարո՛ և զիս զմահացեալս յան-
ցանօք։ Եւ որպէս ալեաց ծովուն սաս-
տեցեր, սաստեա՛ հանդարտեա՛ և զա-
լիս մեղաց իմոց։ Եւ զոր օրինակ զսո-
վեալսն յանապատին կերակրեցեր, կե-
րակրեա՛ և զիս զճշմարիտ սովեալս յա-
ռատ ողորմութենէդ քումմէ։

Տէ՛ր յիսուս քրիստոս աստուած իմ, որ զամենայն մարդ կա-
միս կեալ՝ և գալ ՚ի գիտութիւն ճշմար-
տութեան. ուստի մարդ եղեալ վասն մեր՝
յանձն առեր զչարչարանս և զմահ խա-
չի, և զանձն քո եդուր փրկանս փոխա-
նակ բազմաց. կեցո՛ զիս և ողորմեա՛


ինձ

ինձ, մի՛ ըստ գործոց իմոց հատուցա-
ներ ինձ. մի՛ մերժեր զիս յողորմութէ
քումմէ, և մի՛ անտես առներ զգործս
ձեռաց քոց. և մի՛ զրկեր զիս յերանա-
ւէտ խոստմանց քոց: Յիշեա՛ զիս յի-
շեա՛, յիշեա՛ յիշատակաւ յաւիտենից տր
յս քս ած իմ, և նայեա՛ առ իս քաղց-
րութբ. բարեխօսութբ սրբոց ածած-
նին, և ամ սրց քոց երկնաւորաց և
երկրաւորաց, ազատեա՛ զիս յաններելի
տանջանացն, և՛ ի դառն մշտաց գեհե-
նին. և արա՛ զիս արժանի երկնից ար-
քայութեան: Եւ քեզ ընդ հօր և սր
հոգւոյդ փառք իշխանութի և պատիւ
յաւիտեանս յաւիտենից. ամէն.



## Շաբաթու աւուր։

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն։

Հայր մեր որ յերկինս։

Տէր լուր աղօթից իմոց, ականջս դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով։

Լուր ինձ արդարութեամբ քով, և մի մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ, խո-



նարհ

նարհ արար յերկիր զկեանս իմ, և նըս
տոյց զիս 'ի խաւարի ո՟պ մեռեալ յա-
ւիտենից։

Ձանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ
խռովեցաւ յիս։

Յիշեցի զաւուրս զառաջինս, խորհե-
ցայ յա՟մ գործս քո. յարարածս ձե-
ռաց քոց խորհեցայ, և համբարձի առ
քեզ զձեռս իմ։

Անձն իմ ո՟պ երկիր ծարաւի՛ է առ
քեզ, վաղվաղակի լո՛ւր ինձ տէ՛ր զի
նուաղեցաւ յինէն հոգի իմ։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն,
զի մի՛ նմանեցայց այնոցիկ որք իջանեն
'ի գուբ։

Լսելի՛ արա ինձ առաւօտու զողոր-
մութիւն քո, զի ես 'ի քեզ տէր յու-
սացայ։

Յո՛յց ինձ ճանապարհ յոր և գնացից,
զի առ քեզ տ՟ր համբարձի զանձն իմ։

 Փրկ

փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց իմոց տ՛ր, զի
զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու
ես ա՛ծ իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ
՚ի յերկիր ուղիղ։

Վ՛ն անուան քո տ՛ր կեցուսցես զիս,
արդարութ՛բ քով հանցես ՚ի նեղութե՛
զանձն իմ։

Ողորմութ՛բ քով սատակեա՛ զթշնամիս
իմ, և կորո՛ զա՛մ նեղիչս անձին իմոյ,
զի ես ծառայ քո եմ։

Ի՛ ներքսութեից քննող գաղտնեաց ըբ
ժշկեա՛ զհոգւոյ իմոյ զհիւանդութիւնս, և կեցո՛ միայն մարդասէր։ Որ
երկայնամիտ ես առ ամենեսեան՝ ողորմեա՛ անձին իմոյ բազմամեղի, և
կեցո՛ միայն մարդասէր։ Ամենաբարեա-
կան ողորմութ՛ե շնորհ՝ պարգեւեա՛ ինձ
յահագին աւուրն զթողութի, և կեցո՛



մի

միա՛յն մարդասէր։

Մ՝եղք իմ բազում են յոյժ, ծանր են քան զաւազ ծովու, քանզի քեզ միայ-նոյ մեղայ ողորմեա՛ ինձ ա՜ծ։ Բա՛ց տ՜ր զդուռն ողորմութե՝ որ ողբալով կար-դամ առ քեզ․ քանզի քեզ միայնոյ մե-ղայ, ողորմեա՛ ինձ ա՜ծ։ Հե՛ղ յիս զգ-թութի՜ւ քո բա՛զումողորմ և մարդա-սէր․ քանզի քեզ միայնոյ մեղայ, ողոր-մեա՛ ինձ ա՜ծ։

Մ՝եղայ քեզ տէ՛ր, մեղայ ողորմեա՛։ Մ՝եղայ անօրինեցայ և մատնեցայ ՚ի ձեռս անօրէն թշնամւոյն․ արդ անկե՜լ աղաչեմ թո՛ղ ինձ տ՜ր։ Քան զամենե-սեան առաւել մեղայ տ՜ր իմ գթած, քան զամենեսեան անօրինեցայ և մատ-նեցայ ՚ի ձեռս անօրէն թշնամւոյն․ արդ անկեալ աղաչեմ թո՛ղ ինձ տ՜ր։ Զերծ՛ զիս յորոգայթէ որսողին․ և յա՜մ փորձանաց ապրեցո՛ և ողորմեա՛։

Յաներևոյթ թշնամեացն և ՚ի գաղտնի նետից բանսարկուին պահեա և ողորմեա։ Փրկեա զիս ՚ի յանցանաց մեղաց իմոց. և նորոգեա զիս հոգևով գիտութե̃ և ողորմեա։

Ողորմեա ինձ ա̃ծ, զի քեզ միայնոյ մեղայ։ Առաւել լուա զիս ՚ի տղմոց յանցանաց աղբիւր բժշկութե̃, և ողորմեա։ Յորենէ փրկեա զիս որ հոգւոց և մարմնոց ածնիս լլկանութիւն, և ողորմեա։

Բազումէ̃ յանցանք ծանրաբեռնեալ է անձն իմ. միայնոյ քեզ մարդասիրի աղաչեմ, ողորմեա ինձ ա̃ծ։ Բղխմամբ արտասուաց և հառաչանօք սրտի իմոյ անդադար հայցեմ բազմամեղութե̃, քաւեա զիս ա̃ծ։ Բազմագութ մարդասէր շնորհեա զթողութի̃ իմոյ յանցանաց, զի առ քեզ միայն պաղատիմ, քաւեա զիս ա̃ծ։

Սրբոյն երանելւոյ Յովհաննու Գառնե-
ցւոյ աղօթք առ Հոգին սբ։

Անքննելի՛ և բազմազան շնորհաց առատապէս մատակարար և բաշխիչ Հոգի սբ. Հոգի ճշմարտութե, Հոգի ելող՚ի Հօրէ, Հոգի մխիթարիչ, ած ճշմարիտ. ածի արարիչ ընդ Հօր և ընդ որդւոյ, և ածային նախախնամութբ քով բերող զամ, որ ըստ կամաց քոց տիրականաց բաժանես ըստ իւրաքանչիւր չափոյ հաւատոց, և ես առ՚ի քէն զառատահոս շնորհաց պարգևս. Ա անճառելի գթութբ սիրոյ քոյ՝ ամենազան բարութբք հարստացուցեալ բազմապէս ճոխացուցանես զեկեղեցի քո, առաքելովք, մարգարէիւք, վարդապետօք, և այլովք դասուք արժանացելովք ածայնոց պարգևացքոց։ Յորում եդեր զթողութի մեղաց, և զհաստատութե և տիրութե մերոյ բնութեսս մարդա



ւի

սիրապէս ետուր զօրութիւն վերստին
ուղղութե՛ և կենդանութե՛ ՚ի մահ-
ուանէ մեղաց։ Հայեա՛ քաղցրութե՛
քով ամենազօրութ՝ և յիս յանարժանս ծա-
ռայս քո, և տո՛ւր ինձ սիրտ բեկեալ
և հոգի զղջման։ Օրացո՛ զլուսին մը-
տաց իմոց, և հալածեա՛ զանյուսութե
ստու՛եր հոգւոյ ծառայի քոյ։ Նա և մե-
ծո թե՛ ողորմութե՛ քոյ՝ զապականութի
անօրէնութե իմոյ, որ հարկանէ ցանկ
զիս տանջեալ անբժշկական խոցիւ,
քաւեա՛ բարերար Ած։ Ի դղրդմանէ մե-
ղաց կանգնեա՛ զիս, և զվէրս առ ՚ի
նմանէ անձին իմոյ բժշկեա՛. զպատ-
ճառս չարեացն բուռնք ներգործութեանցն,
և զամ պատրանս խաբէութե՛ն նր մեր-
ժեա՛ յինէն. և զհաւանութի անմտութե
իմոյ անտեսս արա՝ և մի՛ յիշեր։
Մ՝եծամեծս անօրինել ցասուցի զկամս
քաղցրութե քոյ, և ոչ իշխեմ համար-
ձա

ճակատէս մատուցանել աղաչանս առա_
ջի քոյ, յիշելով զոր ինչ գործեցի.
գուցէ անարժան գոլով և լի աղտե_
ղութեամբք՝ դառնացուցից միւսանգամ
զամենասուրբ կամս քո. բայց նեղութիւն
տարակուսանաց անձին իմոյ, և անհրա_
ժեշտ երկիւղ վրէժխնդրութեան՝ իշ_
խել կալ առաջի քոյ հարկեցուցանէ.
մանաւանդ անիմանալի քաղցրութիւն քո
և անեզրական սիրոյ վստահութիւն:

Եւ արդ՝ ողորմած՝ տես որքան պէտս
ունիմ մարդասիրութեան քում. և հա_
յեա՛ որքան սաստիկ են վէրք անձին
իմոյ թշուառացելոյ: Մատի՛ր խոնար_
հութեամբ կարօղդ յամենայնի, բժշկել զան_
բժշկելի հարուածս անձին իմոյ. քան_
զի հնարաւորք են քեզ անհնարինք.
և ոչ կարէ կալ առաջի լուսոյ քաղց_
րութեան քոյ՝ խաւար ատելի մեղաց
իմոց. և տեղի տան վէրք նեխեալ հո_

գւոյ խնոյ բժշկական զօրութեան քոյ մեծի։ Եւ քեզ փառք և երկրպագութիւն ընդ հօր և ընդ որդւոյ այժմ և միշտ և յաւիտեանս․ ամէն։





Աղօթք· շնորհաւոր· հաղորդ ցուցելոյ· այ՝ եօթնեկան թուով ըստ եօթնեկան աւուրց շաբաթուն՝ ի դէպս ապաշխարողաց եկեղեցատանօք, ցաղօթամատոյց Գրոց սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ·

Ի խորոց սրտից խօսք ընդ Այ·

Բան. ծէ·

Դու՝ աղաչեմ զխնամակալդ փրկան-
գաւորաց տաժանելեաց կրից
Թաղծութեց հոգւոց վշտացելոց· Մի՛
յաւելուր հեծութեան ցաւ· մի՛ խոցեր
զվիրաւորեալս, մի՛ դատապարտեր ըզ-
պատժեալս· մի՛ տանջեր զչարչարեալս·
մի՛ դաներ զհարուածեալս· մի՛ գլորեր



զան

զանկեալս · մի՛ կործանէր զգայթակ֊
ղեալս · մի՛ մերժէր զհեռացեալս · մի՛
տարագրէր զհալածեալս · մի՛ ամաչե֊
ցուցանէր զպատկառեալս · մի՛ կշտամ֊
բէր զհարթուցեալս · մի՛ խորտակէր
զբեկեալս · մի՛ խռովեցուցանէր զամ֊
բոխեալս · մի՛ ալէկոծէր զբեքացեալս ·
մի՛ սասանեցուցանէր զդողդողեալս · մի՛
չխոթէր զմրրկեալս · մի՛ կեղեքէր զվ֊
շտեալս · մի՛ ջախջախէր զբեկեալս · մի՛
գօշէր զմորմոքեալս · մի՛ կուրացուցա֊
նէր զխաւարեալս · մի՛ զարհուրեցու֊
ցանէր զապշեալս · մի՛ խորտակէր զխար֊
շատեալս · մի՛ մահացուցանէր զհիւանդս ·
մի՛ բեռանց ծանրութե՛ն մատնէր ըզ
տկարս · Ա՛ւ անուր յաւելուր կարկա
մեալ թիկանցս · մի՛ կրկնակի ողբումն՝
դառն հեծութեանս · մի՛ ուժգնապէս
վարեացիս ընդ հօղս · մի՛ սաստկապէս՝ ընդ
մեկնէս · մի՛ անաչառապէս՝ ընդ ատեղծ֊

 ումս

ուածս . մի՛ ահարկութեամբ՝ առ փոքրս ։
Մի՛ ընդ հարկանելը խստութբ մեծդ՝
ընդ վաքուս . լոյսդ՝ ընդ ստորնականիս .
բնութբ բարիդ՝ ընդ ՚ի բնէ չարիս .
ողկոյզդ օրհնութե՝ ընդ պտղոյս անի-
ծից . քաղցրութիդ խակայես՝ ընդ հա-
մայն դառնութեանս . փառաւորեալդ ան-
փոփոխդ՝ ընդ ամենևին անարգիս . կե-
նացդ նշխար՝ ընդ կաւոյս զանգուա-
ծոյ . տէրդ տէրանց՝ ընդ տղմս երկ-
րայնոյ , աննուազ լիութիդ՝ ընդ չքա-
ւոր սղկս . անկարօտ ճոխութիդ՝
ընդ անպատսպար տառապեցոյս . անկա-
րօտ բարութիդ՝ ընդ ամենաթշուա-
ռաղքատիս ։ Քանզի ո՞վ ոք հասեալ յա-
ռաւօտ , և՚ի ծագման լուսոյն խնթայ
մթանալ . և կամ ընթերակայց կենաց ,
մահանալ . կամ ազատութե , և պարտա-
ւորիլ . կամ շնորհաց , և դատապար-
տիլ . կամ փրկութե , և մատնիլ . կամ
նո

նորոգման, և եղծանիլ. կամ օրհնու-
թեան, և տարագրիլ. կամ բժշկուէ,
և վիրաւորիլ. կամ լիութեան, և նուա-
զիլ. կամ յաճախութե հացի, և քաղց-
նուլ. կամ գետոց հոսանաց, և պաս-
քիլ. կամ մայրենի գթոց, և նեղիլ.
կամ խնամոց աստուածեան ազդոյ, և
զգուշիլ:

2 Եւ որդ՝ ընդ ախտացելոյն սաստկա-
պես մարմնոյն բորոտութե, հոգւոյս
վտանգաւ և ես պաղատիմ, տէր՝ եթէ
կամիս, կարօղ ես զիս սրբել: Ընդ ա-
չացաւացն նեղելոց մշտադիշերին խար-
խափանօք՝ մեծակական ձայնիւ հառա-
չեմ. ոչ որդի անուանեմ դաւթի, այլ
ծնունդ էիդ այ դաւանեմ. ոչ միայն
սուրբի կոչեմ, որ վարդապետացն է
պատիւ՝ կարծողական զխելսն գիտելոյ,
այլ տէր երկնից և երկրի հաւատամ:
Մէ ձեռնդ միայն ձգմամբ հպաւորու-

թեան , ով բարեգութ ած մերձա_
ւոր , այլ 'ի բացեայ գոլով միջոցաւ մե_
ծաւ՝ ակնունիմ զօրել քո բանիդ՝ առ
իմ բժշկութի : Ո՛չ թէ ինչ խորոց
կասկածանաց միջոցի բանի , որ երկմը_
տութեն կարծի նշանակ՝ 'ի մէջ արկա_
նեմ կամելոյն և ողորմութեն , այլ կա_
միս ով բարեգութ , և կարես ով զօ_
րարիչ · ասա՛ բանիւդ , և բժշկեցայց :
Ընդ հարիւրապետին հաւատոց՝ և ես
ընծայեմ · ո՛չ՝ մինչ անձուկ միայն բա_
ցակայութե հեռի լինելով խորան 'ի
խորանէ , հաւատամ ազդել քոյ կա_
րողութեդ առ յարութի և բժշկութի ,
այլ 'ի վերինն երկնի բազմելով , և'ի
ստորինս երկրի բովանդակ առ հրաշիցն
սքանչելութի ոչ ունիմ հաւատացնել :

3 Շնորհեա՛ ինձ , ով դատաւորիք բա_
նին քո վճռեաց առ պատմելին ընդու_
նելութիւն՝ հնդից հարիւրոց դենա_

րաց պարտուց շնորհաբաշխութի՛ ամե
բարութեց և ամր երանութեց. որ յա
ճախին ընծեռել՝ բազում փառաւորիս.
և ՚ի շատն մատուցանել՝ նուէրն չափ սի
րիս. և յառաւելն ողորմել՝ կրկին բար
գաւաճիս. և յոյժքան բարիս՝ խրա-
ւանէք գովլիս. և ամի տէր գոլով հա-
ւատարիմ ճանաչիս. և որ զղջորն ու-
նիս՝ ընդ մերում կշռիս. և անճառե-
լեաւդ ձրիւ՝ մերայնովքս վճարիս. և
ընդ երկրաւորիս՝ զանվախճանն պար
վարկանիս. և մեծագրեալ քո զմերն՝
վեհս գոհաբանիս. և՚ի սակաւուն տու
չութի՛ դոյզն փառաւորել ոչ ամբար-
տաւանիս: Արդ և ինձ զնոյն գթու-
թեանդ ունողիս զգործս անհամար պար
տուց. զի և՚ի ձեռս երախտեաց քումդ
պարգևաց՝ նորին իսկ սակով սիրելն
կարգեսցի. և քեզ փառք յամի. ամէն:

******

Ողբերգութեան տաղ:

'Ի խորոց սրտից խօսք ընդ այյ·

Բան · ԾԲ:

1 Արդ՝ ես ծնունդս մեղաց, որդիս
մահացու երկանց, արդարև
անսահման բիւրուց քանքարաց տու-
ժից զող հատուցանող 'ի մօտ աւուր:
Այլ ոչ թէ առ փոքրկութիւն մարդկա-
յին մասանց հայցեմ ներութիւն, այլ առ
աննուազ լնութիւն փրկչին մի քո պա-
ղատիմ մարդասիրութիւն · որ չէի եր-
բեմն, և ստեղծեր · չմաղթեցի, և դու
արարեր · չեւ ես եկեալ 'ի լոյս, և տե-
սեր · ոչ յայտնեցեալ էի, և գթացար ·
ոչ կարդացեալ, և խնամարկեցեր · ոչ
համբարձեալ ձեռն, և նայեցար · ոչ
պաղատեալ, և ողորմեցար · ոչ կերպա-
ցեալ ձայնիս, և լուար · ոչ հեծեծեալ,
և ունկնդրեցեր · գիտելով զարդեան
դիպուածոյս, և չանտեսեցեր · Նախա-



հա

հայեացդ աչօք նկատեալ զպատժապար-
տիս չարագործութեան, և յօրինեցեր ։
Դու արդ՝ զքո ողորմեալս, և զքև փր-
կեալս, և զայսքանեաց խնամոց յանձան-
ձեալս՝ մի խափառ կորուսցէ մեղացն
հարուած զխւռք բանաւորհօտին ․ մի
յաղթեսցէ յամառութենս իմոց մառա-
խուղ՝ ներողութեն քո լուսոյ ․ մի սըր-
տիս կարծրութիւն՝ երկայնամիտ բա-
րութեանդ ․ մի մահացու մեղիս՝ ա-
մենակատար լրութեն ․ մի տկարութիւն
նիւթոյ՝ անպարտելիդ բարձրութեն ․
2 Ահա կարկառեմ զկարկամեալ բա-
զուկս հոգւոյս յանուն քո՝ Հայր, ո-
րասցես ողջ երբև զառաջինն, մինչ՚ի
դրախտին փափկութեն՝ զպտուղն կե-
նաց կթէի ։ Աշխանդեալ գօսացեալ
՚ի կոր կործանմամբ ընդ կնոջն տագնա-
պելոյ՝ կայ անուղղելի հոգւոյս թշուա-
ռութի, ընդ երկիր պշուցեալ մեղացն
 կըք

կրմանէ՝ սրբազնական բուռն կապանօք,
զի մի՛ զերկնայնոյդ ընկալցի զողջոյն ·
խոնարհեցո՛ց առ իս՝ միայն ողորմած, զի
բարձրացուցես զփայտս խոնարհ բա-
նաւոր տնկեալ, և զչորացեալս ծաղկե-
ցուսցես 'ի բարի կրօնս վայելչութեան,
ըստ աստուածաբանութեան սուրբ մարգարէին:
Ո՜վ զ'ի ծնէ կոյրն անլուսաւոր՝ չու-
նիմ տեսարան, որով բաւեզծ չիք նկա-
տեալ զկերպ մաղթեցից՝ հէզօր բա-
րեգութ, միայն դու պաշտպան անձնա-
կեալ խնամովք անձաւ քոյ սիրոյ՝ 'ի
չնչական խոսուն քո անեղթս, յանկէից
գոյաւորութի լուսոյ հաստատեցեր Ըն-
երկրաստանամեայ չարեօք չարչարեալ
վշտագին կնոջն տանջեցելոյ՝ գետովք
մեղանաց արեան հեղեղելով, հայեցո՛ց 'ի
բարձանց անմատոյց լուսովդ պարա-
ծածկեալ, ուր ոչ է քաղցրք ձեռա-
տեղծական վերարկուի ձորձոյ, այլ սա
բա

րածումն հրաշից՝ ամ ուրեք զօրա֊
ցեալ։ Ո՛չ օծութբ իւղով պատժա֊
պարտս ընդ մեղաւորին մատուցեալ
առ կենդանածիր ոտից դարշապարդ՝
զկաթիլս աչացս՝ փարսիւք հերացս ըն֊
ծայեցուցանեմ, այլ զամբիծ հաւատս՝
անբարձմամբ բազկացս՝ ստոյգ դաւան
մամբ հոգւոյ ողջունիմ՝ շրթանց կա֊
փուցմամբ զերկիր համբուրեմ, խառ֊
նեալ հեծութիւն աղբերցս արտաս֊
ուաց՝ բժշկութի հոգւոյս աղերսեմ։
Սասանեալ մեղանօք հոգւոյս գոյութի
լուծեալ մեղկութբ, և յերկուց կա֊
յից միայնակողմամբ անհաստատ հե֊
տովք, զընթացից գործին՝ նահանջմամբ
չարին՝ զհետևականնս բարձողութի շըն֊
ուածոյ մարմնոյս՝ առ ելս ծառոյն կեն
սութ պտղոյն խափանեցելոյ, պատրս
պարեսցեմ անդրէն վերստին՝ միայն
հնարաւորդ առ ՚ի փրկութի։ Ո՜ փա֊

 ռա

ռազմանարան հաստատուա՛ծոյ կերպիւ 'ի
քէն եղելոյ՝ անդրանիկ խցմամբ համ_
բոցոյց որդել հողմ բանսարկուին, հա_
գլոյ քո ազդեալ մեծդ ողորմութե,
ըստ յաւետարանին բժշկեցելոյ, հրա_
շափառապէս բարեգործեալս բանդ-
կենդանի՝ ինձ խօսողութի անսայթա_
քելի։ Ընկեալ կամ չարեօք 'ի մահճին
ախտից ընկողնոց մեղաց՝ դի կենդանի
և խօսուն մեռեալ, կարեկցեալ խնամս
Թշուա՛ռութե՝ ողբականօք գ.քուանոց
ձայնից, ո՜վ բարերար որդի այ, օրհնա
բանեալ աչացդ ցօղով վերակենդանեա_
ցես 'ի կենդանութիւն, եբր զսիրելին
'ի յանշնչական մեռելութե։ Աստոյգ-
դառնացօղս 'ի գբե մեղաց կամ տարա
կուսեալ, ձեռն մատուցեալ՝ արև ա_
նատա՛եր որդի բարձրելոյ, հանցես
ղիս 'ի լոյս քումդ նշուլից։ Ընդ ա_
ղիողորմ Թշուա՛ռութե կականման ձայնի՝

 այր

այրւոյն 'ի Նային՝ մօր միամօրին , տա_
տանմամբ մատանցն , կոծմամբ կրծիցն ,
հոսմամբ արտասուացն , տառապանօք
տխրութե դիմացն՝ և ես պաղատիմ
վերջին հեծութբս , տուր յուսահատե
լոյս գքաջալերութի մխիթարութեան
գթած քո բանիւ , ասելով և ինձ դը_
վստահ բարի՝ ստեղծիչ աշխարհի , թէ
մի՛ լար գերի՝ բազմաց ողբալի · որով
ընդ պատանեոյն կենդանացելոյ՝ 'ի վշտա
ցելոյ ծնողին սփոփանս՝ զամենապարտ
ոգիս ընկալայց 'ի քեն ընդ նմին կրկին
նորոգել : Ընդ այսակիր անզգայելոցն՝
դիւալլուկ և քարակոշկոծ հեղձամղձուկ
եղկելի անձանցն , քստմնելի գխա_
խաւի հերացն , վայրենիրևս բանդա_
գուշելոցն՝ 'ի քեն ողորմեալ փրկիչ բո
լորից , իբրև զնոսին առ քեզ դիմե_
ցից · հերքեալ մերժեսցես զգունդս
չարացն ապականողաց՝ 'ի քո խորանէս ,

 զի

զի ժամանեալ հոգւոյդ քո բարի ար-
քէն հանգիցէ, լցեալ զմտաւորինս մաք-
րութեամբ հնչոյն՝ զգեցմամբ անուշա-
մացս՝ զգաստ արասցես զխնկաբարձս
ամենաթշուառս ։ Ընդ զերծեցեալ դժո-
խուժանակաց վտարանդելոցն հոգւոց՝ որ
զերծեալ կամ ՚ի վտանգից, զճառագայթ ո-
ղորմութեան փեոց քոց ծագեա՝ լոյս իմ
անձկութեան ՚ի կապանաց օգտոցն զեր-
ծեալ զիս ազատեցուցես ։ Գաղտնա-
րոդայթ անհրաժեշտութեան վրիպակ ա-
րահետ զարշութեամբ մեղաց ջրողողե-
ցեալ ողորմ կերպարան՝ կոյ ՚ի տա-
նջանս, զծածկեցեալն ՚ի տեսութեանց՝
ղեւորագործին նիւթոցն պատուցմանս,
քո ներքնաւոր զօրութեամբ՝ որ է սր̃,
զթածաբար առողջացուցես ։ Ո՛ բար
մաղթանս տարազս ցեղիցն զանազանից ան
տաւորութեանց մահացուցանողաց՝ խե-
ռականք կորստեան բերելոց՝ դժնդա-
կար

կարմման շառաւեղօք հաստատեցելով՝
՚ի յանդաստանի անօրէն մարմնոյս, տարակորդեսցես ՚ի ձեռն ձեռինդ ամենակալի · որ արօրադրեալ միշտ՝ և մշակես զսահմանս հոգւոց առ բանիդ կենաց արդիւնաւորութի·

3 Եւ քանզի անցաւ ըստ նմանութի
օրինակութեց յանցուածոյս վէր, զի
ճարակօղն քաղցկեղի, առ բնաւ անդամս մահաւորեալ պախարին տարածումն, չէք սպեղանի ինչ խորշելի՝
առ անչափութի խարանացն մասուցանել · ՚ի խարխաց բարձիցս՝ մինչև ցաւին
կառուցման լրութեան անդամոցս՝ չէ՛
առողջութի, այլ ամենևին անբժշկութիւն։ Իսկ դու՝ ողորմած բարերար
օրհնեալ, և երկայնամիտ թագաւոր անմահ, լե՛ր պաղատանաց արգահատութեան սրտիս վտանգի, որ կարդամն առ
քեզ տ՟ր ՚ի նեղութեան։


Նա·

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ ԱՒՈՒՐ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Այ։

ԲԱՆ · ԾԵ։

1 Եւ արդ՝ տէր զօրութեանց, մեծու-
թեան ահեղ, անտարակոյս տե-
սութիւն, կամք ամենընդարձակ,
առատութիւն անսպառ, ում ոք զօրես-
ցէ տանել հանդիսին պարերգութե՝
'ի մոյ կաթուածոյ ցօղոյ քում բա-
րութե, որ ցանկ դեգերիս պատրաս-
տել պատճառս հնարից՝ խնամ փրկու-
թեան։ Եւ զոր մեծն է գրեցից՝ պատ
մել յապաւնիւն · քանզի ոչ անուանե-
ցար հրեշտակաւք, և որ զպետու-
թիւնս նոցունց հաստատեցեր, այլ և
զերկինս զամբարոք նոցին՝ զմատանց
քոց գործ, ոչ գրեցեր երբեք սիրել
զնոսա · այլ առեր 'ի պատիւ մեծաց
գովեստից առաջին դասել զմարդա-
սիրութիւն։ Սորոյ կրկին մեծացու-
ցեր

ցեր քեզ անուն անճառ ՚ի խորհուրդս
սոսկալիս · զերկնայինս լուսակերպիցն
կոչեցեր զնոսին սպասաւորս և զլխա_
ւորս յատուկ մատակարարութեց · իսկ
զստորնայինս ծնունդս մահկանացուաց՝
երկրական և ա͞ծային պաշտելի ան_
ուամբդ պերճացուցեր ։ Անցեալ վե_
րստին ըստ սահման կշռութե չարից ,
լայնեցեր քեզ կոակս գրոց՝ ձաւից
անբաւուց՝ զանապակ ծորմանն ծայրա_
գունին վերնում բարութենն ։ Ես և
՚ի մարդանալդ քո միդ յէութենէն ,
ոմանց վ͞ս ինքեանց , և կիսոց վ͞ս այլոց՝
զեղեր առատութ͞ե զոտուրս կենաց ·
արուեստս բազմօրինակս · սքանչելիս
ա͞ծագործս · նշանս ճշմարտատեսիլս ։
Ո՞ զի թէ անդամալուծին պակասե_
լոյն ՚ի հաւատոցն , հոգաբարձացն ա_
ռաջարկութ͞ե զցոյցս յուսոյն՝ զթա_
ցեալ ողորմեցար , և ոՐչափ զօրեսցէ

 ա

առաւել բան քո ամենակալ՝ առ ախ-
տալեաց մարմնոյս մաքրութի՛ աղաղակե-
զիս հառաչմամբ. քանզի արդարև մեծ
են չարիք հրաշից՝ քան զանմաքրեալս
հոգի՝ ո՛չ հասանել, զոր անցեալս պատ-
կեր՝ անախտելի աղտոյ ներգործել. նա
զի և երկրորդս առաւելութբ̃ յաւա-
զանին շնորհ յանձնեալ՝ զխառնն հայ-
րենի բարձրացուցանէ.

2 Դու ես տէր, որ որպէս զմեզ, ո՛չ
ընտրեցելոյն քոյ նախատպաւորեցեր
մովսէսի. դու ես, որ 'ի մեզս և յանօ-
րէնութիւնս վերակացու եղեր տոհմին
յակոբայ, մինչ յեգիպտացւոցն երկրէ
ընդ խաւարն հեթանոսաց ընտանենա-
յին։ Դու ես, որ օրէնադրեալ առնես
զմեղաւորսն 'ի ճանապարհի, ընդ բանի
երգողին դաւթայ. դու ես, որ մի-
խարեալս զքարեղէն սրտից կարծրութի՛
'ի լոյծ կակղութե՛՝ մարմնոյ գոյութե՛՝

 բա

բանի ընդունելութեն ։ Դու ես, որ
բաւես ընձեռել սիրտ այլ, և ճանապարհ
մի՛ երկնչել 'ի քէն՝ զբովանդակ կենացն
սահմանն. դու ես, որ տաս զերկիւղ քո
'ի միտս խոստուէ՝ առ քեզ ուշ ունել
հաւատովք, ըստ մարգարէիցն ձայնի ։
3 Օրհնեալ քո շրթանցդ՝ զաշխար-
հաստեղծ բերանոյդ՝ զմեծեղէն անճ-
րեացդ զկեցուցանող կաթուած, մա-
տո՛ լսելեացս դրանց բացարան, որով
զօձին խորամանկութի՛ բանսարկուին
Թիւնից՝ բարձցես և բժշկեսցես ։ Մե-
նակալք ձեռօք՝ զխօսնականացս շարժո-
ղական գործի ըմբռնեալ՝ ազդեա՛ զօ-
րութիւն ձայնի. որ տաս բնաւից ըստ
րութի՛ բանի, զի դաստիարակեալ ըղ
պատշաճականն՝ մի՛ յանդգնաբար խօ-
սելով լեր զնախնեն՝ լցոյց 'ի յուսոյդ,
և անբաւնուէ մատնեցայց վանեալ յոր
սողէն ։ Լուսաւորեա՛ վերստին զխա-


ւա

ւորեցէլ հոգւոյս աչս՝ կենդանութեանն
աչքոյդ կործանմամբ, զի մի՛ համարձա-
կութեն չիջեալ լապտերի՝ ընչմամբ մի-
շապին՝ 'ի ներքոյ գրուանկին տարածա-
կեցայց: Բարձ զանօրէնութիւնս իմ
տէր, և ընկեա՛ 'ի խորս ծովու. որ է
փոքր առակ մեծութե քումդ անբաւ-
ւութեան, ըստ մարգարէին, զինս ըն-
կղմել չարութի: Կանգնեա՛ կործա-
նեալս անձին՝ նշան վստահութե, զի
մի՛ յուսահատութեն կոխող կառաւ-
ցեալ՝ զծածկեցելոցն բաղըքեսցէ: Բա՛ց
հրկզօր և գթած, զդժնկարանիդ կենաց
վարդապետարան, զի զառ 'ի ներքոյսն
մշակութեան կորուսչին սերմանց՝ ման
կաղաւ կամացդ՝ հուպ առ արմատ խու
զեալ հնձեսցես: Դնէմ եղեալ հե-
տևել առ քեզ բողոքիցդ ա̃ծ, պետրո-
սեան օրինակութն, 'ի կենցաղիս ծո-
վու մեղանացս ալեաց՝ ընկլուզայ, մատո՛
ժա

ժամանեա՛ զօրդ կեցուցիչ՝ յօգնակա-
նութիւն ինձ սասանեցելոյս։ Ընդ քա-
նանուհւոյն ձայնի՝ ՚ի խորոց սրտիս պա-
ղատիմ, սովեցելոյս՝ ապականաւորս
կաղկանձողական ամենաթշուառ մտան
դստրիս, աղերսաւս կերակրոյ փշրա-
նաց հացի՝ ՚ի բազմազեղուց քո սեղանոյ
մասնաւորեսցես։ Արա՛ փրկութիւն նիւ-
թոյ խորանիս՝ որդւոյս դառնութե,
որ եկիր խնդրել և կեցուցանել զիս
զկորուսեալս։ Զի քո՛ է մեծութիւն,
յաղթութիւն և զօրութիւն. և դու ես
քաւութիւն և բժշկութիւն, նորոգութիւն
և երանութիւն. և քեզ վայելէ փառք և
երկրպագութիւն յաւիտեանս. ամէն։

Չորեքշաբաթի առաւօտ։

՚Ի խորոց սրտից խօսք ընդ այս։

Բան. ԿԴ։

1 Բարերա՛ր և բազմագութ, մարդա-
սէր և երկայնամիտ՝ միայն Թագա-

ւոր, ընդ հօր քում պատուեալ և օրհ-
նաբանեալ տէր ամենայնի, որդի՛ այ
կենդանւոյ։ Անպատճառդ մեզ ի-
մում կորստեան. որ ամենեցին անխտիր
ես 'ի չարեաց. որ ոչ կամիս զմահ մե-
ղաւորի. որ փրկութիւն ես 'ի քոց կա-
մաց ընծայեցեալ. որ դարձուցանես
զմոլորեալ մեղաց՝ 'ի յօդ քաւութե̃. որ
զհուր բարկութե̃՝ յանձրև փոխարկես։
Որ զյետնեալ զկենն 'ի բարեաց՝ կրկին
նախկի դրախտի հանգանակեր՝ երկեակ բնու-
թեան 'ի նոյն արձանի, ոչ խառնակես ը̃
անպարտում, և ոչ համայն ընդ պատժա-
ւորսն։ Որ կռծութիւն ծովուն սահմա-
նաց, երբ զկարկառս քարանց կառու-
ցեալ՝ յեղանակեցեր։ Որ զկարծրա-
նութ վիմի անապատին, 'ի վիժակս վը-
տակաց հոսեալ՝ բղխեցեր։ Որ զյոր-
դանանու ջրոյն որուշորժ վայրենուն,
հրաշալոր անդրադարձութե̃՝ 'ի յետ-

նորա հեթանոսաց լուացուին առա-
ղանին՝ 'ի Թիկունս առաքեցեր։ Որ ըզ-
պատուհասաւեալ պարսկայն երկրովի, յօ-
րինակ կործանման բանութեն սատա-
նայի՝ իբր զԹեԹեւուԹի յարդի ցրո-
ւեցեր։ Որ զխաւարակար ջուր նորին,
'ի յատակ աղջամղջութեան՝ առ 'ի բարին
փոխարկութե՝ քանանացւոցն փրկութե՝
խորհրդական աղբեն համեմեալ անու-
շեցեր։ Որ զմեռայլին դառնութիւն,
իբր զմտաց անհաւանութի, կենացն
փայտիւ 'ի քեզ յարմարեալ՝ պիտանի
արարեր։ Որ զառեալն 'ի գետոյն, 'ի
գծագրութի անսահմանդ քո հրամանի
անտրամելիդ գունակութե՝ 'ի նոր երանգ
բարոյն՝ մաճեր արիւն 'ի ցամաքի։
Որ զանկենդան ցուպ գաւազանին, 'ի
կերպարանս՝ առ 'ի զգոյշ մերոյս նկա
րագրել, այլ յօտարազնեցն ընտրութ՝
'ի տեղն ապալթոյն կերպիւ վիշապի՝ նմա



նեալ

նեւաւ ցուցեր։ Որ զերջանիկ ձեռն ա-
ջոյն մոլախոտ, 'ի ցոյցս տեսութե̃ ապա-
գայիցս հրաշից մարդեղութեանդ քո՝
բարձրեալ, եւ քեւ՝ ախտաւոր մարմնոյս
մաքուր լինելոյ անախտախախ փոխատրու-
թեամբ՝ կրկին գուշակեցեր։ Որ յայս-
քանեացս շրջագայութի̃, բարեխնամա-
պէս արուեստի սիրոյ՝ զանակնկալն
գիւտ մեղաւորաց կորստականաց նշա-
նակեցեր։

2 Օրհնեալ ամենագութ, որ բուսու-
ցանես յերկիրս դալարի, զձեռնեալն՝
յանշնչականեն. որ զանշարժն՝ եբր զըն-
թացող կառավարես. որ յանարգ ար-
գանդէ՝ կոչես քեզ պատկերակիցս. որ
տաս պտտանեկաց՝ աղորիս ըմբոշխնե-
լիս. որ 'յայտս մաքուրս՝ հերս ընծա-
յես. որ զապարթ սնութե̃ վարուց,
'ի ձեռն կերպարան զարմանագործես,
ցուցեալ՝ թէ առ ա̃մ սահման հետա-

ւորական , յաղթօղ ես հզօր · որ փոխ-
խես զշղթայս բնաւորականս , բառ
ռանիւն յորեայ , 'ի կամս հաւատարիմս ։
Որ սասանես զերկիր , և զախտս նո-
րին 'ի հիմանց , նշանակեալ հաստատու-
թեան գոյից՝ թէ դու միայն մնաս ան-
կործանելի · որ հողմես զամպերս՝ իբրև
զանցաւորս , և դարձեալ 'ի նոյնն կա-
պես՝ իբրև զյարակայս , յայտ առնես՝
թէ և առ մեղաց բազմութիւն՝ դիւրու-
պէս ունել կամ թողուլ՝ դոյնպէս զօ-
րաւոր իցես ։ Որ զարուսեկին անըզ-
գայ էութիւն՝ իբր երասանաւ ինձ
զաստիարակես , երևեցուցեալ այնր
իրի կերպիւ՝ թէ զընութիս չոր դի-
մեցուին՝ յորժամ և կամիս՝ հանդարտ
առնիցես ։ Որ զանբարբառ բողոքակ
լանին՝ կարգես ունայնս և պատա-
րունս , լուսաւորել զպատճառն առ ու-
ւեախս տեսողաց՝ թէ 'ի նմանողութէ

բարեաց զպարտաւորս մարմինն՝ դու ա֊
ծես ՚ի լրութի՛ առաջնաստեղծ հարըս֊
տութեն: Որ զպատկերս անխօս աս֊
տեղաց, երբ զլուսակս դաշտին հօտից՝
տրոհես և ժողովես, յորս ինն կենաց
առ այս խորհրդաբերեալ՝ քաղցրահա֊
յեաց տեսութի, թէ՝ և անապաշաւո֊
րաց լեզուաց՝ կարողապէս բաւես ո֊
ղորմել: Որ ՚ի մէջ մահու և կենաց՝
շաւիղ վստահութեան ուղղես ՚ի ծո֊
վու, մկայութի եղեալ հաւատոյ, թէ՝
և յանկասկածաւորն փոյթն՝ քև պաշտ֊
պանիմք անգայթագղելի • որ երբ ըզ
ջուր կաթսայից ՚ի հրոյ եռացեալ, ոչ
զմեղաց մրրիկ պղտորեալ՝ բանիւ հա֊
մաց քոց խափանեցաներ: Որ հայիս յեր
կիր և տատանես զնա, զի անբանիւն՝
զմտաւորս զգաստացուցանես • որ երբ
զակատ մի անձուկ նաւի ՚ի վր շար֊
ժութե աչեաց՝ զանբաւ թանձրութի
գետ

զքննոյս դողդես , որով ծանուցեալ
լինիս ամենից հաստատուածոց՝ թէ իցես
աներկբայելի , որ 'ի բան քո զօրեղ՝ հիմ
նացեալ ունիս զամ ։ Որ սերմանես
զարտաշնչացեալ մարմինս յերկրի , և
զնոյն անկորուստ պահեալ կրկին կեն
դանածնես ։ որ ապականացուս աւան_
դեալ՝ անեղծս լուսանաս ։ որ ընդ մա_
հացու նիւթոյս՝ զնշխարդ կենաց խառ_
նես , որ հրամանաւ աննարկութե՝ 'ի
խուն վայրկենի կազմեցեր պատրաստ
կացուցեր զանզարդութի ամենից ե_
ղանակաց ։ Քո՛ է զօրութի և կարո_
ղութի , որ շրջանակես զժամանակս ա_
մաց հոլովման աւուրց՝ յայլ նմանութի
բարեպատեհ տեսողութե ։ Որ կար_
դաս զանմաունչան , իբրև զկենդանիս ։
որ ազդես միայն , և նոքա ընթանան ։
որ միայն հենու անկանես անձառ որ
ունեսցիս հնարագիտութե՝ մեծ և ա_



ուա

ռուօտ : Որ յետ նախակարգ յօրին-
ուածոյն առաջնաստեղծ լինելութեան,
արարեր զխառնուրեալն մեծամեծս
հրաշակերտուիցն հանդերձից , ըստ գրոյն
երջանկութեան կանխահնարիցն զարմացման,
ոչ ինն գոյացութիւն տանելի տեսակի՝
անեղծ աշխարհագործութեան և
քան զայն՝ 'ի մարդանուշ քո , որոց ոչ
գոյ թիւ :
3 Որ ահա զմխտան մեր՝ քեզ գրեցեր.
որ զարդարութիւն քո՝ մեզ շնորհեցեր.
որ ընդ քեզ կոչեցեր զհաշտութեան մե
րում փրկանաւք . որ ոչ երբեք լքանիս
յողորմութեան , դարձեալ զամբարշտաւղ՝
'ի պաշտօն բարի երկնուղի , զթմբրեալս՝
'ի զուարթութիւն արթնութեան սրտի . զանձ
մաքուրս՝ 'ի սրբութիւն պայծառութեան
կերպարանի . զաղմարեծս՝ յանբծութիւն
հանդարտական ոչ պատկերի . զըեն-
կեալս՝ յողջութիւն , որ 'ի դեպմանց ոչ

խորտակի · ըղլցեալդ՝ 'ի խնդութիւն
զուարթութեան անսախրելի · զյուսահա_
տեալդ՝ 'ի սէր միաւորիչ անքակտելի ·
զամաչեցեալդ՝ 'ի վստահութի հաստա_
տութեան անշարժելի · զխաւարեալդ՝
'ի լոյս երանութեան անմեկնելի · զմահու
գերեալդ՝ 'ի կեանս, որ ընդ եղծմամբ
ոչ անկանի ։ Զի փառաւորեսցի ա_
նուն քո՝ յիսուս, խոստովանեալ յամէն,
ընդ հօր և ընդ հոգւոյդ սբյ՝ 'ի բար_
ձունս երկինս և 'ի ստորինս երկրի և 'ի
բնակիչս նոցա, յաւիտեանս յաւիտե_
նից · ամէն ։

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՈՒՌՆ ։

### Ի խորոց սրտից խօսք ընդ այ ։

ԲԱՆ · Հ ։

ՊԱԼ ես անպիտանս յամէնի, և ոչքան
բան զօրէ՝ պարտաւորեալս · որ
մինչդեռ արթունս եմ, նիրհեմ · մինչ



դեռ

դեռ զգաստ երևիմ՝ թմբրիմ. ՚ի բա֊
րեպաշտելս իմում՝ գայթագղիմ. մինչ
դեռ աղօթեմ՝ և վրիպիմ. ՚ի յընթա֊
նալս իմում՝ և կաղիմ. յարդարանալս
իմ՝ և մեղանչեմ. ՚ի խաղաղանալս ի֊
մում՝ ամբոխիմ. մինչդեռ արշաւեմ՝
ու ՚ի յետոյս հակամիտեմ. ՚ի ջանսն
իմում՝ ընդ կրունկն դառնամ։ Ընդ
լուսոյն մաքրին՝ և խաւար յարեմ. ընդ
քաղցրութեան ճաշակ՝ օշինդր խառնեմ.
ընդ կուղս բարեացն՝ չարիս հիւսեմ.
ընդ կանգնելն՝ և կրկին գլորիմ։ Ոչ աղ֊
կէիմ, և ոչ պտղաւորիմ. ասեմ, և ոչ
առնեմ. խոստանամ, և ոչ կատարեմ.
ուխտեմ, և ոչ վճարեմ։ Կարկառեմ,
և անդրէն ամփոփեմ. ցուցանեմ, և ոչ
ընծայեմ. մերձեցուցանեմ, և ոչ մա֊
տուցանեմ։ Ի ճարակել խոցմամբս՝
անդրէն վիրաւորիմ. ՚ի հաշտեցուցա֊
նելն՝ վերստին խռովեմ. զոր հանդէ֊
ստ

ստանամ, և իրաւամբք պարտաւորիմ. գրիմ, և իսկոյն եղծանիմ. նուաղեմ, և՛ի գիծն թուղթնամ. սխալանիմ, և՛ի հան_ գիստն ոչ ժամանեմ։ Կարդիմ, և դար_ ձեալ սասանիմ. լնանիմ, և կրկին հե_ ղում. շարունակիմ աստ, և անդ 'ի ստորևս հասիմ. բարդիմ, և անդէն տաշորիմ։ Հինն արկանեմ, և ոչ գլխա_ ւորեմ. սակաւ վաստակիմ, և բիւրս վատնեմ. դոյզն գանձեմ, և անթիւս սպառեմ։ Զայլս խրատեմ, և ես ինքն անխրատ եմ. միշտ ուսանիմ, և երբեք 'ի ճշմարտութ՟ի գիտութ՟ե ոչ հասանեմ։ Զշիջեալ չարիսն՝ նոյնչափ արծարծեմ. սուղ ինչ քաջալերիմ, և տատանելապէս լքանիմ. լուրիմ, և իսկ և իսկ առնմին մեղկիմ. զայս կարկա_ տեմ, և զայն պատառեմ. խլեմ զե_ ղիձն, և տատասկ տնկեմ։ Ընդ ամ_ բառնալն՝ և այսրէն բերիմ. մտեմ 'ի



բոյնն

բոյնն տղայնի , և անտառաստ ագռաւ
եղանեմ · գամ սակաւ մի ապխտակ , և
սրանամ դառնամ բնութին սևացեալ ·
ասեմ զիս քեզ դաւանել , և սպանո—
ղին նուիրիմ · ընդ յանդիմանս լինելն ,
և Թիկունս դարձուցանեմ : Ս՝պրիմ,
և այլ մրձատիմ · լուանիմ , և նովին
զաղբանամ · կերպարանիմ զգաւթին ,
և գործք զասատաղայն կատարեմ · շըր—
Թամբք ճշմարտեմ , և ասեմ երիկա—
մամբք · աջովս մատակարարեմ , և ա—
հեակ կողմամբս աւերեմ : Ը՝նդ երկ—
րագործութե̅ ցորենոյն՝ որոյն սերմա
նեմ · ՚ի բարձրագոյն խնամոցն՝ վայր
իջեալ ես ինքն գտանիմ : Հրեշտակա—
նամ յերեսս , և՚ի խորհուրդս պիտա—
նամ · ՚ի յոյս հաստատիմ , և՚ի միտս
սատանիմ · սուտ ձևանամ , և իրք խո—
տորիմ · կեղծաւորիմ արդար , և ար—
դեամբք ամբարշտեմ : Դ՝ասիմ ՚ի պարս
հե

հեզոց, և ընդ այս կոչքաւեմ ՚ի մարդ-կանէ գովելով, և ՚ի տեսողէդ պարսա-ւելով. ՚ի հողածնելոցս երանելով, և յոր-դւոցն լուսոյ աւաղելով. հաճոյանամ յե-տին ռամկին, և թագաւորիդ մեծի յաչաց ելանեմ. Օ՜ ատեանն դատաւո-րին թողեալ, խառնակրօնիցն աղեր-սեմ. հերքեալ ՚ի վեհիցն, սոսկականացն սպրդիմ. մարմնովս արտաքուստ պըճ-նիմ, և անձամբս երկինին՛ ձայնին ճա-նաչիմ. հպարտիմ գաշն հաստատել, և ուխտակարոյս արտաքս մերժիմ.

Այսօր մաքուր հոգեկիր, և փողե՛-մոլի խնեղադար. զփրոնէի պատուէրն լքեալ, թերադրութեան օծին հետևիմ. արփիանամ զօրավէս, և փառաթարդագիս ընկերկիմ. զթանդութի աւաւրն բառ-նամ, և ՚ի ժամ փորձուն անմամն ելա-նեմ. ՚ի բացուստ ձոռոմս խօսիմ, և ՚ի պատասխանատուութեն պահու պա-



պան

պանծեալ կարկեմ. ՚ի յելս արեւուն հա-րուստ երեւիմ, եւ ընդ երեկս ունայն գեղգեղիմ. ՚Ի յաթոռս ծերոց բազ-մեալ, եւ խելայեղից կցորդիմ. ննջեմ խելթիւ՛, եւ արհաւրօք զարհուրել զարթ-նում. Ո՛ անդատաստան կամեցայ՝ չարա-չար հերկեմ, փոյթ խնամով ՚ի չարիս. միշտ անսասանակ որդիս. անդադար տարա-գրեալս. անզղջական զառածեալս. ան-մխիթար տրտմեալս. ինքնագրաւ գե-րեալս. մահու եւ ապականութե ծառա-յեալս. անողոքելի տանջեալս. անփրկե-լի մատնեցեալս. անպատմ՛ատելի հա-լածեալս. անարծարծելի շիջուցեալս. անկազդուրելի խորտակեալս. անհան-դերձելի կործանեալս. Իսկ եթէ պարտ է զառաջինն տառանոր տալ անօրի-նեալս անձինն նախատինս, ահա գրեմ, գրեմ եւ ոչ անխնայեմ ՚ի խուժան նիւ-թեալ գեհենին. Աստուածածն նախան

ձու նորայս աղաւնոյ երկնայնոյ , որ և
կայենն առաջին՝ հնոյն և հողեղինին .
որ ունէին ըմնաւն սատուսա 'ի յանձին
զնշանակ ամբաստանութեան , ոչ գշըն
չոյս առաքինութիւն , այլ զըանեցս
կշտամբութիւն.

3 Նաւարդ՝ մեր լցեն փրկութիւնքն,
ուր սկզբնահայրն հաւատոց՝ 'ի յուսա_
հաստութեն վայրի՝ ղանդթութեն իմ
չարիս կրկնէ . մեծն մարգարեից՝ .քա_
րանիք բանից կոչկամէ . արին բարե_
փառ՝ աշտէրին նիզակա՝ 'ի մահ սատա
կէ . պատկեր Ճշմարտին՝ ընդ աքարա_
համայնիւն ջնջէ . ծարեալն վէհից՝ յա
րադաղացն վրիժուց մատնէ . մարդա_
րէածքն տեսանօղն՝ ընդ անմարէկացոյն
առաջի ան սպանանէ . նախանձաւորն
այ՝ երկնատեղաց բոցանն վառնէ . ըստ_
ծներին լրացին՝ և նորայս սկիզբն՝ հե_
ծանոյն ընտրութե հասէ . պետն ա_

 ռա

առաքելոցն՝ ընդ սափփիրայի 'ի կենաց զը-
րաւէ · զարմանալին քննութե̅ հոգւոյն՝
բուրումն իւն̃ մահու՝ ընդ կենացն քա-
րոզ խառնէ ։ Ո՛րդ՝ անաշխատք և իւն̃
կամաւորք երջանկացն , և ուժգնութե̅
հրամանի վերնոյն՝ որի սպառազէնք ·
ընդ հրեշտակացն՝ և մարդիկ · ընդ տի-
եզերաց երկրի՝ և տարերք · ընդ անըզ-
գայիցն՝ և շարժողականք · որովք դա-
տեալ միշտ լինին տուժիւք լկտեաց՝
յօրինակ և յիշատակ սոսկալեացն ապագա-
յիցների հոլովիլ փոխթորկի ալեաց յաւէտ
մրրկեալ կենացս վտանգութի՝ մնայ ան-
կայուն 'ի հաստատութեց ։ Ո՞ր եթէ
դք իմաստութե̅ 'ի քննին առեալ խու-
զեացէ զլուղակացն բազմատեսիլ զա-
նազանութի , զմանունս փոքունս ընդ
մեծամեծացն դասեալ , որ առանց թո-
ւոյ և բանակութե̅ համարոյ՝ թիւոյս
առեալ անքաւ երամոց , եռան զեռանն

ողանան 'ի մարմինս ծուլու , վկայեսցէ
և հաստատեսցէ Ճշմարիտ լինել զասա
ցելոցս բանագրութիւն։

4 Ո՛վ դու ինքն օրհնաբանեալ ան_
մահ Թագաւոր՝ բարի երկնաւոր մար_
դասէր քո, որ կենդանւոյ միածին որ_
դի, հզօր, բարձրեալ, անքննելին, ան_
ճառ, քաղցր, անհաւոր, սաստեա 'ի ձը
մեռն ամբոխեալ ալեաց ոգւոյս ծփա_
նաց. արձանացն զծարաւս մղեցին
շարժման սրտիս խռովութե. ընդոտ_
նեա 'ի սանձս կարգի երասանաց ըմ_
բռնման՝ զցնդեալ միտս փայլատու_
թիւն. Նորոգեա խաղաղութի հրամա_
նաւ մեծիդ՝ ամենակարան բնոյս սա_
սանման. սաստկեա խափանեա զխաղ_
մազխեան անդամս ուրուականս գաղտ
նեաց ամօթոյս՝ երկրակենցաղս հեշտից.
Գրեսցես աղօթս մտամտոյցս զայս
նորընծայս տաս, ողորմածէրս Թախծա_

զին ձայնի ողբերգութեան այսր մատենի: Զա՛ն ՚ի խորոց մահուս անդընդոց՝ չքնաղ աղերսեալ, ընդ մարգարէին փրկելոյ · ընկա՛լ զխոստովանութիւն անձնադատ բանիս ՚ի հաւատ անուշից · շնորհեա՛ մխիթար դառնութեան վշտաց ուժգին հեծութե՛ն յուսահատելոյս: Եւ քեզ ընդ Հօր հոգւովդ սրբով փառք պատի՛ւ և իշխանութի՛ւն յաւիտեանս · ամէն:

---

## Ողբերգութեան:

### ՚Ի խորոց սրտից խօսք ընդ Ա՛յ:

### Բան · ԿԴ:

1 Ա՛ծդ երկնաւոր՝ Տ՛ր բազմագութ, ուռ ա՛մ բան՝ յանմի միջոյ երկայնամիտ, ա՛յ կենդանեաց անքննելին որդի: Ն՛հա անուն է ողորմելոյն խնկոսցես, յուրում հաւատաւ ակնկալութիւն փառաւորելոյն· անուն է բարեգործելոյն, յորում անուա

թիւն իմաստիցն խափանեցաւ . յայնմ
ժամու է մարդասիրելն, յորում տկա-
րութեն փոխանորդ պաշտպանեալ ախտեաց
ներքոյ և արտաքոյ։ Ընդանօր է բժըշ-
կութի ամենայնի քոյ ձեռնինդ, յորժամ
ընդ անդամոցն ունելի ես կենդանու-
թիւնն . այն վայր է այցելուէ, յորում
ելք հնարից ոչ գոյ։ Այն է քո մե-
ծութի, յորժամ զյուսահատութեան
վէրս ողջացուցանես . այն է հարազատ
քումդ ազգակցութե, եթէ յանկըն-
կալն ժամու արտեստաւորեսցես փըր-
կութի ։ Այն է հանդիսարան քում
յաղթանակի, եթէ զփակեալն մասս
կենաց 'ի պատուանն շնչոյ՝ բացցես .
այն են քո շնորհք վայելչականք, եթէ
զչարեացս իմոց մնացելոյ՝ զչարեացդ
քո ջնջեսցես ։ Յայնժամ ես անխափան,
եթէ ազախտաւորքս՝ ընդ երախտաւո-
րացն խնամարկեսցես . 'ի սոյն ծանել


գի

գլխոցից , եթէ նայեցար 'ի նուէր բա
նիւ՝ նախնի գթութեդ , եթէ զամլո-
րութի չարեաց բարձես ։

2 Ողորմեա այսորիկ հիւսին բանք , և
եղանակին նուագերգութիք , յորժամ
ամէրն բարի՝ չարն ծառայի՝ զպարեգոր-
ծացն պարգևեաց , որ մինչ խրատամբք
մնաց բանսի , նա յարքայական ա-
պարանս զնա հանգուցէ ։ մինչ հրա-
ւիրեալ է 'ի գուբ առիւծ , նա 'ի բաղ-
մակումն ամենապատիւ գահոյց գրդե-
ցուցանիցէ ։ մինչ բերելոյ զաչն դի-
տեաց , նա 'ի բարձրութի բերկրութե
հայեցուցանիցէ ։ մինչ ծառայութեան
մատանցն արկան , նա մատանի հանճա-
ձարութե մատուցանիցէ ։ մինչ հայի
հարուածոց գանից , նա գթոց գլխա-
արկանիցէ ։ մինչ պատրաստեալ յաւայ
կորստեան , նա երևելի ամսոց բաղ-
մաց առնիցէ ։ մինչ ածն ունի սատակ-
ման

մահն մահու , նա ընդ կենացն և փառս ընծայեցուցէ · մինչ հատման գլխոյն նայեցցի , նա զնոյն պսակաւ պայծառացուցանիցէ ։ Ո՛վ պտուղք օրհնութե՛ գըթած , պանծելարմատ քում շառաւիղաց · ո՛վ արգասիք կենաց՝ արարչականդ քո հրամանաց · ո՛վ իղձք խորհրդոց՝ խոստովանութեանդ քո տենչանաց · ո՛վ նշոյլք լուսոյ՝ ամենատափիրադ ճառագայթից · ո՛վ ախորժութի ճաշակաց՝ բարեբանութեանդ քո քաղցրութե ։

3 Ո՛ միայնոյ են պարգևքդ՝ տէր , ՚ի քէն աղաչեցաւ գրել ինձ զսոսին · ահա՛ զքոյդ յատուկ աղերս աղաչեմ՝ օրհնեալ , ՚ի քոյոց այսի պարգևեալ շնորհեա՛ · բա՛ց տէր զգանձս քո բարիս , ըստ աղերսանաց առաջին ։ Մի՛ խառնեսցես ՚ի համբարս բարեացդ քոց՝ ՚ի չարեացն իմոց · մի՛ շտեմարանեսցես զատելին քո՝ որ են ախտութիք և ցաւ_



մունք

մանուկք , ընդ սիրելեաց քո՝ որ են գը–
թութիւնք և ողորմութիւնք . մի՛ պահեսցես
՚ի ստացուածս քո պաշտելեաց՝ զանա–
խորժելեաց քո՝ որ են մթութիւնք և
դառնութիւնք , և զիմ ցանկալեացն՝ որ
են մեղք և թշուառութիւնք . Մի՛ գը–
րեսցես ախտակիր օրհնութեան ՚ի մատենից
կենաց՝ զմուրհակ պարտուց իմոց ա–
նիծից . այլ զանհնարաւորան իմն հա–
մարեալ՝ մեծացուսցես կրկին առա–
ւել զանուն քո տէր՝ ՚ի նոսին , ցու–
ցանել զայն իմն դիւրին և հեշտա–
կանագոյնս : Ո՛րք են իմ պարտիքս և
անդր քան զթիւ , այլ ո՛չ այնքան հրա–
շալիք իբրև զքո զողորմութիւն . բա–
զո՛ւմ են մեղքս , այլ յաւէտ են նուա–
զեալ առաջի քոյդ ներողութե . յա–
ճախ են չարութիւնքս , այլ յաղթական
են համայնից՝ հզօր ամենակալ , քոյդ
մարդասիրութի . իմն են անհամար՝ ի–
մայս

ձայս անձին ընծեք, այլ քեզ՝ յոյժ դը-
րուեալ են ընդ սահմանաւ։ Ո՛չ են
այնքան զօրաւորք առ կենդանութիւն՝
զենք մեղանաց պատկառեցելոյս պըր-
զաբերութե, որքան յիշատակ մահու
կենդանարար՝ առ վանումն կործանա-
զին բռնութեան։ Ո՞րչ աղաւեսցէ
փոքր խաւար՝ աւուրդ ոյ. զիա՞րդ բա-
ւեսցէ դոյզն ինչ աղջամուղջ՝ մեծի-
ձառագայթից. զիա՞րդ համբարձցի կըր-
ռեսցի ընդ խաչի քո կրից՝ խախութի
հեշտութեան՝ մարմնոյս ակարութեան։
Ո՞րչ երևեսցի յաչս ամենակալին-
քոյ առատութե՝ կոյսք մեղանաց տամ
ափեզերաց. ահա կոչա մի հոլոյ դիւ-
րամփիզակելի՝ ՚ի կործրուէ բախման վա-
նեցեալ, ետր զպղպջակ անձրևոյ բազ-
մացեղ համանակք քո կամացդ՝ չքացել
տայթեալ անդստին։ Ո՞րչ պիտոյ
են քում զօրութեդ ամենահնարդ կա-



րո

րողութե՟՝ ժամանակաց առաւելութի՟
առ յանցուածոց իմոց քաւութի՟ . ոչ
քթթել մի ական . ոչ խառն մի տեսութի՟
ածանցական . ոչ սակաւ մի նայեցուած
փայլական . ոչ կիսամամանեայ յամրութի՟ .
ոչ փութացելոց ստից յեղեղումն . ոչ
յելից բարձրութե՟ մտաց կանգնոյ կա-
թի ակնունելոյ . ոչ գիծ մի չափոյ՝ մնաց
հետեւեցելոյ . ոչ նշուղից արագութի՟ .
ոչ չնչոյ տարբերութի՟ . ոչ ինչ յայսմ
յանցող եւ յանտապաւորական նմանութե՟
անձեւ օրինակաց յաւէտ անկայից՝ այն-
քան առժամայնք , կամ հարեւանցիկք,
որքան եղծմունք , ցնդմունք եւ հալ-
մունք մեղուցս սառնամանեաց պահես-
տի՝ քումդ զօրութե՟՝ ա՟ծ ա՟մի ո՟ր յա՟-
քմ՟ որդի անքննին կենդանւոյդ ա՟յ :
Որ տաս պարգեւս արեւքաղցրութե՟՝
չորոց ընդ բարիս . եւ անձրեւս երկա-
քանչելեացն անաչառա՟պս : Աչխես սահ
մա

մանես իրաւամբք՝ և զվտանգս կրեցն
հաւատարարաւոր · որոց մեծ է հան-
գիստն առ ակնկալութի պարգևին ,
փոքր խթանաւ փորձութե՝ զպակա-
սութի պարտուցն աստէն վճարես ·
իսկ որ զերկիր ընտրեցին , ներես ո-
ղորմութբ , տալով և նոցա դարման ը
նոցա՝ միշտ առ քեզ դարձին ապաւես։
Եւ քեզ փառք ամենազօրիդ՝ առ ամ
հրաշագործուի բարեխնամօղ երկայն-
մտութե , օրհնեալ յաւիտեանս . ամէն։

---

[illegible]

Ի խորոց սրտից խօսք ընդ Այ։

Բան . ԾԴ։

1 Արդ՝ դու միայն Ած երկնա-
ւոր՝ բարձրեալ՝ բարեգործ՝ քո
է զօրութի , քո ներողութի , քո բժշկ-
կութի , քո առատութի , քո են պար-
գևք , քո միայնոյ են ձիրք ձրի , քո քա



ւու

ւութիւն, քո պաշտպանութիւն, քո հնարք
անիմանալիք, քո արուեստք անհասանե-
լիք, քո չափք անչափելիք. դու սկիզբն
և դու կատարած։ Քանզի ոչ երբէք
առաւելացուցանէ զլոյս ողորմութեան
քո՛ խաւար սրտմտութեան. վասն զի ոչ ես
դրուեալ ընդ մատամբք ախտից՝ ՚ի
վերոյ քան զբան։ Պատկեր անպարա-
գիր՝ անդր քան զորքանութիւն կշռութեան.
անչափ լայնութիւն փառաց. անտարրա-
փակ ընդարձակութիւն հաստու զօրութեան.
անամփոփելի առաւելութիւն բացարձա-
կութեան. անտկարանալի բարերարու-
թիւն գթութեան։ Դու դարձուցանես՝
ըստ մարգարէին, յայգ՝ զստուերս մա-
հու. որ իջէր կամաւ ՚ի տարտարոսն
ներքին արգելականացն բանտի, յո-
րում և մահթանացն դուռն էր ա-
խեալ, և գերեալ անտի զմթերիցն կա-
պուած՝ վտարանդելոցն հոգւոց, առ-


նէր

սէրըդ հրամանի յաղթական բանիդ՝ ըղ-
կաց ստատակման մահուն խղեցեր , և
զմեղացն կարծիս ջրուեցեր ։ Դա՛րձ
առ իս՝ որ զընդդամ զընդդանաւ վհիս՝
տղմասիգ գբոյս՝ յերկաթս մեղաց , վի-
րաւորեալ խոցմամբ ալքաց՝ բանաւրկ
ու՛թն նետից ։

2 Լ՛ ղ դու յամենի որդ բարերար , ըղոդ
՚ի մէջ խաւարի , որհնութեդ գանձ ,
ողորմած , գթած , մարդասէր , կարող ,
զօրաւոր , անպատում , անքննելին , ան-
ճառ ։ բաւական՝ ըստ ա՛յն յակոբայ ։
անհնարինդ ամենից՝ դիւրադատորաստ
հնարաւորութ , հուր ծախիչ՝ զխոտիս
մեղաց , ճաճանչ կիզանող՝ ընդհանրա-
կան թափանցանցութե խորհրդոց մե-
ծի , մինչեւ զիս յողորմութե քո՝ որհ-
նեալ , և մի՛ յերաւունս քո ։ ՚ի ներողու-
թեան քո , և մի՛ ՚ի հատուցման ։ յեր-
կայնմտութե , քան ՚ի հաւասատութե ։

Եթէ կշռեսցես զմեղանաց իմոց ծան-
րութիւն . ընդ քաղցրութե քո՝ և մի
ընդ արդարութե . զի առ սակ նախ-
նումն՝ յոյժ է նուաղեալ , իսկ ՚ի ներ-
հակ վերջնոյս՝ յաւէտ ծանրակիր։
3 Որդ՝ մատի՛ր առ իս՝ բարութիւն ,
ո՛վ յաւիտենին բժշկութի՝ հակառակ
քո համբերածելոյն . բարձ ՚ի մեղուցե-
լոյս զհողմ մահու խաւարութեսս , զի
հանդիցէ յիս ամենակալ հոգիդ խա-
ղաղութեան։ Եւ քեզ փառք յաւէտ ,
յաւիտեանս յաւիտենից . ամէն։

[illegible] շնորհաբերութեան .

Ի խորոց սրտից խօսք ընդ Այ։

Բան . ԿԷ ։

1 Եւ քանզի ընդ ողորմածութեանցն բա-
նաստեղծութեց վերընծայելոց
դղրութի Թանգաս յարմարեցի կական
և հեծութի , հառաչանք կողկողագինք ,


դառ

դառնութեան լալումն և արտասուաց
երգ, դարձեալ սկսայց զճառ պաղա-
տանացս՝ խոստովանօրէն զզջականա-
բար, զգաղտնածածուկն յայտնաբար-
բառ. զի անդրադարձութ՟ սկզբնաւորէն՝
և միջնորդօքն բանիւք, զնոյն համա-
ձևութ՟ի ՚ի մի թախանձ նմին մաղթա-
նաց՝ հոգեկեցոյցն խոնարհութե՝ աս-
տանօր եդից ։

2 Մեղայ մեծիդ բարերարութե, ա-
նարգս մեղայ. մեղայ ծագմանդ ճառա-
գայթից, խաւարս մեղայ. մեղայ չնոր-
հացդ անբաւ երախտեաց, արդարև
մեղայ. մեղայ սիրոյդ վերնում գթու-
թեան, յայտնապէս մեղայ. մեղայ լու-
սացողիդ յոչէուէ, ստուգապէս մեղայ.
մեղայ գերունակ գոգոյդ գրկանաց,
անբաւս մեղայ. մեղայ աննմանդ լու-
սոյդ փայլման, նենգօղս մեղայ. մեղայ
ճաշակման անճառդ կենաց, բազումս


մե

մեղայ • մեղայ անհաս պարգևացդ Տրից,
հանապազ մեղայ • մեղայ գովեալ մարմ
նոյդ Տն , մահուչափ մեղայ • մեղայ պաշ
տելի արեան արդարչին , խնկածիս մեղայ.
Ահա արդարև օրհնեալ է հաստատած
բանին՝ յուսադրական սրտի՝ այսր մե
ղայի • այն սա՝ պատուելի աւանդ • ան
մոռաց պատուէր • հայրենեացն տուր •
նախահարցն օրէն • համայնից Թոշակ •
անհերքելի բան • զօրաւոր պատասխա
նի • կենդանութե կամուրջ • անխորժելի
վերնոյն • սիրելի արբուց • անխզելի կապ •
հրաշալի բարբառ • անշրջելի պատճառ •
բաղձալի աղերս • փափաքելի սեղան •
սրտաբեկ հնչումն • անհնարից ճարակ •
կարծրութե վանիչ • ամենապաշտից սահ
ման • հեթանոսաց գիրք • վաղնջուց կա
նոն • քրիստոնեից հարազատ • արար
չութեան յաղթող • անջրպետ հզօր •
խորոց ահաւոր • արուեստ բարձրութե •

 խո

խորութեան անչափ. հիացման տեսիլ.
խորհուրդ կնքեալ, ընդ որ չի՛ք ումեք
անցանել, եթէ ոչ անըմբռնելի մտաց
արագմանն՝ զսա ծանիցէ. Զայն բարե-
պատեհ հրաշափառական, որ ոչ յիշա-
տակեցաւ ՚ի վերջին դատաստանիք դա-
սուն լծելոյ. գուցէ առ նմին խզեալ
համառօտ ըմբռնման իրաւանց մահուն
հատելոյ, յորմէ ընդութեան ապագործ-
եղեալ, զառհմանն յաւիտենական քակ-
տեսցէ: Օ՛րդ փառաց մեծութե՛ն,
որով նոյն ինքն ամենութեան պսակեալ
բարգաւաճի: Բանզի ո՞վ ոք դիմեալ
կարէ գեղջերաց սեղանոյ այդր սըր-
բութեան, և ոչ առժամայն պրծեալ
՚ի պատժոց՝ անտրատ զատա: Իսկ ե-
թէ ոքոր զարմեան, և սաստող կի-
ներն, և յաղթա սխմնեան՝ ասելով
զայն ոչ արդարացան, և ես վկայեմ՝
իրաւամբք խոստովանեալ զայս պայման



բա

բանի, զի ակամայիցն բռնադատելոց՝
ոչ է կատարեալ սէր, ուստի և ոչ բռ-
նադատապէս փրկութիւն։ Իսկ ես կա-
մաւ համբուրեմ զպարծեալ կոչնելով
զերջանիկ բանիդ զմկրտութեան հա-
ւատս։

3 Մեղայ երախտեացդ մոռացութեամբ,
վերբարձին մեղայ. մեղայ մարմնոյ
ձեռն՝ յոգւոյ հարեալ, յիմարս մեղայ.
մեղայ առ կենաց դժրողութեան,
խիկ և խիկ մեղայ. մեղայ բանիդ ա-
պախտ առնելոյ, չարաչար մեղայ. մեղայ
'ի յոր սատակման՝ ինձէն ախտեալ,
փառաթարս մեղայ. մեղայ պարտականս
անկենդան մահուն, ձաղելիս մեղայ.
մեղայ անպատկառս քո բարձրութեան,
տաղտկալիս մեղայ։ Վերջին ինձ կոր-
կին աշխար հողևոր, զի 'ի կորուստ
և 'ի կործանումն ինձ երևեցայ. զի ան-
դարձ վարատեցայ. զի որդիս՝ թշնամի

 գրե-

գրեցայ. զի 'ի բարձանցն երկնից ըն-
կեցայ. զի փուշս վարուց դիզի: Եւ-
ես առ սմին ողբք աղաղակի, զի ան-
ձամբ զանձն անարգեցի. զի բագին
կռուոցին գտայ. Այլ լինի կսկիծ դժըն-
դակ սրտի, զի զիս ունին' առ որ չեմ,
զարտաքնայարդար բաժակս անմաքուր,
զբուեալ որմն գարշունակ, զսին պար-
ծանօք պաճուճեալս, զայս' 'ի մէջս
շրջեալ, զգերանակիր աչնա' թշուառա-
ցեալ, զշնչս փառաց' շիջեալ, զանմիտս
յամի ամ լինք ձնաստակարս, առ տնօրի-
նականն տէրունականս. առ յայտնու-
թեանն աստուածայինս. առ երևմանն ա-
բարչագիրս. առ խոնարհութեան սար-
սափելիս. առ այն' զոր տեսի աչօք իմ
իմովք: Առ որ մեծ է պատասխանա-
տուութիւնս, քան առ համօրէն ան-
տարանին' զարմանս, հիացմունս. հոգս
հաղորդականս. անդադարմունս անհնարա-

ւորս · թշուառականութեան՝ մնաց անդար-
դելլիս · ելմունս անկատարս · իջմունս
անհատատս · յուսահատութիս յար-
մարտականս · յանդիմանութիս պատշա-
ճականս · ձաղանս պատեհագոյնս · նշովս
իրաւացիս · անէծս արժանահատոյցս։
Որք՝ այսոքիկ են մեղաւորիս իմ կըշ-
տամբութիւնք, և ինքնահարուած տան-
ջանաւորութիւն։

3 Եւ քանզի կարող ես զայս ամ ըղ-
պարտս թողուլ, և զխայթուածս մա-
հու բժշկել՝ տէր ողորմութեանց, ամ-
բողոքից, Քս թագաւոր՝ բարձրեալ հօր
որդի, անեղծիչ՝ գթած՝ բարերար, օրհ-
նեալ՝ առատ՝ հարուստ, ահաւոր՝ հզօր՝
ողորմած, տեսուչ՝ ձեռնկալ՝ հաստիչ,
ապրեցուցիչ՝ դարմանիչ՝ կեցուցիչ, եր-
կայնամիտ՝ աննախանձ՝ ապաւէն, բը-
ժիշկ՝ գովեալ՝ երկնաւոր, անձառ՝ լոյս՝
կեանք, յարութիւն՝ նորոգութիւն՝ քա-

ւութիւն , եթէ հայեսցես մարդա-
սիրութե՛ , ըստ որում քոյդ են սովո-
րութիւնք , նայեցեալ 'ի քեզ՝ կողկողիմ
և ես ։ Եթէ ըմբիցես , հառաչեմ ։ եթէ
ունկն մատուցանիցես , պաղատիմ ։ ե-
թէ անսայցես , աղերսեմ ։ եթէ նե-
րեսցես , աղաչեմ ։ եթէ առ իս դառ-
նայցես , գոչեմ ։ Ապա եթէ անտես
առնիցես , կործանիմ ։ իսկ եթէ առ
ոտն հարկանիցես , լամ ։ եթէ զոգե-
պահն ոչ ընծայեսցես , մեռանիմ ։ ա-
պա եթէ ահարկու դէմս ցուցանի-
ցես , սատակիմ ։ իսկ եթէ սաստես-
ցես , դողամ ։ եթէ խեթիւ տեսա-
նես , սոսկամ ։ ապա եթէ սաստկանաս ,
սարսափեմ ։ եթէ հալածես , հեծեմ ։
իսկ եթէ ընդվայր հարկանիցես , հեր-
քիմ ։ եթէ զլոց վհատութեանս ոչ առ-
ցես , տագնապիմ ։ եթէ խստանաս ,
փախնում ։ ապա եթէ պատնաս , ընկ-



ճիմ

Չիմ: Իսկ եթէ քննես, քարկոծիմ. ապա եթէ ուժգինս ախորժես, սուզանիմ. եթէ ոչ անխայեսցես, մերժիմ. եթէ կոչեսցես, խիթամ. իսկ եթէ աչս յառեսցես, ամաչեմ. եթէ ձայն տացես, երկնչիմ, ըզբարեացն պարգեւ մատնեալ. զերանութիւն թուղեալ. զշնորհն լքեալ. զուխտն ցրւեալ. զաւանդն կենաց՝ մոռացեալ. զհամարձակութեան վստահութիւն կորուսեալ. զառեղծիչ ելիցս՝ բարկացուցեալ. զանձառութիւն շնորհին՝ ընդունեալ. զպատուոյն պատկեր՝ աղաղեալ: Իսկ եթէ առ այս խեղդ մահու հեծութիւն ցաւոյ մորմոքեալ՝ առ իս ժամանեցուսցես տէր յո քո կարդեալն գիր ընանել 'ի յիս, եթէ բժշկութիւն դադարեցուցանէ զմեզս մեծամեծս. որով ամենառատ քաղցրութիւ պատուաստեալ 'ի քեզ, զքոյդ



կեր

կերպարան լուսոյ նկարեալ յոգի՝ մե-
րըստին գտեալ պնդեցուցց քաւեալ, եւ
առեղծեալ կրկին 'ի փրկութի անմա-
հից կենացն անախտականաց. եւ քեզ ը̃
հօր հոգւովդ սրբով փառք յաւի-
տեանս. ամէն։

## Մատեան ողբերգութեան։

### Ի խորոց սրտից խօսք ընդ ա̃յ։

### Բան. ԽԷ։

1 Եւ արդ՝ զի՞նչ գոյ աւել անմշե-
ցելոյս յերեսաց մեծիդ ահաւո-
րութեան, բայց եթէ համրանալ, եւ հող
'ի բերան եդեալ լռել 'ի սրտի, ըստ
մարգարէութեն խրատու, ահա 'ի բա-
րւոյն կարկառեալ 'ի յոյս։ Իսկ եթէ
զփականս շարժողութե շրթանցս բա-
ցից բռնադատեցից՝ խօսել կամեցեալ,
դարձեալ զնոյն ձայն կրկնական ե-
ղերերգութե լալեաց բազմաւէ՝ խեթ

 մտա

մտացս յառաջադրէ։
2 Իսկ արդ՝ ողբալից մեծ մեղաւորին անօրէնելոյ կամաւ առ 'ի մահ՝ զնորին գոչումն երկրորդեցից և ես ընդ նմին. Մեղայ տէր՝ մեղայ, և անօրէնութեանց իմոց ինձէն վկայեմ։ Հիւսեալ ընդ նմին զբանս յիսներորդի սաղմոսին, անթիւս գրեմ զպարտուցս սակս անձինս մեղանաց՝ քան զհիւղ երկրի հողմահաս փոշւոյ՝ ընդ օդս ա̅մ տարածե-
ցելոյ։
3 Մեղայ յերկինս և առաջի քոյ, ընդ անառակ որդւոյն պատկառեցելոյ՝ հայրենի զթոյդ վերստին դարձեալ՝ թախանձ արկանեմ․ զողորմելին ձայն աղերսանաց՝ արտօսրածին ողբովք գոչման՝ 'ի տխուր դէմս մատուցեալ առաջի քոյ տարածանեմ՝ հայր գթութեանց ա̅ծ բոլորից, չեմ արժանի կոչիլ, և ոչ ընաւին առ այս անուանիլ,

 ոչ

ոչ միայն որդի , այլեւ անպիտան ապա-
բան վարձկան ։ Ընկա՛լ զամեալս տա-
րագրական , պարտական ծառայից ․ եւ
զցաւ քաղցոյս՝ ըսկսանց նեղոյս նուա-
ղեցելոյս՝ կենաց քո հացի՛դ բժշկես-
ցե՛ս ։ Եւր ընդ առաջ քո ողորմու-
թեամբդ ՚ի սկզբնաւորս ապաւինու-
թեան ․ զգեցո՛ գըթած եւ անոխակալ՝
անօրինելոյս մեղապարտի՝ զնախակր-
պուտ հանդերձին ծածկոյթ ․ աւան-
դակորոյս ձեռացս աղտեղեալ մեղօք՝
զնինք մատանւոյն համարձակութե՝ ա-
մենաառատ կամօք մատուսցես ․ զգար-
շապարացս թշուառութի մերկութե
ոտիցս՝ պատրաստութե աւետարանա-
կան ամրամէրարկու օդիցս կօշկաց՝ ՚ի
յօձին թիւնից միշտ անխացուսցես ։
Օ զո՛ւարակդ պարարակն եզենդ երկ-
նայնոյ , որ է միածին որդիդ քո օրհ-
նեալ , խոկապէս մորդաախտութե՝ կա-



րօ

բոցալոյս բարեաց՝ նուիրեա՛ . որ մա-
տուցեալ միշտ՝ և անպակաս մնայ 'ի լը-
րութեան , յարակայ զենեալ 'ի սպանդա-
րանի անմահին սեղանոյ անսպառութեամբ,
բոլոր յամենեսին՝ և բնաւ յանձամբ ,
էութեամբ յերկինս՝ և խոնարհութեամբ 'ի ստո-
րինս , աննուաղ մարդկութեամբ՝ և ան-
թերի Աստուածութեամբ , փշրեալ՝ և բաշխի 'ի
մասունս անհատս , զի զհամայնն հա-
ւաքեսցէ առ 'ի նոյն մարմին իւրումն
գլխոյ . քեզ փառք ընդ նմին՝ հօր ո-
ղորմութեան յաւիտեանս . ամէն ։

Յետ հաղորդութեան ։

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ։

Բան . Է ։

1 Եւ արդ՝ ես երկրածինս մարդ՝
կենդանացեալս անկորուստ գոյի՛
զբաղեալ , և յիմարութեամբ պատրողակա-
նաւ գինեաւս՝ յիմարեալ , որ ամենայ-
նի՛

նիւ սուտեմ, և ոչ միով իւիք ճշմարտեմ։
Բանզի որո՞վ դիմօք վերագրեցե-
լովք՝ նշանակօք աղարտեցելովք՝ յան-
դրդնեցայց լինել յանդիման քում
դատաստանին, ո՞վ Իրաւադատ ահա-
ւոր անճառ՝ անպատում հզօր մծ բա-
րերից։ Բանզի դատեալ աստանին 'ի
սոյն՝ զապերախտութի մեղուցեալ ան-
ձինս՝ առ քումդ երախտիս, ցուցից
զիրաւունս քո միշտ զօրացեալ, և զա-
նիրաւութիս իմ յաւէտ պարտաւորել։
Որ արարեր զիս 'ի քո պատկեր պան-
ծալի՝ 'ի ձեռն վեհիդ տպաւորութե,
զտկարս օժանդակելով։

2 Զարդարեցեր բանիւ․ փայլեցու-
ցեր փչմամբ․ մտօք ճոխացուցեր․ ի-
մաստիւք աճեցուցեր․ հանճարով հաս-
տատեցեր․ 'ի չնչականացն որոշեցեր․
հոգւով իմանալեաւ խառնեցեր․ իշ-
խանականին գոյն պճնեցեր։ Զնար

Հայրաբար • սնուցեր դայեկապէս • տա-
ծեր առատօղապէս։ Տնկեցեր զամբա-
րիշտս ՚ի քումդ գաւթի • Ջրովն կենաց
ոռոգեցեր • աւազանին ցօղով մաքրե-
ցեր • կենացն վտակաւ արմատացուցեր •
Հացի՛ւդ երկնայնով ջամբեցեր • ա̃ծա-
յին արեամբդ արբուցեր • անհպիցն և
անհասանելեացն ընտանեցուցեր • զաչս
երկրեղէն՝ ՚ի քեզ համարձակեցեր • լու-
սովդ փառաց վերածածկեցեր • զհողա-
նիւթ մարմինս՝ անմաքուր ձեռացս՝ ՚ի
քեզ մատուցեր • զմխիթրս անարգ մա-
հացու՝ իբր զնշոյլ լուսոյ յարգեցեր •
զհայր քո հզօր ահաւոր օրհնեալ մար-
դասիրապէս և անարժանիս իմոյ ան-
ձին կոչեցեր։ Ո՛չ կիզեր զբերանս ըզ
ցեալ նանրութեամբ՝ ՚ի ժառանգակիցն
կարդալ զքեզ • ո՛չ կշտամբեցեր զայն
դրդնեալս՝ ՚ի քո կցորդութի̃ • ո՛չ ըստ-
ուերացուցեր զտեսիլ աչացս՝ ՚ի քումդ
ակ

ակնարկութեան · ոչ արգելանաւ կապա-
նաց՝ ընդ մահապարտացն տարադրե-
ցեր · ոչ խորտակեցեր զդաստակ բազ-
կիս, որ անմաքրապէս առ քեզ համբառ-
նայր · ոչ մանրեցեր զոստս իմոց մա-
տանցս՝ ՚ի շօշափելն զբանն կենաց · ոչ
պատեցին զինեւ մառախուղք՝ ՚ի ձօ-
նելն զքեզ՝ անհաւատ · ոչ փշրեցեր ըզ-
պարս ատամանցս՝ յամ ուտելն զքեզ՝
անսահմանելի · ոչ գնացեր բարկութե
խստորնակ՝ խստորնակի ընդ քեզ հե-
տեւօղս, իբր ընդ վրիպէլ տուածն խրա-
տելի։ Ո՛չ խայտառակեցեր ՚ի հարսնա-
րանին՝ զանարժանս քումդ պարեր-
գութեան · ոչ ՚ի գձուձ հանդերձին տե-
սիլ՝ զանօրինաւս յանդիմանեցեր · ոչ
կապանօք ձեռաց եւ ոտից՝ յարտաքին
խաւարն հալածեցեր։

3 Ո՛չ այս միայն մասունս բարեաց՝ եւ ըզ-
ներելոյդ երկայնմտութեան ընկալեալ ՚ի



քեն

քեն՝ բարեբար օրհնեալ, և յամի միշտ երկրպագեալդ, փոխադրեցի միասակարս պարտեաց՝ անթիւս և բազմօրինակ անօրէնութիւս, մարմնականաց և անձնականաց՝ ամենակիր բազմածուփ խորհրդոց յուզմանց երկարաքարշութեաց։ Օ այսուիկ քեզ՝ ա̃ծ իմ և տէր, ընդ այսքանեաց բարեաց փոխարեբերեցի. զայս քեզ՝ ինձէն հատուցի չարիս, ըստ մոլոխեան յանդիմանութեան առակի, մոռացեալ զխնամատուութի՝ և սիրոյս յիմարութե։ Օ այսց բարեաց երախտեաց կաձաւս՝ ընդունայնութե զնացիւք՝ չարաչար ունայնացուցի. զայս լուսաւորութի չնորհաց անձառից՝ 'ի բարձրելոյդ խնամոց բարդեցեալ՝ մրրր կուն խեղդարութե ցնդեցի. Նութէպէտ բազում անգամ ծանուցար՝ կար կառամամբ ձեռին քո այցելուե ձգել զիս առ քեզ, ոչ հաւանեցայ, ըստ մար



գա

դարեին՝ որ զխարայելէ ամբաստանու-
թեան. և թեպէտ խոստացայ դաշնա-
ւորեցի քեզ հաճոյանալ և ոչ ընդ այսմ
սահմանաւ ուխտին փակեցայ, այլ դար-
ձեալ զնոյն նիւթեցի չարիս, անդստին
յաձն առաջին մատեայ, փշոցն մեղաց
հերկեցի զանդաստան սրտիս՝ յորոմանն
արդ ինատրութի։ Ո՜ւ իս եղանեն ա-
ւածք՝ ածարեալ որ մարգարէիցն,
քանզի մնացեր յինէն խաղողոյ, և ես
ընդ այնորիկ փուշ շառաւիղեցի. դար-
ձայ յանապատ գառնութի՝ պտղոյ այ-
գիս ստարացեալ. բուռն հարի զան-
հաստատ հողմոյ, որովք միշտ տատա-
նեալ՝ այսր անդր տարուբերիմ. ըստ ձայնի
երանելոյն յոբայ՝ ընդ ճանապարհ ինն
անդարձ գնացի. ի վե՛ր աւազոյ՝ շին-
ուածս յիմարութե կառուցի։ Այ-
նատարր հետովք խաբեցայ՝ կենացն
անձկալեաց հասանել, փակեցի ինձէն

 զէ

զելիցն ուղղութիւն, բացի կամաւ
զկորստեան խորխորատն։ Խցի զպա-
տուհան լսելեաց իմոց՝ առ բանիւք կե-
նաց ընդունելութի․ կափուցի զաչաց
հոգւոյս հայեցուածս՝ առ 'ի զկենացն
դեղ նկատել։ Ո՛չ ընդոստեալ 'ի թըմբ-
րութեց լքմանէ մնացի՝ 'ի պատգամ
փողոյն ահաւորութե․ ոչ զգաստացայ
'ի բողոք գուժի՝ հրախորձական ա-
ւուրն ընտրութե․ ոչ երբեք զար-
թեայ 'ի նիրհմանէ քնոյն մահացուի,
որ 'ի կորուստն կարապետէ։ Ո՛չ ետու
հանգիստ քոյ հոգւոյս՝ 'ի մարմնեղէնս
տաղաւարի․ ոչ ընդ բնութիւն շնչոյս
խառնեցի՝ զմանն շնորհաց քումդ պար-
գեւի․ իմոյս ձեռօք կոչեցի կորուստ,
ըստ առակողին, զհոգիս կենդանի մա-
հացուցանել։

4 Ու զի՞նչ է ինձ սակաւս եւ նուաղա
գոյնս յօդել սահմանս կնքելիս չափա
բե

բերականս, մինչ անցեալ է ըստ քանա-
կութիւն և վրիպեալ ըստ բժշկութիւն։
Որդի՝ քո՛ է ընձեռել կեանս՝ հոգւով
մեռելոյս, և անոխակալութ՟ մատչել
առ այցելութ՟ դատապարտելոյս՝ որդի
ա՟յ կենդանւոյ. քեզ փառք յաւի՟տ. ամէն։

Յետ Հաղորդութեան։

Ի խորոց սրտից խօսք ընդ ա՟յ.

Բան. ՀԸ։

1 Եւ արդ՝ անկեալ յերեսս հողա-
նիւթ կերպիս, 'ի վայր խոնար-
հեալ ծնրադրական երկրպագութ՟՝ ըղ
բարեգործիդ ողորմածութե՟՝ զկեն-
դանարար ոտս համբուրեմ, զայս օրի-
նակ մաղթանաց մեծիդ ընծայեցու-
ցեալ։

2 Աղաչեմ զքեզ միա՛յն խնամակալ, մա՛ր-
դասէր, գթած, կեցուցիչ, հզօր, ա՟յ
յերրու, պա՛շտպան, մի՛ ունայնասցի վաս-



տակն

տակն աշխատութե՛ փրկականդ նրից
մարդացելոյդ վ՛ն իմ՝ տ՛ր․ մի՛ տակ ե-
ղիցի քրտանցն կաթուած խառնեցել-
արեանդ՝ ՚ի մատնութե՛ն աւուր գիշե-
րին․ մի՛ լիցի ստու՛երացեալ լուսոյդ ե-
րեսաց, զոր ձրի և առանց փրկանաց
թշու՛առացելուս ինձ պարգևեցեր․
մի՛ ջնջեսցին շնորհացդ աւետիս, զոր
կողից քոց կայլակք նորոգեցին․ մի՛ ան-
շահ եղիցին կրիցդ պտուղք՝, զոր կա-
տարութե՛ս իմում մատուցեր․ Մի՛
պարծեսցի բանսարկուն վանեալ՝ զքո
ստացեալս խուրացուցանել․ այլ յաղ-
թեսցէս կամօք քո՝ ըղձից չարին․ վե-
րստին արշեսցի միանգամ զարհու-
րեալն․ կրկին պարտեսցի խոցա դա-
տեցեալն․ Մի՛ անխայեր զազատարարդ-
քո բան, որ զստեղծեալս քո քեզ ըն-
ծայեալ՝ վերստին առ քեզ դարձուցա-
նէ․ զանձառն արարեր բարերարութի՛


յա

յանակնկալ ժամուն յուսահատութե.
յորժամ ընաւ խոկ կորեալ և օտարա
ցեալ էր կենդանութեն շարժողուն,
մեռար անմահդ՝ և զմահացեալս նորո-
դեցեր. եթէ զկանոն համաձայնութե
օրինին փոխեցեր, արդ զդիւրինն և
զհեշտականն և զևս հնարաւորն մի՛ ար
գելցես՝ ընկղընաձիր ողորմածութե
բարեգութ օրհնեալ և երկայնամիտ
թագաւոր։ Մ. զղեա՛ բանի՛դ ամենա-
զօրաւ՝ որ զգոյութի լուսոյն տեղ-
ծեր 'ի նախնումն աւուր, և վաղվա-
ղակի փոփոխեալ գոյց 'ի լաւ անդր.
և փոխանակ զի ես ոչ խնդրեցի հե-
տևել լուսոյդ, դու ելցես ինձ յայց՝
Ճա՛ռագայթ ծագման հայրենի կեր-
պիդ, և կոչեցայց առաջի քո ծառայս
մխատապարտ՝ ողորմեալ շնորհեալ առ'ի
քեն. ոչ է ժամանակ յերկարաձգութե
առ 'ի զպարտսն հատուցանել, ահա շը

նորհեա՛ ինձ տառապելոյս զերեսս քո՝
լոյսով 'ի խաւարի մտաց վշտանելոյս.
Ողորմեա՛ և կնքեա՛ զընթացմունս ելիցս,
որ միշտ զեղուն բարիքն հոսեալ 'ի յու-
շոյս իմ տեսութե. պահեա՛ ինձ զշնորհ
ամենապայծառ գանձուցդ միացակա-
նաց, որով պատուական գտեալ՝ քո՛ ան
ուանեցայց, պաշտպանեալ 'ի քէն՝ ան-
սահման բարի.

3 Ահա ողորմեա՛ ինձ գթած, աղա-
չեմ զքեզ ողորմեա՛ ինձ հզօր, կրկին
ողորմեա. Մի՛ փոխարկեր երկուսս զա
ւոց՝ ըստ չարեաց իմոց բարիդ ամե-
նեքին. մի՛ բառնար 'ի վտանգելոյս՝ զառ
'ի քէն պարգևեալդ շնորհ. մի՛ կապտեր
զիշխումն ամենօրհնեալդ հոգւոյ. մի՛
լուծաներ զխնկեալ զինէ արքունա-
կան պատկերիդ. Մի՛ յայտնեսցէն
փուշք մեղանացս՝ 'ի սրբութս մտացս.
մի՛ խզեր զկապ միութե՝ զընդ քեզ

սիրոյն պնդութե՟. մի՛ մերժեսցես զար-
ուեստ զօրութե՟՝ լեզուոյս յարմարու-
թեան. մի՛ պակասեցուցաներ զաջող-
ուած աջոյս՝ առ 'ի զլուսոյդ մատուցնա
բաշխել: Մի՛ գրեր 'ի գրպութե՟ կե-
նաց մատենիդ՝ զմահուն պարտիս. մի՛
պահեր. մի՛ լինձ համարիր. մի՛ յիշե-
ցուցաներ. մի՛ ամաչեցուցաներ. մի՛ նա-
խատեր. մի՛ ոտն հարկաներ. մի՛ արձա-
նացուցաներ զմեղկութեցն. մի՛ ամբա-
րեր զկորստեանցն. մի՛ իբր անօգտեալ
ինձ ամբաստաներ: Մի՛ յարուսցես
ընդ իս զծառն անիծից. մի՛ արձակեր
'ի յիս զանդարթ ժխաղուցն. մի՛ ընծիւ-
ղեր զծաղիկ մեղացս. մի՛ բերցես ընդ
առաջ զնամակ պարտուցս. մի՛ արտա-
բերեր զերութի պտղոյն: Մի՛ թուլե-
ցես 'ի ձիւղս երկրատեղծ մատանցդ՝
զգիւտս գործոյս. մի՛ մատուսցես բան
ընդդէմ ահեղ՝ զանօրէնութիս իմ մի

շատակել · մի՛ մատնեսցես ինձս կա-
մաց զաւանդս հոգւոյս՝ վարել ՚ի գե-
րութեան · մի՛ տատէն զիս փոտաւո-
րեր՝ զի անտանոր դատապարտեսցես ·
մի՛ նուաղութե՛ այսր անցաւորի՝ զյա-
ւիտենական բարիսն տուժեր · մի՛ ՚ի
սակաւուլ այսմ ժամանակի՝ զանվախ-
ճանելի զխառամն չաշխեր · մի՛ ընդ հով-
տիս վշտաց հեծութե՝ զանախտութեան
զկեանդ գրաւեր · մի՛ ընդ սուտ երկ
այսր մթութե՝ զանձառելիդ լուս փո-
խանակեր · մի՛ զերասանակ մտացս լքցես՝
ըստ արտաքի հեռս հետևել · մի՛ զկա-
մուրջ կենցաղոյս գրեսցես՝ ինձ հան-
գստեան բաւականութի · մի՛ զհովիւ
հանձարոյս ստոր-երականս պահեր՝ ՚ի հան
գերձեալն ինձ հրապարակել · Նաթէ
ամբարես զաւանդ համարոյ գործոյս
իմ չարիս, մեռայց կենդանւոյն · եթէ
շտեմարանես ՚ի սրտի · աստուածին կերպէլ
ան

անուոց այրեցոյց . եթէ քննեսցես զա–
նօրէնութիւն , առանց յանդիման քեզ
լինելոյ՝ խոպառ հալեցոյց . եթէ անկա
կից ինձ թողցես զմեղսն , 'ի նոյին
վառեալ մաշեցայց .

4 Շնորհեա մ՛իշտ զօրեղ ամենակա–
րող՝ փախչել չարութենէս որ յիս , զի
բարին քո եկեալ փոխանորդեսցէ .
հրամայեա՛ գրիթած , խնամակալ , գո–
վեալ , լոյս անշիջանելի , զօրութիւն ան–
սահմանելեաւ , զի նոր հաստատեսցի
գոյութիւն բնութեանս մարմնեղէն յարկի
անդամոցս . յորում հանգուցեալ ան–
լքանելի՝ բնակեսցես բազմեալ ախորժ–
տենչանօք՝ միութեամբ հոգւոյս իմ ը̄
քեզ . զապականութի մեղացս մերժեալ
խոպառ՝ յանարատութի զիս պատրաս–
տեսցես՝ ամենակեցոյց թագաւոր ան–
մահ տ̄ր յ̄ս ք̄ս , օրհնեալ յաւիտեանս .
ամէն .


Մեղն

Մ՝եղջն է շաշեր՝ փոն շնամ՝ գոլչէ լի.
որ շմարդն անէ՝ եւր ուրաշխն՝ ատե լի։

Ի՝ եր՛ր ասրեա՝ շԹշըս փո՝ խսաաա ձոն.
շե Թ՛ անշէը՝ Հրոյն լեցես՝ պարտա ջոն։

Որ անԹնեց՝ բարօրենան՝ լինե ցես.
պըսան փասսաց՝ ՚ի ՝Բ՟է՝ ըՆջաւ ցես։

Խոջ եԹէ ո՛չ՝ տեցես տսս տեշ՝ փոց Թ շոց.
շրջեալ լինես՝ յանխտենին՝ բարսա Թեանց։

Նսա եԹէ շըշ՝ըասցես ՚ի փոց՝ մոլսա Թեանց.
ո՛չ Հեասնոս՝ ՚ի ՟է Հոգսոյն՝ շնոր Հոց։

Օ՝ն բարե գործն՝է լուսասար՝ ճառա գայԹ.
Եւչ մոլսաԹեն՝ Թշուառերաց՝ որս գայԹ։

Ի՝ ոյս տացէ տեր՝ տջացդ փոց՝շե տես ցես.
և ո՛չ եւրեփ՛՚ի փոան մահսա՝ Նըն՛ջես ցես։



Լցցուք մեք ՚ի բարութ՟է տան քո, ո՛ր է տաճար քո՝ սքանչելի արդարութ՟բ։

Ի խորոց սրտից խօսք ընդ տիրուհւոյն

Բան. Է։

1 Ո՛վ որ 'ի մէջ պաղատանաց յուսա-
հատութեանց եւ անհնարին սրտա-
բեկութեանց, պակուցանողական սաստ-
կութեանց ամենայն բարկութեանց, տագ-
նապեալ ոգւով թախծութեան խոցա,
աղաղակեմ զքեզ սուրբ ամենայն Տիրեղ
տակ 'ի մարդկանէ․ մարմնաւորեալ քե-
րովբէ․ երկնաւոր արքայուհի․ ան-
խառն իբրեւ զօդ․ մաքուր ոսկի լոյս․
անշաղախ լուսնանմանութեան պատկերի
արուսեկին բարձրութեան․ գերազանց
քան զմնակութիւն անկոխակելին սրբու-
թեանց

թեանց. երանաւոր խոստմանն տեղի. եդեմ չնչական. ծառ կենացն անմահից բոցեղէն սրովն պարունակեալ, 'ի բարձրեալն հօրէ զօրացեալ և հովանացեալ, հանգստեամբ հոգւոյն հանգերձեալ և մաքրագործեալ, բնակութեամբ որդւոյն յարդարեալ և տաղաւարեալ. Միածինն հօր՝ և քեզ անդրանկին. որդի քո ծննդեամբ՝ և տէր արարչութեամբ: Ընդ անաղտ մաքրութեանդ՝ և անբիծ բարի. ընդ անարատ սրբութեանդ՝ և խնամակալ բարեխօս. ընկա՛լ զմաղթանս այսր աղերսանաց՝ քում դաւանողիս, և մատո՛ ընծայեա՛ ընդ ամին խառնեալ զբանն իմ նախնի մեծիդ ներբողի՛ 'ի քոյդ պաղատանս Հիւսեա՛ միացո՛ զմեղուցելոյս դառն հեծութի՛ ընդ քումդ երջանիկ և խնկուորեալ հայցուածոց՝ տո՛ւնկդ կենաց պտղոյն օրհնութեան. զի 'ի քէն



միշտ

միշտ օգնեալ և բարեգործեալ, և 'ի մաքրական քո ծնելութիդ ապաւինեալ և լուսաւորեալ, կեցցէ քն որդւոյ քոյ և տն։

2 ( ) Ժամանակեամ թևոցդ աղօթիւք՝ խնատոռլանեալ մայրդ կենդանեաց, և եղիցին իմ յերկրէս հալոց, առանց ըլկանաց հետևել 'ի կեանս օթևանացդ պատրաստութեան, զի թէթևացի կառառածն իմ ինձ՝ ծանրացելոյս անօրէնութեամբ։ Ւրացցես տօն ինձ բերկրութեն՝ զօրն իմ տագնապի՝ ոչ ջացուցիչ երկանցն ասյի․ բարեխօսեամ խընդրեամ աղաչեամ, զի ըստ անձառելի մաքրութեդ և ահա զբանիդ հաւատամ զընդունելութիւն։ Ւրատօսք օգնեա վտանգեցելոյս՝ գանձեալդ 'ի կանայս․ ծանր խոնարհեցո առ իմ հաշտութի՝ ծընօղդ տն․ ընդ իմում թշուառիս հոգւ՝ խնդրանս բարձրելոյն․ ձեռան տուր

ան

անկելոյս՝ տաճար երկնային. փառաւո_
րեալ զորդին քո 'ի քեզ՝ ա̃ծօրէն ինձ
հրաշագործել քաւութի̃ և ողորմութի̃՝
մաղթելն ա̃յ և մայր. բարձրացի՛ պա_
տիւ քո ինև, և ցուցցի՛ փրկութիւն
իմ քև։

3 Ո՜ Թէ զիս գտցես՝ տիրամայր. Թէ
ինձ ողորմեսցիս՝ սրբուհի. Թէ զկո_
րուսեալս շահեսցիս՝ անարատ. Թէ ըզ
հարթուցեալս յանձնանձեսցես՝ երջա_
նիկ. Թէ զամաչեցեալս յառաջ մատուս
ցես՝ բարեշնորհ. Թէ յուսահատեալս
ինձ միջնորդեսցես՝ միշտ ս̃ր կոյս. Թէ
զմերժեալս ընտանեցուսցես՝ մեծա_
րեալդ ա̃յ. Թէ յիս ցուցցես զգթածու_
թիւն՝ ըստ ծիրդ անհիծից. Թէ զծը_
փեալս հաստատեսցես՝ հանգիստ. Թէ
'ի խռովութեանց յուզմանց փոխեսցես
զիս՝ խաղաղարար. Թէ վրիպեցեալս ինձ
հնարաւորեսցես՝ գովեալ. Թէ վասն



իմ

իմ մնացես 'ի հանդէս՝ մինչեւ նահան-
ջից . Թէ զդառնութիւնս իմ անուշես-
ցես՝ քաղցրութի . Թէ զբաժանմանն
իմ խարոց քակտեսցես՝ հաշտութիւն.
Թէ զանմաքրութիւնս իմ բարձցես՝ եղծ-
մամբ ընդդիմանիչ . Թէ զմատնեալս մա-
հու փրկեսցես՝ կենդանի լոյս . Թէ
զալեացս ձայն հատցես՝ բերկրութի.
Թէ զխորտակեալս կազդուրեսցես՝ դեղ
կենաց . Թէ 'ի կործանեալս յիս ակնար
կեսցես՝ հնդելից . Թէ ողորմութբ ինձ
պատահեսցես՝ կրտակ նուիրեալ , որհ
նեալդ միայն 'ի շրթունս անարիծս լեզ-
ուաց երջանկաց , ահա կաթիլ մի կա-
թին՝ քումդ կուսութե՝ յանձն իմ անձ-
ընեալ՝ կենաց ինձ զօրէ , մայրդ բարձ-
րելոյ տն յի արարչին երկնի և բնա-
ւին երկրի։ Ո՛ որ անճառապէս ծնար
բովանդակ մարմնոյն և համայն ածու-
թեամբն , որ փառաւորեալն է ընդ հօր
և

և հոգւոյն սրբոյ էութեամբ , և անքննութ՟բ մերոյին բնութ՟բս միացելով , ա՟մ՝ և յամենայնում , մի յերրորդութ՟էն . նմա փառք յաւիտենից յաւիտեանս . ամէն :

---

## Ի խորոց սրտից խօսք ընդ ա՟յ .

Բա՟ն . յա :

1 Ընդ ա՟ծ ածնեին մաղթանաց՝ ահա և զվերինացն անմահ հրեշտակացն լուսակերպից զաղերս հայցուածոց , որ վ՟ն իմ գոչեն առանց լռելոյ հանապազորդեան արդահատութ՟բ մաքուր բերանոց՝ ընկալ բարեգութ : Որք են բարիք բարեգործեալք ՚ի բարերարէդ՝ անկիրթք չարեաց , հաստեալք յամենիշխան հրամանաց էիդ . զօրութիւնք հզօրք՝ ակնարկուն բարձրելոյդ . տէ՟ք , մաքուրք , անարատք , օրհնեալք , փայլականք , յաւէթօղք և անպարտելիք . և



լուս

ըստ ընթացից տեսութեան մտաց՝ ա-
րագունք։

2 Որք և պտղակորոյս տնկոյ թզենւոյն եռամեանն դատարկութբ՟, որ զընտա յաւիտեանս պարտականք ժամանակին, զանցեալն ընդ ներկայիս և ընդ ապանւոյն՝ յամայր յամլութեամբն յերկարաձգելոյ՝ յայգի աշխարհիս արմատացելոյ, այն սաղարթիւն պաճուճելոյ՝ զրկեալ ՚ի պտղոց, որ է Ճշգրիտ պատկեր թշուառ մարդկուե՟ս, սոքա բարեխօսք՝ հանդերձիչք՝ այլև խնամակալք. որ դեգերին հանապազ առ մեզ՝ ընդ մերում կրիցս կարեկցելով, բարեմասնութե՟ն մեր սպասեն. և յաւիտենականն կենդանութբ՟ փրկուե՟ն մեր աղօթեն՝ զայս բան ասելով, ըզգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։ Քանզի արդարև մեր են այս աղաչանք ՚ի բարերարէդ ո՟յ վ՟ մեր կար-



գեալ

գեալ առ նմ․ զի նոքա բանիւ են ըս_
տեղծեալ, և մեք ձեռօք ներգործել։
Որք և գոլոց են ընդ միածնիդ՝ վե_
կայք տոսկալի դատաստանին հատուց_
ման, ճշմարտաբան դատախազք յան_
ցաւորութե երկրայնոցս, յահաւորին
ատենի՝ յայտնիչք խրատամէջք զմտա_
կարարութին՝ որ առ մեզ․ որ և անձա
նօր կարեկցէն աղչեալ հառաչմամբ
զչտանուելրն նուագ ձայնի, ողորմեա՛
դու ստեղծեր մի՛ կորուսաներ։
3 Որդ՝ ընդ գոհաբանութե ձայնիցն
խնդրուածոց՝ անմահականացն վե
հից՝ և ՚ի մեր հեծութիս հաստատեցիս՝
բնաւից աղաչիչ, որ յաղթես գթութեդ
քո վերնոցն և ստորնայնոցս․ քանզի
քո է բարեբարելը՝ առ մեզ և առ նո_
սին․ Որդ՝ վսն բարեգործութե ա_
նախատականացն, հրաշատեսիլ հրաշէր_
պիցն, անշաղախ մաքրոցն, անմեղկէյն,



բո

բոցանիւթիցն, հոգեղինացն, և անմա֊
նելեացն · ամենաձեցուն առաւելութբ
՚ի բարձրն ընտրականութե գերափայլ
յաճախ գիտութբ՝ անցուրտ ջերմութբ
ջեռուցանօղք՝ ինքնաբուն տապովն ած֊
սիրութե լոյս ինքեանց զմերս սառ֊
նասեր սրտից անբորբոք չիջուցին, այ֊
րել անաղօտ ՚ի մեծափառահուրդ սրբում
սեղանի՝ որ ՚ի խորանի, առանց նիր֊
հելոյ և դանդաղանաց սպասել հրամա֊
նաց երանականաց կեցուցիչ կամաց ա֊
մենասուրբ ծնողիդ · քրովբէօրէն առա֊
քինութբ յամ միացեալք անբաժա֊
նելի · Որք երկնաւոր պետութիք են
մեծք, և զինուորութիք անբիծք ահա֊
ւորք, երկնաւորին այ՝ աղաստաղնեայ
պաշտօնեայք, ՚ի յամպոյդ լուսոյ՝ ցոլք
նշուլից ·

4 Որովք և ինձ մեղաւորիս հոգեղինի
մարդասիրեսցես ողորմել ցի՛սուս, ու֊

ղաչանօք խմոյն հրեշտակի , դարձուցա֊
նելով զիս՝ տէր , 'ի բարիդ քո հետս
լուսոյ • զի զաւանդ հոգւոյս իմ պահ
պանութեան , զոր հաւատացեր նմին
տեսչութեան , զընկալեալն 'ի քէն 'ի
կենցաղ աստեացս՝ ուրախութբ սըր֊
տիւ յիս բերկրեալ , անմեղադրելի առ
'ի քէն օրհնեալ՝ խնդալից դիմաց զը֊
ւարճութբ՝ քեզ արքայ բարձրութե
փառաց անհասից՝ 'ի խրախճանս կեն֊
դանախումբս բերկրեցելոցն պարուց
մատուցեալ ընծայեցուացէ՝ զմեղեալ
ողորմած : Նաև քեզ անքննելին ընդ հօր
անհասին՝ թռակցութբ հոգւոյդ ան֊
ճառին վայելէ փառք պատիւ և երկըր
պագութիւն , յաւիտեանս յաւիտե֊
նից • ամէն :

## Աղօթք երեկոյեան զկնի ամ՛ խ՛ոստովանածոյ՛ըստ ժամոց ակերոսնականց աղօթից։

Ա՛մենատէր Հայր մեր և ստեղծօղ, փրկի՛չ մեր Յս Քս, և մխիթարի՛չ մեր սբ Հոգի. որ ես ՚ի յերկինս ՚ի մէջ հրեշտակաց՝ լուսաւորելով զնոսա առ՚ի ճանաչել զքեզ. քանզի դու ես լոյս յաւիտենական, որ բորբոքես զնոսա ՚ի սէր քո. դու ես սէր՝ որ բնակիս ՚ի նս. դու ես ծայրագոյն և յաւիտենական բարի, որ առանց քեզ ոչ գոյ բարի. զի դու ես աղբիւր բարութեան. Սուրբ եղիցի անուն քո՝ ո՛վ Տէր մեր և Հայր երկնաւոր. պայծառացի՛ և ՚ի մեզ յայտնութիւն քո. զի ճանաչեսցուք զվայելչութիւն բարերարութեան քո. զբարձրութիւն խոստամանց քոց. ՚ի վեր քան զմիտս զգերագոյն փառս քո. և զանքննելին խորութիւն դատաստանաց քոց.

Եկեսցէ՛ արքայութիւն քո․ զի թագա-
ւորեսցես դու մեզ միայնակ ՚ի ձեռն
շնորհաց քոց․ և տարցես զմեզ յարքա-
յութիւն քո, որ է տեսութիւն քո յայտ-
նապէս․ և ուրախացուցես զմեզ ՚ի
սեղան երկնաւոր բարեաց քոց։

Եղիցի՛ն կամք քո որպէս յերկինս և յերկ-
րի․ զի սիրեսցուք զքեզ ՚ի բոլոր սըր-
տէ․ զքեզն խորհեսցուք ՚ի բոլոր անձնէ․
և քեզ միշտ ցանկասցուք ՚ի բոլոր մը-
տաց․ և զամենայն միտս և զխորհուրդս
մեր ՚ի քեզ ուղղեսցուք․ և զպատիւ
քո՝ յամենայնում խնդրեսցուք․ և զա-
մենայն գործս և հոգս մեր՝ զմարմին
և զհոգի մեր ՚ի ծառայութիւն քո լծես-
ցուք և զընկերս մեր իբրև զմեզ սի-
րեսցուք վասն սիրոյ քո․ և ՚ի վերայ
բարեացն այլոց՝ իբրև ՚ի վերայ մեր
բարեացն խնդասցուք․ և չարեաց և
վշտաց նոցա ցաւակից լիցուք։



Զհաց

Օ՛ հաց մեր հանապազորդ տուր մեզ
այսօր · զսիրելի որդին քո հայր երկնա-
ւոր՝ զտէր մեր յիսուս քրիստոս տուր մեզ ՚ի կե-
րակուր և յըմպելի · և զշնորհս հոգւոյդ
սրբոյ մեզ պատսպարակ և ձեռնտու
պարգևեա՛ ։

Եւ թող մեզ զպարտիս մեր · ՚ի ձեռն
ողորմութեան քո հայր երկնաւոր , և
անճառելի գորութեամբ սիրելի որ-
դւոյ քո տեառն մերոյ յի քի , և ա-
մենասուրբ աղբերն բարութեան հո-
գւոյդ սրբոյ , և սրբուհւոյ աստուածածնին
և ամենայն ընտրելոց և սրբոց բարեխօ-
սութեամբ թող մեզ զմեղս մեր · զի մեք
ոչ մարդ մեղուք , և պա ոչ կարող ած-
ողորմեա՛ ։

Ոչ և մեք թողումք մերոց պարտա-
պանաց · բայց ած ՚ի սրտից մերոց զան-
գթութի և զնախանձ · զի թերևս լիա-
պէս և մեք թողութի շնորհեսցուք

 յամ

յանցաւորացն մերոց, և զթշուառս մեր՝
վասն քոյ սիրեսցուք, և ոչ ումեք չարի
զչար փոխարէն հատուսցուք։
Նաև մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ 'ի յայտնի և յաներևոյթ փորձութեանց ազատեա՛. և փրկեա՛ զմեզ 'ի չարէ, յանցելոցն, և յայժմեան, և որ գալոցն է. և զամենայն գործս մեր հոգևորս և մարմնաւորս՝ 'ի գիշերի և 'ի տունջեան 'ի բարիս յաջողեա՛. Զի քո՛ է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. Ամէն։

---

## Այլ աղօթք։

Փառք քեզ Աստուած արթուն բնութիւն, որ ոչ երբէք ննջես պահապանդ իսրայէլի։ Որ յանմահ պաշտօնէից քոց իմացական ձայնիւ անդադար օրհնաբանիս։ Որ և զիս զհողեղէն ծառայս քո յանձնեցեր 'ի պահպանութիւն նոցա. և կարգեցեր քնածու բնութեամբ զար-



թուն

թուն ծառայիդ ՚ի խնամակալութիւն։ Ո՛վ որս և շնորհեցեր թմրեցեալ ծառայիս քո ձայնառու և արթնացուցիչ երրև զգիշերային խօսնակս. և՚ի հողեղէնացս հանձեցար անուշ զօրհնութի։ Գոչանամ զքեզն՝ երեքերանեան և անմատչելի լուսոյդ Երրորդութե, որ զիս ապաւինեցեր ՚ի խաւարադնաց դիւաց՝ ՚ի թշնամեաց փրկութես իմոյ. և ընդ արթուն բնութի հրեշտակացդ՝ օրհնաբանակից քեզ արարեր։ Ո՛վ ի՞նչ տաց քեզ տրիտուր և փոխանակ բարերարութեդ՝ տէր իմ, կեանք իմ, լոյս իմ և աղբիւր ամենայն բարեաց. եթէ ո՛չ զկեանս իմ, զոր ետուր և շնորհեցեր ինձ ՚ի գիշերիս յայսմիկ, քեզ նուիրեցից՝ ՚ի մշտնջենաւոր և յանդադար փառաբանութի. Թէպէտ չէմ բաւական ըստ արժանեաց փառաց քոց օրհնել զքեզ։ Այլ այն թէ՝ դու-

որ

որպէս որ հրեշտակաց քոց տաս նոր 'ի
նորոյ զկերպ՝ զանազանապէս զքեզ օրհ
նելոյ և երեքսրբենիւն փառաբանելոյ·
տուր և ինձ արթնութիւն մտաց, զի նո-
րապէս զնորոգեալ կենաց իմոց օրհնե-
ցից · և զառաւօտս խաղաղութեան մինչև
ցերեկոյ՝ առանց փորձանաց հաճեսցիս
անցուցանել · որ խնդրեմ զարքայութիւն
քո՝ 'ի սկզբան ամենիցս խնդրանաց ։
Որպէս զի՛ ամենայն ազգ և ազինք ծանի-
ցեն զքեզ տիրող երկնի և երկրի, և
հրամայող ծովու և ցամաքի ։
Դու և զայլ բարիս բնութեան շնորհաց
և փառաց քոց՝ ողորմութեամբ պարգևես-
ցես · և արդար վաստակոց քոց՝ յաւուրս
յայսմիկ զիս արժանի՛ արասցես ։ Սովեալք
և կարիք իմ և իմոյս ընտանեացն, և աղ-
քատք 'ի փշրանաց սեղանոյ մեծատանդ
յագեսցին · և զքեզ ինև օրհնեսցեն
միշտ · ամէն ։

Նախընծայն Հայրապետանոյ աղօթք առ որդին Բածին Հօր առ խնդրուածոց.

Ո՛ Նախկինըդ ամենայնի որ վասն մեր խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ, և առեր մարմին յանարատ կուսէն մարդկանց. զի զմեզ մեռեալս կենդանացուսցես, և զծառայացեալս 'ի քեզ դարձուսցես, և զմոլորեալս գտանիցես. Ես արդ՝ տառապեալ ծառայս քո՝ անկանիմ առաջի սուրբ սեղանոյ քոյ, յորում կենաց և փրկութեան մերում բաշխի կերակուր. հայցեմ արտասուաթոր պաղատանօք՝ մի՛ թողուր զիս 'ի պատուիրանաց քոց հեռանալ. այլ յորդորեա՛ յառաջելուլ յամենայն գործս բարիս առանց մեղաց. Մ՛ի՛ մատներ զիս տէր 'ի ցանկութիւն մեղաց, և 'ի հեշտութիւն երկրաւոր կենաց, 'ի քուն աչաց, և յագահութիւն մամոնութեց. այլ պարգեւեա՛ երկիւղիւ և ամրացո՛ յամենայն չար դիւա՛ց և

յաշխարհական զբօսանաց։ Մի՛ յապա-
ղեր տէր իմ՝ տալ ինձ զփրկութիւն հո-
գւոյ և զջերմութիւն սրտի, զպարկեշ-
տութիւն մարմնոյ և զզղջումն արտաս-
ւաց, և անդադար աղօթելով զխո-
նարհութիւն և զհեզութիւն։ Յաւելեա՛ տէր
հակառակորդին իմոյ, և զօրացո՛ զիս ը-
դիմակաց լինել պատերազմողին 'ի տը-
ւէ և 'ի գիշերի։ Տո՛ւր ինձ տէր ըղ-
բան հաւատոյ, պահօք և աղօթիւք
սրբել զախտս ցանկական, և տանել
զշնորհս բժշկական. տո՛ւր ինձ տէր տե-
ղի ապաշխարութեան և հանդիստ աշխա-
տութեան, հոգի խաղաղութեան և ճանա-
պարհ արդարութեան, զէն ամրութեան և
պահապան փրկութեան, հաստատութիւն և
երկիւղ պնդութեան։ Անցո՛ զիս տէր 'ի
հասանաց մեղաց՝ խորաթափիչ ծովահեղձ
և ցանկական կենցաղինս, 'ի լուսաւորուի-
մոյց, 'ի հանդիպումն շնորհաց, և 'ի շաւիղ



ար

արդարութեան ճանապարհի · շնորհեա ինձ
լոյս աչաց և հոսումն արտասուաց, սուգ
մեղաց և սարսափումն ահերաց, դո-
ղումն տանջանաց և ճանապարհ կենաց։
Միացո՛ զիս ընդ 'ի պահպանութեան պատ-
ուիրանաց քոց · 'ի ժուժկալել ողորմեայ-
նի խնամ, 'ի մարտս պատերազմի, և 'ի
յաղթութեան սատանայի, մեռանել 'ի մարմ-
նի և պայծառանալ հոգւով։ Յորժամ
զերկինս գալարես և զլուսաւորս նսե-
մացուցանես, փող հարկանես և զմե-
ռեալսն զարթուցանես, զերկիր դողա-
ցուցանես և զտիեզերս ամ ժողովես,
զդատողական աթոռսն դնես և զերկո-
տասան առաքեալսն նստուցանես, անա-
չառ դատաստանաւ դատես և զարդա-
րութիւն պահանջես, զկամարարսն պատ-
ուես և զապստամբսն պատուհասես,
զարդարսն փառաւորես և ընդ աջմէ
քումմէ նստուցանես, զվկայսն պսակես
և

և զխնամատուն կուսանան զարդարես,
յիմար կուսանաց զդուռն փակես և՛ի
ձայնէ փեսայիդ հալածես, զօդ խոն 'ի
քեզ ընտրես և զայծ խոն 'ի քէն 'ի բաց
մերժես և՛ի հուր գեհենին տանջես։
Յանժամ բարերար և մարդասէր փըր–
կիչ, գթա՛ 'ի հոգիս ննջեցելոցն՝ որք ը̃
ամ̃ տիեզերս հաւատով 'ի քեզ ննջե–
ցին՝ զորս գնեցեր արեամբ քով սբ̃վ,
և ջնջեա՛ զձեռագիր յանցանաց ամ̃ մկըր
տելոց 'ի քեզ. և թո՛ղ զամ̃ պարտիս յան
ցանաց նց̃ զկամայս և զակամայս, և ընդ
աջմէ քումմէ դասեա՛ և զերանական
ձայն քո լսել տուր, եթէ եկա՛յք օրհ–
նեալք հօր իմոյ։ Արդ՝ ընկա՛լ զաղօթս
և զխնդրուածս իմ, որ պաղատիմ և
հայցեմ 'ի քէն՝ վս̃ իմ և վս̃ ամցուն,
մի՛ դարձուցաներ զերեսս քո 'ի խընդ–
րողէս, խոնարհեցո՛ զունկն քո յաղա–
չանս իմ, լո՛ւր ինձ մարդասէր, ցո՛յց



յիս

յիս զսովորական քո մարդասիրութիւդ ,
և խնայեա՛ ՚ի մեղաւորս . զի դու ես ած̃
ապաշխարողաց և հանգիստ աշխատե-
լոց . և քեզ ընդ հօր և սր̃ հոգւոյդ
վայելէ փառք իշխանութի՛ և պատիւ,
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե-
նից . ամէն .

Ճ՛աշակեցէք և տեսէք, զի քաղցր է տր̃.
երանեալ է այր՝ որ յուսայ ՚ի նա.

ՎԵՐՋ.



Յանկ

# Ցոյց գրքոյս:

Յառաջաբանութի՛ւն, երեսահամար 3:
Յորդորակ ապաշխարութեան բաժանեալ
ի 40 բանս զօրաւորս. 7:
Աղօթք համառօտք յաւուր կիւրա-
կէի աւուր, 73:
երկու շաբաթի աւուր, 83:
երեք շաբաթի աւուր, 95:
չորեք շաբաթի աւուր, 105:
հինգ շաբաթի աւուր, 115:
ուրբաթի աւուր, 123:
շաբաթի աւուր, 131:
Պարզեալ աղօթք զօրաւորք յաղօթա-
մատոյց գրոց սրբոյն գրիգորի Նարե-
կացւոյ յաւուր կիւրակէի աւուր, 141:
երկու շաբաթի աւուր, 147:
երեք շաբաթի աւուր, 155:
չորեք շաբաթի աւուր, 160:
հինգ շաբաթի աւուր, 168:
ուրբաթի աւուր, 177:

շաբաթի աւուր, 184։
Նարեկ նախ քան զհաղորդութիւնն առնլի, 187։
դարձեալ նախ քան զհաղորդութիւն, 196։
Նարեկ յետ հաղորդութեան առնլի, 199։
դարձեալ յետ հաղորդութեան, 206։
Նարեկ առ սուրբ Աստուածածնի բարեխօսութիւնն, 215։
Նարեկ առ սրբոց հրեշտակաց բարեխօսութիւնն, 220։
Աղօթք երեկոյեան ըստ մնաց սրբու- Նաւկեան աղօթից, 225։
Աղօթք առաւօտեան, 228։
Աղօթք առ որդին միածին, 231։

## Յիշատակարան Տօնի.

Շնորհիւ ամենասուրբ երրորդութեան և միոյ աստուածութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ և բարեխօսութեամբ ամենօրհնեալ սուրբ աստուածածնի միշտ կուսին, տպեցաւ աղօթից գանձարանս՝ բժշկարան հոգևոր կոչեցեալ, յօգուտ ապաշխարողաց ՚ի բժշկութիւն հոգեկան ախտից և ՚ի ստացումն աստուածային շնորհաց ՚ի փառս ամենամեծին Աստուծոյ.

Արդեամբ սուրբ աստուածածին մայր Եկեղեցւոյս մահտեսի տէր պաղտասար հոգէւոր քահանայի, ՚ի յիշատակ հոգւոյ կենդանեաց և ննջեցելոց իւրոց.

Աղաչեմ ով աստուածասէր ջերմեռանդ սիրելիք մեր ՚ի տէր, մինչ ստանայք զսա և ընթերցմամբ զքաղցրութիւն սորին առնուք զճաշակ և օգտիք ընդ սուրբ հոգւոյ, նախապէս յաջողողին Աստուծոյ բերանալիր փառս մատուցջիք.



Աւ

Նաեւ զնմին յիշեսջի՛ք ՚ի մաքուր աղօթս
ձեր զվերակացեալ մեծի տր պաղատաւոր
ծերունի քհնյն, և զհարազատ զորդի
նորին զմեծի տր արուեստագէտն և զդու-
տերսն խաչատուրն և ոսկանն, և զեր
կուսին փեսայսն և զթոռունսն, և զամ
կենդանիսն: Յիշեսջի՛ք և զննջեցեալս
նորին, զհայրն հիւմիւզն, և զմայրն
նուրին և զաներն ձնծեցի տր պօղոսն,
զմարգարիտ երիցակինն զորանչն, և զա
ցին պուստրն (որ և կենակից վերոյի-
չեալ մեծի տր պաղատաւոր քհնյին) զմահ
ուսի թեգուրիկ երիցակինն տալի-
թայն, և զհարսն նր երիցակինն մեծի
մելքին, և զայլ ամ ննջեցեալսն ՚ի քս:
Յիշեսջի՛ք ՚ի վերջոյ և զաշխատաւոր
գործարանիս զմեզն Աստուածատրգի յեռ-
նեալ ծոյլ զանպիտան վարդապետս անենեցի,
հոգևոր և մարմնաւոր ծնողօք խմովք
կենդանեօք և ննջեցելովք. և զամաւուցի
խո

խումարգասեան որդւ մարտիրոսն , որ
շարօղ և ցրուօղն է կապարեայց , ղպա–
լաթցի բրուտ մարուքէեան որդւ մա
նուէլն և զհաւաւցի տէր ստեփանեան
որդւ յարութին , զի և դուք յիշէլք
լինիջիք յայ փրկչէն մերմէ յիսէ քսէ ·
ամէն ·